

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՌԱՖԻԿ ԴԱԶԱՐՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍ

Մատենագիտական ժողովածու

- ❖ *Տարեգրություն*
- ❖ *Կոմիտասն է ասում*
- ❖ *Գնահատանքի խոսք*
- ❖ *Հուշեր*
- ❖ *Կոմիտասը բանաստեղծություններում*
- ❖ *Մատենագիտություն*

ԵՐԵՎԱՆ 2009

ՀՏԴ 01:78(479.25)
ԳՄԴ 91.9+85.313(2Հ)
Ղ 158

Խմբագիր՝ Դ.Մ.ՍԱՐԳՍՅԱՆ

Ղ 158 Ղազարյան Ռաֆիկ
Կոմիտաս: Մատենագիտական ժողովածու.- Եր.: Գիրք, 2009.-
224 էջ:

Կոմիտասի ծննդյան 140-ամյակին նվիրված սույն գիրքը մի յուրատեսակ հանրագիտարան է, որ կարող է օգտակար լինել Կոմիտասի կյանքով և գործունեությամբ հետաքրքրվողներին:

Ժողովածուի տարբեր գլուխները և առաջարկվող գրականությունը ըստ ամենայնի են ներկայացնում հանճարեղ Կոմիտասին:

ԳՄԴ 91.9+85.313(2Հ)

ISBN 978-99930-65-63-0

© Ղազարյան Ռ., 2009
© Հայաստանի Ազգային գրադարան, 2009

Նորից երգում - մորմոքում է
աստվածային Կոմիտասը,
Կախարդում է ու մոգում է
աստվածային Կոմիտասը...
Պ.ՍԵՎԱԿ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հանճարեղ Արամ Խաչատրյանը հանճարեղ իր նախորդի մասին գրել է. «Կոմիտասը մեր ազգային երաժշտական դպրոցի հիմքն է: ...Կոմիտասի երաժշտությունը մի այնպիսի անաղարտություն է, մի այնպիսի վսեմաշուք լեզու, որ դժվար է այս կամ այն կերպ նրան չառնչվելը, նրա ազդեցությունը չկրելը: ...Ամեն մի հայ կոմպոզիտոր պետք է իմանա Կոմիտասի ստեղծագործությունները, պետք է խորհի դրանց մասին»:

Ստեղծագործական կյանքի երկար ճանապարհի անցած, համաշխարհային հռչակ ունեցող Ա.Խաչատրյանը իր հայրենակից կոմպոզիտորներին խորհմաստ դաս էր տալիս:

Մեր ժամանակներում այս հորդորն ավելի խորը և մեծ հնչեղություն ունի:

140-ամյա Կոմիտասը, որի շնորհիվ մեր ազգային երաժշտությունը ընկալելի և մատչելի դարձավ միջազգային հանրությանը, այսօր էլ այն ակունքն է, որից սկիզբ է առնում և տարածվում հայ երաժշտությունը:

Կոմիտասի ստեղծագործությունները, ինչպես մեծանուն Դմիտրի Շոստակովիչն է ասում, «դարձան համաշխարհային երաժշտական մշակույթի հպարտությունը»:

Կոմիտասը իր գործունեությունը ծավալեց մի ժամանակա-

շրջանում, երբ Հայաստանը բաժանված էր արևելյան և արևմտյան հատվածների: Հայտնագործելով հայ երգը, նա մի յուրահատուկ կամուրջ դարձավ մեր ժողովրդի երկու հատվածների համար:

Նրա անունը կենդանության օրոք իսկ լեգենդ էր, գործը՝ խորհրդանիշ:

Ներկայումս, երբ ունենք անկախ պետականություն, Կոմիտասի գործունեության արժևորումն ավելի է մեծանում, քանզի, ինչպես Պարույր Սևակը կասեր. «Մայր Հայրենիքի շուրջ համախմբվելու, արտասահմաններում հայ համազգային ոգին կենդանի պահելու խնդրում, Կոմիտասի գործը իր հետևանքներով ավելին է անում...», քան այն բոլոր ձեռնարկումներն, որոնք առկա են:

Սակայն այս ամենի հետ միասին, լինում են պահեր, փոքրիկ ժամանակահատվածներ, երբ ինչ-ինչ ազդեցությունների տակ կարծես «մոռացվում» են Կոմիտասը և նրա ուղենշած սկզբունքները: Բարեբախտաբար, դա կարճ է տևում, քանի որ առաջ գնալու համար հարկավոր է ետ նայել: Իսկ ետ նայելու պարագայում ամբողջ վեհությամբ և ուժով կանգնած է Կոմիտասը, ով ուղղորդում է առաջ և հիշեցնում՝ առանց ինքնուրույն երաժշտության համաշխարհային դռները գոցված կմնան:

Յուրաքանչյուր սերնդի համար Կոմիտասը իր յուրահատուկ խորհուրդն ունի: Նրա ստեղծագործական ժառանգությունն անսահմանափակ է: Նրան դիմում են երաժշտական տարբեր սերունդների գրեթե բոլոր ներկայացուցիչները, քանի որ նա սկիզբ է երաժշտական մշակույթի սկիզբ, որից սկսվում է բոլոր զարգացումները:

Կոմիտասի գործի նկատմամբ միշտ էլ հետաքրքրությունը մեծ է եղել: Նրա մասին հիացումներով են արտահայտվել իրեն ժամանակակից և հետագա շրջանի տարբեր ազգերի բազմաթիվ ներկայացուցիչներ՝ երաժիշտներից, երաժշտական գործիչներից, կոմպոզիտորներից մինչև մշակույթի, գիտության, գրականության գործիչ-

ները և տարբեր մասնագիտությունների մարդիկ: Հիրավի, երաժշտական եզակի մեծություն է Կոմիտասը:

* * *

Կոմիտասի գործունեության գնահատման կարևոր հանգրվան է եղել նրա ծննդյան 100-ամյակի նշումը՝ 1969 թվականին: Համաժողովրդական այդ տոնախմբությունն առիթ դարձավ, որպեսզի Կոմիտասի մասին գրվեն բազմաթիվ գրքեր, հոդվածներ, հուշագրություններ, գեղարվեստական գործեր մայր հայրենիքում և Սփյուռքում: Լույս տեսան նրա ներդաշնակ երգերի գիտական հրատարակությունները, աշխարհի մեծագույն կոմպոզիտորները և երաժիշտները իրենց գնահատանքի խոսքն ասացին հանճարեղ երգահանի, ազգագրագետի, երաժշտական գործչի, մանկավարժի և մարդու մասին:

1984թ.-ին Ալ. Մյանիկյանի անվան ժողովուրդների բարեկամության շքանշանակիր ՀՍՍՀ պետական գրադարանը (ներկայումս Հայաստանի Ազգային գրադարան) հրատարակել է «Կոմիտաս» մեթոդամատենագիտական նյութերի ժողովածուն, որի կազմող-հեղինակը տողերիս գրողն է: Այն լույս էր տեսել 500 օրինակ՝ գրադարանային հատկացվածությամբ:

2009-ին նշում ենք Կոմիտասի ծննդյան 140-ամյակը: Ուստի ձեռնամուխ լինելով այդ դժվարին աշխատանքին՝ նոր նյութերով հարստացրել ենք ներկա հրատարակությունը, որը նախորդից տարբերվում է նյութի ծավալով, մոտեցումներով, հրատարակչական ձևավորմամբ*, ինչպես նաև մատենագիտական ճշգրտումներով:

Ներկա հրատարակությունում Կոմիտասից մեջբերումներ կա-

* Նախկին հրատարակությունը ռոտապրինտային եղանակով էր:

տարելիս հավատարիմ ենք մնացել նրա լեզվամտածողությանը և ուղղագրությանը, մի խոսքով բնագրին:

Պարբերական մամուլում տպագրված հոդվածներից, նյութերից սույն ժողովածուում զետեղել ենք միայն 1969թ.-ից մինչև մեր օրերը տպագրվածները՝ ընտրությամբ՝ նկատի ունենալով թեմատիկայի բազմազանությունը:

Կոմիտասի գրի առած և ներդաշնակ երգերի, կազմած և խմբագրած, ինչպես նաև իր մասին լույս տեսած առանձին գրքերի մատենագիտական ցանկը ներկայացրել ենք առավել ընդգրկունով: Բացի «Կոմիտասի գրի առած և ներդաշնակ երգերի հրատարակությունները» խորագրի տակ սկզբում տրված «Երկերի ժողովածու»-ի 14 հատորներից, մնացած դեպքերում Կոմիտասի և նրա մասին եղած գրականությունը ներկայացված է ժամանակագրական կարգով: Յուրաքանչյուր տարեթվի ներսում պահպանված է հեղինակների և վերնագրերի այբբենական կարգը:

Ռ.Ղ.





* * *

Մահվան արժանի է այն ժողովուրդը, որ զուրկ է գեղարվեստե, որովհետև ժողովուրդ մը՝ որ գեղարվեստ չունի, կնշանակե թե զգալու կարողություն չունի: Եվ ի՞նչ է ժողովուրդ մը՝ որ չի զգար:

* * *

Հայ ժողովրդի զավակներ, դուք կարդացեք Մովսես Խորենացի, Եղիշե, Նարեկացի, Խաչատուր Աբովյան, Րաֆֆի, Ալիշան, Պեշկեպաշյան և տեսեք, թե ով ենք մենք:

* * *

Ինձ համար չկա ուրիշ երկինք, քան իմ ժողովրդի հարազատ հոգին:

* * *

Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացե՛ք և սովորեցե՛ք նրանից:

* * *

Սիրեցե՛ք զիրար, շատ սիրեցե՛ք, որպեսզի ապրեք:

ԿՈՍԻՏԱՍ

Հայրենի երգ մեր վսեմ,
Հազարամյա՝ մեր հանճար, -
Լոկ ժողովուրդն է հյուսել
Քո դաշնությունը պայծառ...

Ե.Չարենց

ԿՈՄԻՏԱՍ

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

1869

Սեպտեմբերի 26 - Փոքր Ասիայի Կուտինա (Քյոթահիա) քաղաքում՝ կոչկակար Գևորգ Սողոմոնյանի ընտանիքում, ծնվում է մի արու գավակ:

Սեպտեմբերի 29 - Կուտինայի ս.Թեոդորոս եկեղեցում մկրտում են նորածնին և անունը դնում Սողոմոն:

Հայրը՝ Գևորգ Սողոմոնյանը, կուտինացի էր, մայրը՝ Թագուհի Հովհաննիսյանը, բրուսացի:

«Հօրս եւ մօրս ազգատոհմն ի բնէ ձայնել է: ...Մօրս եւ հօրս տաճիկ լեզուով եւ եղանակներով յօրինած երգերը, որոնցից մի քանիսն արդէն գրել են 1893 թուին հայրենիքունս, դեռ երգում են մեծ հիացմունքով մեր քաղաքի ծերերը», - գրում է Կոմիտասը 1908 թվականին:

1870

Մարտի 15 - Վախճանվում է Սողոմոնի մայրը՝ Թագուհի Հովհաննիսյանը: Մինուճար երեխայի խնամքը և դաստիարակությունը իր վրա է վերցնում հորեմական տատը՝ Մարիամը:

1876

Սեպտեմբեր - Սկսում է սովորել Կուտինայի չորս բաժանմունք ունեցող վարժարանում:

1880

Յունվար - Ավարտում է Կուտինայի ազգային վարժարանը:

Յունվար, երկրորդ կես - Գևորգ Սողոմոնյանը փոքրիկ որդուն ուղարկում է Բրուսա (մոր ծննդավայրը) ուսումը շարունակելու:

Մայիսի 17 - Վախճանվում է Սողոմոնի հայրը՝ կոշկակար Գևորգը:

Նոյեմբեր - դեկտեմբեր - Յոր մահվան պատճառով Սողոմոնը կիսատ է թողնում Բրուսայի վարժարանը և վերադառնում Կուտինա:

Դեկտեմբեր - Որբացած Սողոմոնը դպրություն է անում իրենց թաղի ս. Թեոդորոս եկեղեցում:

1881

Սեպտեմբեր - Եպիսկոպոս ձեռնադրվելու նպատակով Էջմիածին մեկնող Կուտինայի փոխառաջնորդ Գևորգ վարդապետ Դերձակյանը պետք է Գևորգ Դ կաթողիկոսի կոնդակի համաձայն իր հետ տաներ լավ ձայն ունեցող և միջոցներից զուրկ երեխա՝ ճեմարանում սովորելու համար: Քսան աշակերտներից Էջմիածին մեկնելու բախտը վիճակվում է Սողոմոնին:

Յուկտեմբերի 1 - Սողոմոնը Գևորգ Դերձակյանի հետ ներկայանում է Գևորգ Դ կաթողիկոսին: «Բազմած է հայոց հայրապետը, - գրում է հետագայում Կոմիտասը, - պատկառելի մի ծերունի: Սկսավ ինձ հարցուփորձ անել: Ես ապուշ էի կտրել մնացել, չէի հասկանում, թե ինչ է ասում, որովհետև խոսում էր հայերեն, իսկ ես, որպես և մեր քաղաքացիք, տաճկախոս էի, թեև հայերեն գրելկարդալ գիտեի, բայց բոլոր առարկաները անցել էի տաճիկ լեզվով, ուստի և չէի հասկանում կարդացածս ու գրածս հայերենը:

Վեհը տեսավ, որ ես հայերեն չեմ իմանում, ասաց տաճկերեն լեզվով. «Դու զուր ես եկել այստեղ, որովհետև մեր ճեմարանում ամեն բան հայերեն են անցնում». ես էլ առանց քաշվելու մանկական միանտությամբ, համարձակություն եկավ վրաս և ասացի, թե «Ես էլ եկել եմ հայերեն սովորելու»: - Էհ, լավ, ծայր ունե՞ս և երգել գիտե՞ս, -(հարցնում է կաթողիկոսը): - Այո, ունեմ և գիտեմ: - Ի՞նչ երգեր գիտես: - Ինչ ասես գիտեմ, հայերեն, տաճկերեն, եկեղեցական, աշխարհական: - Շատ լավ, «Լույս զվարթը» գիտե՞ս: - Գիտեմ: «Լույս զվարթը» երգելիս նկատեցի, թե ինչպես նրա աչքից արցունքները գլորվում էին և թավալվելով երկար ճերմակ մորուսի վրայով գլորվում էին վերակուի ծալքերի մեջ: - Ասոր ճեմարան տարեք, - հրամայեց վեհը Մանկունի Վահրամ Եպիսկոպոսին՝ իր դիվանապետին»:

Յուկտեմբեր - դեկտեմբեր - Գևորգ Դ կաթողիկոսը հանձնարարում է, որ Ժամերգության ընթացքում Սողոմոն Սողոմոնյանին հայրապետական աթոռի մոտ կանգնեցնեն, որպեսզի ավելի մոտիկից լսի նրա երգած, հատկապես, «Լույս զվարթը»:

1882

Սեպտեմբեր - Էջմիածնի Գևորգյան ճեմարանում սկսվում են 1882-83 ուսումնական տարվա դասերը: Սողոմոն Սողոմոնյանը կրկին սովորում է ճեմարանի Ա դասարանում՝ հայերեն խոսելուն վարժվելու համար:

1883

Մայիսի 23 – Սողոմոնն ավարտում է ճեմարանի Ա դասարանը և փոխադրվում Բ դասարան:

1884

Յուլիտեմբեր - Գևորգյան ճեմարանում սկսվում են 1884-85 ուսումնական տարվա դասերը: Սողոմոնը նորից սովորում է Բ դասարանում, քանի որ չէր հանձնել ռուսաց լեզվի վերաքննությունը:

1885

Յունվարի 26-փետրվարի 5 - Սողոմոնը հյուրընկալվում է իր դասընկերներից մեկի տանը՝ Քյորփալու գյուղում: Այստեղ՝ շինականի տանն, առաջին անգամ, լսում է ժողովրդական երգ և ձայնագրում այն:

Մայիս - ճեմարանում ավարտվում է 1884-85 ուսումնական տարին: Սողոմոնը փոխադրվում է Գ դասարան:

1886

Մայիս - Սողոմոնն ավարտում է ճեմարանի Գ դասարանը և փոխադրվում Դ դասարան:

1887

Սեպտեմբեր - Գևորգյան ճեմարանում սկսվում են 1887-88 ուսումնական տարվա դասերը: Սողոմոնը սովորում է Ե դասարանում:

Յունիս-դեկտեմբեր - Սողոմոնը հայկական ձայնախազերով 2 էջի վրա ձայնագրում է Յովակիմ վարդապետ Ղամեքյան Վաղարշապատցու երգած «Օրհնութիւն հրեշտակապետացն Միքայելի և Գաբրիելի և ամենայն երկնային զորացն» վերնագրով շարականը:

1888

Սեպտեմբեր - ճեմարանում սկսվում են 1888-89 ուսումնական տարվա դասերը: Սողոմոնը կրկին սովորում է Ե դասարանում:

1889

Մայիս - Գևորգյան ճեմարանում ավարտվում են 1888-89 ուսումնական տարվա դասերը: Սողոմոն Սողոմոնյանը Ե դասարանից փոխադրվում է **Ձ** դասարան:

1890

Մայիս - Սողոմոնն ավարտում է Գևորգյան ճեմարանի **Ձ** դասարանը:
Յունիսի 9 - Սարգիս Եպիսկոպոս Գասպարյանը սարկավագ է ձեռնադրում Սողոմոն Սողոմոնյանին:
Դեկտեմբեր - Վաղարշապատում, իբրև «Արարատ» ամսագրի հավելված, տպագրվում է Գևորգյան ճեմարանի **Ա** լսարանի ուսանող Սողոմոն Սողոմոնյանի «Ազգային օրհներգ» խմբերգը՝ քառածայն խառը խմբի համար հայկական նոտագրությամբ:

1891

Ապրիլ - Իր հավաքած ու ձայնագրած ժողովրդական երգերը (թվով 37) «Ձայնագրած ազգային գյուղական երգերի, պարերի հավաքածու» ընդհանուր խորագրով Սողոմոնը ամփոփում է մի տետրի մեջ:
Սեպտեմբեր - Գևորգյան ճեմարանում սկսվում են 1891-92 ուսումնական տարվա դասերը: Սողոմոնը սովորում է Բ լսարանում:
Յոկտեմբերի 13 - Էջմիածնում Սողոմոնը Գևորգյան ճեմարանի ծառա Մուշեղից (մշեցի) ձայնագրում է «Մշեցոց բինգյուրը» վերնագրով երգը:

1892

Մայիսի սկիզբ - Սողոմոն Սողոմոնյանը դիմում է ճեմարանի վարչությանը՝ ծննդավայր գնալու թույլատվություն ստանալու և այդ

առիթով առաջիկա քննություններից ազատվելու համար:

Մայիսի 7 - Գևորգյան ճեմարանի քննաբանություն Ս. գրոց և եկեղեցական պատմության ուսուցիչ Սարգիս Տեր-Գաբրիելյանը, ֆրանսերենի ուսուցիչ Աստվածատուր Պիտանյանը, հոգեբանության ուսուցիչ Սեդրակ Մանդինյանը, ռուսաց գրականության ուսուցիչ Հովհաննես Սաղաթելյանը, ընդհանուր գրականության ուսուցիչ Լևոն Մանվելյանը գրավոր պատասխանում են տեսուչ Արիստակես Սեդրակյանին, որ իրենք համաձայն են Սողոմոնին առաջիկա քննություններից ազատելու և առանց քննության Գլխարան փոխադրելու ու ծննդավայր՝ Կուտինա, մեկնելու համար:

Մայիսի 8-15 - Սողոմոնը Էջմիածին-Թիֆլիս-Կ.Պոլիս ուղեգծով մեկնում է Կուտինա:

Մայիսի վերջ - Կուտինայում Սողոմոնն այցելում է տեղի «Ազգային վարժարանը», ուր սովորել էր 1876 թվականից մինչև 1880թ.:

Օգոստոս - Ծննդավայրում Սողոմոնը հավաքում և գրի է առնում տեղի հոգևոր 15 երգեր:

Մայիս-հոկտեմբեր - Չայնագրում է ինչպես ծնողների, այնպես էլ ուրիշների հորինած շուրջ վեց տասնյակի հասնող թուրքերեն երգեր, որոնք նրա համար կատարում են իր ազգականները և համազյուղացիները:

Հոկտեմբեր - Կ.Պոլսում Սողոմոն Սողոմոնյանը նոտագրությամբ գրի է առնում Ակնա 8-10 երգ, որը նրա համար կատարում է Հ.Կ.Ճանիկյանը՝ «Հնությունք Ակնա» գրքի հեղինակը:

Հոկտեմբերի վերջ - Կ.Պոլսում Ս.Սողոմոնյանը հյուրընկալվում է «Հայրենիք» թերթի խմբագիր Արփիար Արփիարյանի մոտ:

Նոյեմբերի 21 - «Հայրենիք» օրաթերթի 309-րդ համարում տպագրվում է Ա.Արփիարյանի «Սողոմոն սարկավագ» խորագրով հոդվածը՝ «Հրազդան» ստորագրությամբ: Ա.Արփիարյանը գրում է «Հին երգերու հետքերը գտնել, նախնիքներու բանաստեղծությունները հավաքել ոչ թե միայն խոսքերովն, այլ եղանակներովը, նորերն ալ անոնց մեջ խառնել ու տոհմային ժողովրդական երգերու հա-

վաքածո մը մեզ տալ: Ահա ինչ որ այս երիտասարդը իրեն կեն
նպատակի դրած էր»:

Դեկտեմբերի 15, Էջմիածին - Իր ազգականներից ու համադրուղացի-
ներից հավաքած ու ձայնագրած երգերը Սողոմոնը մաքրագրում
և ամփոփում է մի տետրի մեջ՝ «Արևելյան եղանակներ» ընդհա-
նուր խորագրի ներքո:

1893

Մարտի 24 – Ժամանակի ընթացքում ճեմարանի աշակերտներից լսած
ու ձայնագրած 15 երգերը՝ «Հոգևոր եղանակներ» ընդհանուր
խորագրով, ամփոփում է մեկ տետրի մեջ:

Մայիսի վերջ – Սողոմոն Սողոմոնյանն ավարտում է Էջմիածնի Գևոր-
գյան ճեմարանի լսարանական բաժնի եռամյա դասընթացը:

Հոկտեմբերի 5 – Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հրամանով ճեմարա-
նի երգեցողության ուսուցիչ Կարա-Մուրզայի փոխարեն մշա-
նակվում է Սողոմոն սարկավազ Սողոմոնյանը:

Նոյեմբերի 21 - Էջմիածնի մայր տաճարում Սողոմոն Սողոմոնյանի ղե-
կավարած քառաձայն երգչախումբն, առաջին անգամ, կատա-
րում է «Հայր մեր» շարականը:

1894

Հուլիս-օգոստոս - «Արարատ» ամսագրի 7 և 8-րդ համարներում
տպագրվում է Սողոմոն Սողոմոնյանի «Հայոց եկեղեցական
եղանակները» վերնագրով հոդվածը:

Սեպտեմբերի 11 - Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի ցանկությամբ ավագ
սարկավազ Սողոմոն Սողոմոնյանը ձեռնադրվում է արեղա և
ստանում Կոմիտաս անունը:

1895

Փետրվարի 26 - Մկրտիչ Խրիմյանի հրամանով Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը Ս.Աստվածածին եկեղեցուն Կոմիտասին և չորս արքեղաների շնորհուն է վարդապետական աստիճան և գավազան:

Յունիսի 4 - Վեհաբանում տրված ճաշկերույթի ժամանակ Կոմիտասի գլխավորած երգչախումբը կատարում է «Է՛ջ Միածին ի հորե» շարականը և «Տեր, պահյա» ու «Տեր, կեցո» երգերը:

Յուլտեմբերի սկիզբ - երաժշտական կրթություն ստանալու համար Կոմիտասը Էջմիածնից մեկնում է Թիֆլիս: Թիֆլիսում հանդիպում է Մակար Եկմալյանին և խորհրդակցում նրա հետ երաժշտական դպրոցում կամ կոնսերվատորիայում սովորելու մասին: Եկմալյանը խորհուրդ չի տալիս Կոմիտասին ընդունվել կոնսերվատորիա և հանձն է առնում հետը երաժշտության տեսություն պարապել:

Դեկտեմբեր - Թիֆլիսում լույս է տեսնում Յովսեփ ճանիկյանի «Յնությունք Ակնա» գիրքը, որի վերջում գետեղված էր Կոմիտասի ձայնագրած և Էջմիածնում տպագրված «Շար Ակնա ժողովրդական երգերի» վերնագրով հավելվածը:

1896

Ապրիլ - «Արարատ» ամսագրի 4-րդ համարում տպագրվում է հետևյալ հաղորդագրությունը. «Կոմիտաս վարդապետը, որ երգեցողության ուսուցիչ էր ճեմարանում, անցյալ տարի (1895) և այս տարի (1896) Թիֆլիսում պ. Եկմալյանին էր աշակերտում, իրավունք ստացավ Նորին Վեհափառությունից՝ արտասահման գնալու և երաժշտական արվեստում կատարելագործվելու: Յայր Կոմիտաս Վարդապետի ուսման ծախքն հոգալ խոստացել է հայտնի բարեգործ պ. Ալեքսանդր Մանթաշյանը, որին այդ առթիվ ազգիս Վեհափառ կաթողիկոսն յուր առաքելական օրհնությունն հաճեցավ տալ հատուկ կոնդակով»:

Յունիսի սկիզբ - Կոմիտասը հասնում է Բեռլին:

Յունիս - Բեռլինում Կոմիտասը ներկայանում է Արքունի կոնսերվատորիայի տեսուչ, հռչակավոր ջութակահար, մանկավարժ Յոզեֆ Իոախիմին, որը խոստանում է նրան տեղավորել Արքունի կոնսերվատորիայում, իբրև իսկական ուսանող:

Յուլիս - Կոմիտասը հրաժարվում է Արքունի կոնսերվատորիայում սովորելու մտքից և Յոզեֆ Իոախիմի խորհրդով ընդունվում պրոֆեսոր Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցը:

Աշուն - Բեռլինում Կոմիտասին է այցելում Փարիզից եկած Մանուկ Աբեղյանը:

Յուլետեմբերի 22 - Կոմիտասը ընդունվում է նաև Բեռլինի Ֆրեդերիկ փլիհելն Արքունի համալսարանի փիլիսոփայության բաժինը:

Նոյեմբերի վերջ - դեկտեմբերի սկիզբ - Կոմիտասը Բեռլինից նամակ է գրում Գևորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին, որտեղ պատմում է ուսման ընթացքի և իր գործերի մասին: Նամակի հետ միասին նրան է ուղարկում «Սիրո քո հուր» վերնագրով եկեղեցական եղանակը՝ մշակված երկձայն և քառաձայն խմբերի համար:

1897

Յունվար - Բեռլինից Կարապետ Կոստանյանին գրում է. «Ուսուցչապետս (խոսքը Ռիխարդ Շմիդտի մասին է - Ռ.Ղ.) միշտ կրկնում է. Դուք ստեղծել էք երաժշտական ազնիւ եւ ինքնուրոյն ոճ, որ կարմիր գծի պէս ձեր ամբողջ գրութեանքների եւ շարադրութեանց մէջ պայծառ անց է կենում. այդ ոճը ես անուանում եմ հայկական ոճ, ասում է, որովհետեւ, մեր երաժշտական ծանօթ աշխարհի համար նորութիւն է»:

Փետրվար - «Արարատ» ամսագրի երկրորդ համարում տպագրվում է Կոմիտասի «Տասն և վեց ձայն երգեցողություն պատարագի» խորագրով տեղեկատվությունը՝ Գրելլի համանուն ստեղծագործությունը Բեռլինում կատարելու մասին:

Մայիս - «Արարատ» ամսագրի 5-րդ համարում տպագրվում է Կոմիտասի «Հայոց եկեղեցական երաժշտությունը ժԹ դարում: Ա շրջան 1839-1874» խորագրով հողվածի սկիզբը:

Յունիսի 21 - Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի կարգադրության համաձայն Ճենարանի տեսուչ Կ.Կոստանյանը Բեռլին՝ Կոմիտասին է ուղարկում չորս հարյուր ռուբլի:

Յուլիտեմբերի վերջ - Կ.Կոստանյանին ուղղված նամակում Կոմիտասը գրում է. «Չափազանց զոհ եմ ես իմ ուսուցչապետիցս, որ այս մի տարուան ընթացքում ինձ այնքան յառաջ տարաւ երաժշտութեան մէջ առհասարակ, որքան 6 տարում չեն անցնում այստեղի պետական երաժշտանոցումն անգամ»:

Յուլիտեմբեր-դեկտեմբեր - Բեռլինի Ֆրեդերիկ Վիլիելմ համալսարանում Կոմիտասը լսում է հետևյալ դասախոսությունները.

1. Երաժշտական արվեստի գեղագիտություն.- պրոֆ. Օ.Ֆլայշեր
2. Հին հունական երաժշտություն.- պրոֆ. Բելերման
3. Երաժշտության ընդհանուր պատմություն.- Ֆրիդլանդեր
4. Երաժշտական գործիքավորություն .- պրոֆ. Օ.Ֆլայշեր
5. Երաժշտություն.- պրոֆ. Օ.Ֆլայշեր:

Նոյն շրջանում, Բեռլին - Կոմիտասը ուսուցչապետ Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում լսում է հետևյալ դասախոսությունները.

1. Ձևաբանություն
2. Երգահանություն
3. Դաշնամուր
4. Բազմաձայնություն:

1898

Փետրվար - Կոմիտասը նոտագրում է «Ծիծեռնակ» երգը (խոսքը՝ Գ.Դողոխյանի):

Մարտ-ապրիլ - «Արարատ» ամսագրի 3-4-րդ համարներում տպագրվում է Կոմիտասի Բեռլինից ուղարկված գրախոսականը «Երգե-

ցողութունք ս. պատարագի: Փոխադրյալ ի խազս եվրոպական և ներդաշնակյալ ի ձեռն Մ. Եկնայան տպագրյալ Պ.ԳՐ. Մեղուհնյան: Լայպցիգ-Բրետյոկոպֆ և Յերտել, Վիեննա, Մխիթարյան տպարան, 1896» վերնագրով:

Սեպտեմբերի 9 - Կոմիտասը գնում է Բերլինոզի «Գործիքագիտություն» վերնագրով գիրքը (գերմաներեն):

Յուլյան օրացույցի 1899թ. հունվար-մարտ - Ֆրեդերիկ Վիլհելմը համալսարանում և Ռիխարդ Շմիդտի մասնավոր երաժշտանոցում Կոմիտասը լսում է երաժշտական դասընթացներ և ծանոթանում մի շարք գործիքների հետ:

1899

Ապրիլ - Ռիխարդ Շմիդտը փորձում է Կոմիտասի ծայրը և հայտնում, որ նա «բարիտոն է» ու «ամբողջովին ամփոփում է բարձր տենորի և ստորին բարիտոնի ամբողջ տարածությունը 2-3/4 ութնյակ 20 աստիճան»: Շմիդտը հայտնում է նաև, որ Կոմիտասի «ձայնի մեջ ձուլված է հանրագումարը թե՛ տենորի ճկունության, և թե՛ բարիտոնի փափկության»:

Ապրիլ - Ֆրեդերիկ Վիլհելմը համալսարանի փիլիսոփայության բաժնի երաժշտագիտական գիտությունների պրոֆեսոր Օսկար Ֆլայշերի նախաձեռնությամբ Բեռլինում ստեղծվում է «Երաժշտական միջազգային ընկերության» Բեռլինի մասնաճյուղը: Իբրև հայկական երաժշտության ներկայացուցիչ ընկերության անդամ է ընտրվում Կոմիտասը:

Մայիսի 10 - Տեղի է ունենում «Երաժշտական միջազգային ընկերության» երկրորդ նիստը: Նախագահող Օ.Ֆլայշերի բացման խոսքից հետո Կոմիտասը գերմաներեն կարդում է «Յայոց եկեղեցական և աշխարհիկ երաժշտությունը» թեմայով դասախոսություն: «...Կոմիտասի կարդացած դասախոսությունը հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության մասին պիտի մնա անմոռանալի: Առաջին անգամն է, որ Բեռլինում այդպիսի մի դասախոս-

սություն է կարդացվում և գուցե մինչև այժմ Փարիզի աշխարհանդետում անգամ այսպիսի դասախոսություն չի կարդացվել (Օսկար Ֆլայշեր)»: Օ.Ֆլայշերը Կոմիտասից վերցնում է զեկուցման տեքստը՝ երաժշտական ընկերության հրատարակվելիք «եռամսյա հավաքածուի» մեջ զետեղելու համար:

Յուլիսի 14 - Օ.Ֆլայշերի նախաձեռնությամբ և ջանքերով Բեռլինի Շարվենկայի երաժշտանոցի դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի երկրորդ դասախոսությունը և համերգը՝ նվիրված հայկական ժողովրդական և եկեղեցական երաժշտությանը: Անհրաժեշտ բացատրությունից հետո Կոմիտասը ցույց է տալիս հայկական ժողովրդական ու եկեղեցական եղանակների կազմության տարբերությունները: Կատարվում են քրդական, պարսկական և տաճկական երգեր, որոնցով Կոմիտասը ցույց է տալիս դրանց և հայկական եղանակների միջև եղած տարբերությունները:

Յուլիսի 16 - Միջազգային երաժշտական ընկերության նախագահ Օ.Ֆլայշերը Կոմիտասին ուղղված նամակում գրում է. «Ձեր հմտալից և խորիմաստ դասախոսության միջոցով խորունկ մի հայացք ձգել տվիք դեպի այն երաժշտությունը, որ մեզ համար ցարդ գրեթե փակ էր, և որ մեզ՝ արևմտականներիս, շատ բան ուսուցանել կարող է: ...Դուք կարող եք արդի գիտությանը անգնահատելի ծառայություններ մատուցել, եթե հրատարակեք Ձեր աշխատությունները»:

Օգոստոս - Կոմիտասն ավարտում է Բեռլինի Ֆրեդերիկ Վիլհելմ արքայական համալսարանի երաժշտա-փիլիսոփայության պատմության բաժինը:

Սեպտեմբերի սկիզբ - Կոմիտասի անունով լրացվում է արքունի համալսարանի երաժշտա-փիլիսոփայության պատմության բաժինն ավարտած լինելու մասին դիպլոմ և Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիան ավարտած լինելու վերաբերյալ համապատասխան վկայական:

Սեպտեմբերի առաջին կես - Կոմիտասը Բեռլինից վերադառնում է Էջմիածին և նշանակվում Գևորգյան ճեմարանում երաժշտու-

թյան ուսուցիչ և երգեցիկ խմբի ղեկավար:

Յոկտեմբեր-դեկտեմբեր, Լայպցիգ - Միջազգային երաժշտական ընկերության “Sammelbande der internationalen Musikgesellschaft” եռամսյա հանդեսի առաջին համարում գերմաներեն տպագրվում է Կոմիտասի “De Armenische Kirchenmusik” (Հայ եկեղեցական երաժշտություն) խորագրով հոդվածը:

1900

Մայիս, Էջմիածին - Կոմիտասը և Մ.Աբեղյանը որոշում են միասին մի երգարան հրատարակել՝ սկսելով ժողովրդական երգերից:

Մայիս-հունիս - Կոմիտասը և Աբեղյանն արձակուրդներին իրենց ծննդավայրը գնացող ճեմարանական աշակերտներին հատուկ թերթիկներ են տալիս և պատվիրում գրի առնել իրենց գյուղերում տարածված ժողովրդական երգերը:

Նոյեմբեր-դեկտեմբեր - Կոմիտասը և Աբեղյանը սկսում են բաղդատել իրենց ունեցած ժողովրդական երգերը:

1901

Մարտի 18 - Կոմիտասի ղեկավարած քառածայն երգչախումբը Գևորգյան ճեմարանում երաժշտական երեկույթի ժամանակ կատարում է 26 երգ: Այսուհետև «Հայոց եկեղեցական եղանակները» թեմայով զեկուցում է կարդում Կոմիտասը:

Մարտի վերջ, ապրիլի սկիզբ - Հայկական երաժշտությանը ծանոթանալու նպատակով Էջմիածին ժամանած ֆրանսիացի երաժշտագետ Պիեր Օբրին հյուընկալվում է Կոմիտասի մոտ և ճեմարանում ունկնդրում է Կոմիտասի վարած դասերը, ծանոթանում նրա կիրառած ուսումնական մեթոդին:

Մայիս - «Արարատ» ամսագրի 5-6 միացյալ համարում տպագրվում է հաղորդագրություն Կոմիտասի Գերմանիա մեկնելու և այնտեղից Ֆրանսիա գնալու առիթով:

Յուզիս-հուլիս - Կոմիտասը մասնակցում է Միջազգային երաժշտական ընկերության Բեռլինում կայացած հերթական նիստին:

Յուլիս, երկրորդ կես - Կոմիտասն այցելում է Արշակ Չոպանյանին և ծանոթանում նրա հետ: «Անահիտ» հանդեսի 6-7 միացյալ համարում հրապարակվում է Արշակ Չոպանյանի «Կոմիտաս վարդապետը» խորագրով հոդվածը:

Սեպտեմբերի 29 - Էջմիածնի ճեմարանում տեղի է ունենում գիտական-գրական երեկույթ: «Չայոց եկեղեցիական ութ ձայնի մասին» թեմայով զեկուցում է Կոմիտասը:

Նոյեմբերի 1 - Կոմիտասը Սողոմոն Փանոսյանի միջոցով հայկական նոտագրությամբ գրի է առնում «Կարոս խաչ» խորագրով ստեղծագործության երաժշտությունը և խոսքը:

Նոյեմբերի 12 - Կոմիտասը ներդաշնակում է «Ծովակ» ռոմանսը Ռաֆֆու «Ձայն տուր, ով ծովակ» բանաստեղծության խոսքերով:

1902

Յունվարի 14 - Նկատի ունենալով Կոմիտասի բազմամյա գործունեությունը, նրա վաստակը մանկավարժական ասպարեզում և անձնվեր աշխատանքը քառաձայն երգչախումբ կազմելու գործում՝ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը «Չայրապետական կոնդակով» «ծաղկեայ կերպասեա» փիլոն է շնորհում Կոմիտաս Վարդապետին:

Մարտի 30 - Լուսավորչի տոնի առթիվ ճեմարանի հանդիսասրահում Կոմիտասի ղեկավարած քառաձայն երգչախմբի ուժերով տրվում է մեծ համերգ: Երեք մասից բաղկացած համերգի ընթացքում կատարվում է 31 երգ:

Յունվար-ապրիլ - Կոմիտասը ձայնագրում է 34 ժողովրդական և 50 ազգային ու կրոնական երգ:

Դեկտեմբեր - Կարճ ժամանակամիջոցում Կոմիտասը քառաձայնի է վերածում Ռ.Պատկանյանի «Յիմի» էլ լռենք» երգը և ուսուցանում ճեմարանի երգչախմբին:

1903

- Մարտի 26** - Կոմիտասի նախածեռնությամբ Գևորգյան Ճեմարանի հանդիսասարահուն տեղի է ունենում երկու բաժնից բաղկացած երաժշտական երեկույթ: Կոմիտասի դասախոսությունից հետո քառածայն երգչախումբը կատարում է նրա ներդաշնակած շուրջ 20 ժողովրդական երգ:
- Ապրիլ** - «Տարազ» շաբաթաթերթի 14-րդ և «Մշակ» լրագրի 90-րդ համարներում տպագրվում է Կոմիտասի գործունեությանը նվիրված դրվատական հոդվածներ:
- Յունիսի 25** - Թիֆլիսում լույս տեսնող «Նոր դար» լրագրի 110-րդ համարում տպագրվում է Կոմիտասի դեմ ուղղված Ալ-ս-ի «Յեղիմակավոր կարծիքի պահանջ» խորագրով հոդվածը:
- Յունիսի 28** - «Նոր դար» լրագրի 113-րդ համարում տպագրվում է Կոմիտասի դեմ ուղղված «Յեռու ծայրահեղությունից» վերնագրով առաջնորդողը:
- Յուլիս** - «Նոր դար» լրագրի երեք համարներում (119,120,121) տպագրվում է Մանուկ Աբեղյանի «Կոմիտաս վարդապետը և յուր գործը» խորագրով հոդվածը:
- Օգոստոս** - Լույս է տեսնում Կոմիտասի և Մ. Աբեղյանի կազմած «Հազար ու մի խաղ» խորագրով ժողովրդական երգերի առաջին հիսնյակը:
- Պեկտեմբերի 22, Սոսկվա** - Գրաքննիչը թույլատրում է Կոմիտաս վարդապետի ձայնագրած «Քրդական եղանակներ» խորագրով հավելվածի տպագրությունը (այն տպագրվում է «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի Ե հատորում 1904 թվականին):

1904

- Յունվարի 22, Էջմիածին** - Կոմիտասը նամակ է գրում իշխանուհի Մարիամ Թումանյանին «Անուշը» երաժշտության վերածելու՝ նրա «փափագն իրագործելու» պատրաստականության մասին: Նաև

իր կողմից Հովհ. Թումանյանին՝ Մարիամ Թումանյանի միջոցով առաջարկում է «Անուշ»-ի որոշ հատվածներ վերափոխել՝ երաժշտության վերածելու համար: Միաժամանակ հայտնում է իր զբաղվածության մասին. «... ես մենակ եմ, եւ բոլոր գործերն ինձ վերայ են ծանրացած. Գ<էորգեան> ճենարանում դաս ունեմ, Մայր Աթոռի խումբն եմ վարում, Միջազգային երաժշտական ընկերութեան գիտական ժողովածուին ուսումնասիրութիւններ եմ տալիս, վերջերս աւելացաւ եւ պ. Տ.Նազարեանցը: Կ.Պոլսից Վահրամ արքեպիսկոպոս Մանկունու յանձարարութեամբ դասագրքեր եմ պատրաստում, պ. Ս.Աբեղեանի հետ ժողովրդական երգերի բառերն ենք խմբագրում, պատրաստում եմ եղանակները տպագրել տալու, աւելացրէք եւ իմ մասնաւոր զբաղմունքներս, կտեսնէք, որ բացի ամառային հանգստի ժամերից ուրիշ ազատ ժամանակ չունեմ, բայց եւ այնպէս ուրախ եմ Ձեր իղձն իրագործելու համար»:

Փետրվար - «Տարագ» շաբաթաթերթի 8-րդ համարում տպագրվում է Կոմիտասի «Վազներ» խորագրով հոդվածը:

Մայիսի սկիզբ - Էջմիածնում Կոմիտասը և Թումանյանը հանդիպում են միմյանց և զրուցում «Անուշ»-ը օպերայի վերածելու մասին:

Հուլիս - Հոգևոր և ժողովրդական երգեր ձայնագրելու նպատակով Կոմիտասը մեկնում է Հայաստանի գյուղերը:

Սեպտեմբերի 24 - Տոնվում է Գևորգյան ճենարանի հիմնադրման երեսնամյակը, ելույթ է ունենում Կոմիտասի ղեկավարած քառաձայն երգչախումբը:

Սեպտեմբեր-նոյեմբեր - Կոմիտասը գերմաներենից հայերեն է թարգմանում Ֆրից Արլբիրգի «Ձայնամարզություն» խորագրով ձեռնարկը:

1905

Մարտի վերջ - Կոմիտասը 60 հոգուց բաղկացած ճենարանի երգչախմբի սաների հետ դուրս է գալիս Էջմիածնից և մեկնում Թիֆլիս՝ համերգներ տալու:

Ապրիլի 1, Թիֆլիս - Արտիստական ընկերության դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի ղեկավարած ճեմարանական սաների քառաձայն երգչախմբի համերգը:

Ապրիլի 3 - Արտիստական ընկերության դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի ղեկավարած երգչախմբի երկրորդ համերգը:

Ապրիլի 6 - Հովնանյան օրիորդաց դպրոցի դահլիճում Կոմիտասը կարդում է դասախոսություն հայ ժողովրդական ու եկեղեցական երաժշտության մասին՝ մերթ ընդ մերթ իբրև բացատրություն երգելով առանձին կտորներ:

Ապրիլ - «Մշակ» լրագրի 62-րդ համարում տպագրվում է «Կոմիտաս վարդապետի հոգևոր-ժողովրդական համերգը» վերնագրով դրվատական հոդվածը՝ նվիրված ապրիլի 1-ին և ապրիլի 3-ին Արտիստական ընկերության դահլիճում Կոմիտասի երգչախմբի ունեցած ելույթին:

Հունիս - Տեմդով հիվանդ Կոմիտասը որոշում է գնալ Հառիճ և ամբողջ ամառը մնալ այնտեղ:

Հուլիսի 23 - Կոմիտասը երվանդ Տեր-Մինասյանի հետ միասին դուրս գալով Ալեքսանդրապոլից՝ կեսօրին հասնում են Հառիճ:

Հուլիսի 25 - Հառիճում Կոմիտասը գրի է առնում 34 նոր երգ, որոնց թվում նաև «Աման Թելո, Թելո ջան» երգը:

Օգոստոսի 15 - Ալեքսանդրապոլից Կոմիտասը Մկրտիչ Խրիմյանի հետ միասին գնացքով մեկնում է Էջմիածին:

Սեպտեմբեր - Էջմիածնում լույս է տեսնում Կոմիտասի և Մանուկ Աբեղյանի «Հազար ու մի խաղ» խորագրով ժողովրդական երգարանի երկրորդ հիսնյակը:

Հոկտեմբեր-նոյեմբեր - Բուժման նպատակով Թիֆլիսում գտնվող Կոմիտասը հաճախ այցելում է աշուղ Ջիվանու ընտանիքին:

Դեկտեմբեր - Կոմիտասը Թիֆլիսից վերադառնում է Էջմիածին:

Փետրվար-մարտ - Կոմիտասը և Գարեգին Լևոնյանը մտադրվում են էջմիածնում «Գեղարվեստ» անունով մի գրական-գեղարվեստական հանդես հրատարակել և այդ իրավունքը ձեռք բերելու համար մի խնդրանքով դիմում են Երևանի նահանգապետին:

Մարտի վերջ - Մեկնում է Գերմանիա՝ իր աշխատությունները տպել տալու համար:

Օգոստոսի 17 - Բեռլինից Կոմիտասը նամակ է գրում Արշակ Չոպանյանին՝ միաժամանակ նրան ուղարկելով «Յայ գեղջուկ երաժշտություն» վերնագրով ուսումնասիրության տետրը և խնդրում մաս առ մաս թարգմանել ֆրանսերեն, մինչև ինքը հնարավորություն կունենա ուղարկելու մյուս տետրերը:

«Աշխատութեան վերնագիրը դիտմամբ «Յայ գեղջուկ երաժշտութիւն» դրի, որովհետեւ քաղաքացիք ոչ մի ժողովրդական երգ չեն ստեղծել, իսկ **ժողովրդական** բառը շատ ընդհանուր է եւ ընդգրկում է բոլորին, այնինչ այս երգերը յատկապէս գեղջուկի ստեղծագործութիւններն են, իսկ աշխատութեան մէջ ժողովրդական բառը գործածել են, որովհետեւ գրագէտներն ու կրթուած դասակարգը սովորել է այդ անունը տալ, մանաւանդ, երբ երգի հետն միացած գիւղական ժողովուրդին: Աշխատութիւնս էլ նուիրեցի պ. Ա. Մանթաշեանին, որովհետեւ նորան են պարտական արդի ուսման պաշարովս՝ եւրոպական մտքով»:

Սեպտեմբեր-հոկտեմբեր - Երևանի նահանգապետը մերժում է Կոմիտասի և Գ.Լևոնյանի «Գեղարվեստ» անունով հանդես հրատարակելու համար ներկայացրած խնդրագիրը՝ պատրվակ բռնելով, որ Կոմիտասը օտարահպատակ է և Վաղարշապատն էլ քաղաք չէ:

Յոկտեմբերի 2 - Կոմիտասը նամակ է գրում Մարգարիտ Բաբայանին և տեղյակ պահում Փարիզ ժամանելու մասին:

Նոյեմբեր - Փարիզում Կոմիտասը, իր շուրջը համախմբելով հայ և ֆրանսիացի երգիչներին, կազմում է մի երգչախումբ ու սկսում

նախապատրաստվել առաջիկայում կայանալիք հայկական նվազահանդեսին: Երգչախմբի մեջ էին Արմենակ Շահ-Մուրադյանը, Մարգարիտ և Շուշանիկ Բաբայան քույրերը, Փարիզի կոնսերվատորիայի ուսանողներ, օպերային երգիչներ:

Ղեկտեմբերի 1, Փարիզ - Տեղի է ունենում Կոմիտասի 30 հոգուց բաղկացած երգեցիկ խմբի համերգը: Կատարվում է բացառապես Կոմիտասի մշակած և ձայնագրած խմբերգերը և մեներգերը («Անձրև եկավ շաղալեն», «Մեր դռանը խնկի ծառ», «Թուլ արա եզո ջան», «Ծիրանի ծառ», «Կռունկ», «Գարուն ա», «Չաբրբան» և այլն):

Համերգի մասին գովեստով են արտահայտվում երաժշտական տեսաբաններ Լուի Լալուան, Պոլ Կիոն և ուրիշներ:

Ղեկտեմբերի 22 - Կոմիտասը լուսավորչական ծեսով Փարիզի Հովհաննես Մկրտիչ եկեղեցում պսակադրում է Մարգարիտ Բաբայանի քրոջը՝ Շուշանիկին և երաժշտագետ Լուի Լալուային:

1907

Հունվար-ապրիլ - «Անահիտ», «Արարատ», «Հուշարար», «Հովիվ» հանդեսներում տպագրվում են հաղորդագրություններ և դրվատական հոդվածներ՝ նվիրված Կոմիտասի երգեցիկ խմբի 1906թ. ղեկտեմբերի 1-ի տրված համերգին:

Մայիս - Հայ ուսանողությունը Կոմիտասին հրավիրում է Ժնև, որպեսզի տեղական ուժերից երգեցիկ խումբ կազմի և համերգ տա Վանա սովյալների օգտին:

Հունիսի 1 - Ժնևի կոնսերվատորիայի մեծ դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի զխավորած հայ և ռուս ուսանողուհիներից կազմված (57 հոգուց բաղկացած) երգչախմբի համերգը՝ ի նպաստ Վանի սովյալների: Համերգին մասնակցում էր նաև Արմենակ Շահ-Մուրադյանը: Հայ երաժշտության և բանաստեղծության մասին բանախոսում է Արշակ Չոպանյանը: Համերգից գոյացած 2000 ֆրանկ գումարը ուղարկվում է Վան:

Յունիսի 7, Լոզան - Կոմիտասը նամակ է գրում Մ.Բաբայանին. «ժր-
նելի համերգն սքանչելի անցաւ. դասախօսութիւն արի ժընել,
Լոզան եւ Բերն: Այսօր կրկին Լոզան եկանք: Արշակը (խոսքն Ար-
շակ Չոպանյանի մասին է - Ռ.Ղ.) պետք է կարողայ հայ բա-
նաստեղծութեան եւ երաժշտութեան մասին, եւ ես պետք է եր-
գեն»:

Յունիսի 14, Բեռլին - Նամակ է գրում Մ.Բաբայանին. «Ես այժմ երգերի
տպագրութեամբ եմ զբաղուած եւ շարունակ նորանոր դիտողու-
թիւններ եմ անում, այնպէս որ, երբ գործը վերջանայ շատ հետա-
քրքրական է լինելու, թէ ինչպէս մեր ժողովրդի ամբողջ սիրտն ու
հոգին, ներքին ու արտաքին կեանքը խորապէս դրոշմուած է
ձայների եւ տաղաչափութեան մէջ...»:

Յունիս, երրորդ տասնօրյակ - Փարիզից Կոմիտասն Արշակ Չոպան-
յանի հետ մեկնում է Իտալիա՝ Վենետիկ: Կոմիտասը նպատակ
ունէր վենետիկյան ձեռագրերի մեջ մասնագիտական ուսումնա-
սիրություններ կատարել:

Յունիսի վերջ, Վենետիկ, ս.Ղազար - Միաբանության դահլիճում և
Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում Կոմիտասը բանախոսում է
հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին, միա-
ժամանակ երգում է՝ ավելի կոնկրետացնելով և հաստատելով իր
մտքերը:

Օգոստոս, երկրորդ տասնօրյակ - Կոմիտասը Վենետիկից վերադառ-
նում է Շվեյցարիա՝ ժնն:

Օգոստոսի 17 - Լոզանից Կարապետ Կոստանյանին ուղղված նամա-
կում գրում է. «Իտալիան շատ գեղեցիկ է, բայց մեր դժբաղդ հայ-
րենիքն աւելի գեղեցիկ է: Վենետիկի վանքում 3 շաբաթ աշխա-
տեցայ, բայց վանքում չէի հիւրասիրուած, ապրում էի քաղա-
քում, Ս.Մարկոսի հրապարակի հիւրանոցներից մէկում՝ պ. Չօ-
պանեանի հետ մէկ տեղ: Գրադարանից բաւական օգտուեցայ:
Այս քանի օրն արդէն պատրաստում եմ ես էլ կամաց-կամաց, որ
մի ամսից երթամ Կովկաս»:

Սեպտեմբերի 23/10, Բեռլին - Մշակութային գործիչ, Վահրամ Եպիսկո-

պոս Մանկունուն Կոմիտասը գրում է. «Եթէ մենք պարծենալիք ունենք մեր եղանակներով, ունենք միայն շարականի հին, պարզ, հասարակ (ո՛չ տօնական, որ խիստ աղաւաղուած է) երգերով: Սոցա մէջ յստակ, միամիտ, ջերմեռանդ, հաւատացեալ ոգի կայ. ոգի, որի մէջ պայծառ փայլում է մեր նախնեաց աննման, զգայուն, կենդանի եւ վեհ, սիրտը, որ ջինջ է առաւօտեան օդի պէս:

Մեր երաժշտութեան երկրորդ, բայց հիմնական ու մշտաբուխ աղբիւրն է հայ շինականի խորունկ, անպաճոյճ ու վսեմ, խնդացող եւ լացող երաժշտութիւնը, որի մէջ պայծառանում է հայ անմեղուկ գեղջուկն իր ամբողջ ներքին եւ արտաքին կեանքի բոլոր երեւոյթներով»:

Սեպտեմբերի 30 - Մեկ ու կես տարվա ընդմիջումից հետո Կոմիտասը վերադառնում է Էջմիածին:

Յուլիտեմբեր - «Արարատ» ամսագրի 10-րդ համարում տպագրվում է Գարեգին վրդ. Յովսեփյանի «Կոմիտաս վարդապետի երաժշտական ճանապարհորդությունը Եվրոպայում» վերնագրով հոդվածը:

Դեկտեմբերի 16 - Գևորգյան ճեմարանում տեղի է ունենում գրական-գեղարվեստական երեկույթ նվիրված Մ.Խրիմյանի և Պերճ Պռոշյանի հիշատակներին: Երեկույթի ընթացքում մեջընդմեջ երգում է Կոմիտասի գլխավորած երգչախումբը: Այնուհետև դաշնամուրի նվագակցությամբ Կոմիտասը կատարում է «Անտունի» երգը:

1908

Յունվարի սկիզբ, Իգդիր - Կոմիտասը իր աշակերտ, ճեմարանի դաստիարակ և երգիչ Վահան Տեր-Առաքելյանի հետ լինում է Իգդիրում, դասախոսություն կարդում ժողովրդական ու եկեղեցական երաժշտության մասին և տալիս համերգ:

Փետրվարի սկիզբ - Երգերի տպագրության գործի առթիվ Կոմիտասը մեկնում է Թիֆլիս:

Փետրվարի 20, Էջմիածին - Կոմիտասի ղեկավարությամբ տեղի է ունենում 80 հոգուց բաղկացած երգչախմբի համերգը: Երեք բաժնից բաղկացած համերգի ընթացքում կատարվում են Կոմիտասի շուրջ 30 ստեղծագործություններ:

Փետրվարի 22 - Երևանի Կլուբի թատրոնի դահլիճում Կոմիտասի ղեկավարությամբ տեղի է ունենում 80 հոգուց բաղկացած երգչախմբի համերգը: Նույնությամբ կատարվում է Էջմիածնում տրված համերգի ծրագիրը:

Մարտ, Երրորդ տասնօրյակ - Կոմիտասը մեկնում է Բաքու՝ տեղական ուժերով համերգ տալու և դասախոսություն կարդալու նպատակով:

Ապրիլի 1, Բաքու - Ժողովարանի դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի ղեկավարած երգչախմբի համերգը: Կատարվում է 24 երգ ու նվագ Կոմիտասի ստեղծագործություններից: Մինչ այդ տեղական երաժշտասերների համար Կոմիտասը կարդում է հրապարակային դասախոսություն նվիրված հայկական երաժշտությանը:

Մայիսի 24, Էջմիածին - Կոմիտասը նամակ է գրում Յուլիա Թումանյանին. «...Աղբեր, վաղուց է սկսել եմ եւ բաւական բան գրել քո «Անուշ»-ից, բայց դեռ պակասաւոր բաներ շատ կան, որպեսզի մի ամբողջութիւն դառնայ: Այս գիրս առնելուն պէս գրիչդ կառնես եւ ինձ մի դրական բան կգրես: Այս ամառուան արծակուրդին պէտք է զբաղուեմ առաւելապէս «Անուշ»-ով: Գրիր, թէ ե՞րբ կարող ես մի քանի օրով ինձ մօտ հիւր գալ, եւ այստեղ միասին վերջացնենք, եւ ես հանգիստ շարունակեմ. ամեն անգամ, երբ տրանադրութիւնս տեղն է, ձեռքերս թուլանում են, որովհետեւ երգի յարմարեցրած չեն դեռ բաներ, եւ պակասներ էլ կան»:

Յունիսի 5, Էջմիածին - Կոմիտասը գրում է ինքնակենսագրության առաջին տարբերակը՝ «Ինքնակենսագրութիւն» վերնագրով:

Յունիսի 24 - Կոմիտասը գրում է ինքնակենսագրության երկրորդ տարբերակը՝ մաքրագիրը, «Կոմիտաս վարդապետ Կուտինացի, ինքնակենսագրութիւն, 1908, հունիս 24, Սուրբ Էջմիածին» խորագրով:

Յոկտեմբերի վերջ - Կաթողիկոսական ընտրության առիթով էջմիածին եկած Չոպանյանը հյուրընկալվում է Կոմիտասի մոտ: Յետագայում Չոպանյանը գրում է. «Ավելի որոշ զգացի հոն ինչքան նեղ էր իրեն համար, անթիվ ընելիք ուներ, միջավայր չկար, հարկ եղած օգնություն չկար: Տարօրինակ բան է, որ Մայր Աթոռը... որևէ գումար չէ տրամադրած այդ մեծարժեք արվեստագետին, որ իր երաժշտական գործերը հրատարակե, գեթ իր դաշնակած պատարագը տպագրե»:

Դեկտեմբերի սկիզբ, Թիֆլիս - Կոմիտասը, Թումանյանը, Իսահակյանը, Աղայանը, Չոպանյանը, Փափագյանը և Բաշինջաղյանը նկարվում են վերջինիս արվեստանոցում:

1909

<Յունվար, Ս. էջմիածին> - Կոմիտասը նամակ է գրում բանասեր, խմբագիր, եկեղեցական գործիչ Բաբկեն Վարդապետին (Բաբկեն Կյուլեսերյան), որպեսզի վերջինս Պոլսո պատրիարք Մատթեոս Իզմիրլյանի միջոցով խնդրի Կեսարիո առաջնորդ Գերապատիվ Տ. Տրդատ եպիսկոպոս Պալյանին, Ս. Դանիել վանքի ձեռագրերի մեջ գտնված հայ երաժշտության վերաբերյալ ձեռագիրը «ուղարկե, կա՛մ արտագրել տայ, կա՛մ լուսանկարել տայ էջերը եւ այնպես ուղարկել..., որ իբր երաժիշտ, օգտուեն եւ մեր Ս. հայրերի հոգեշունչ մրմունջները լոյս հանեն՝ համեմատելով այլ ազգաց երաժշտական խազաբանական օրենքների հետ», քանի որ չի կարող 300 ռուբլով գնել ձեռագիրը: «...Իմ ստացած տարեկան 300 ռուբլի ռոճիկովս եւ ես եմ ապրում, եւ իմ թշուառ հորաքրոջս բազմանդամ ընտանիքը» - գրում է Կոմիտասը:

Փետրվարի 1, էջմիածին - Կոմիտասը նամակ է գրում դերասանուհի Սիրանուշին՝ ջերմորեն շնորհավորելով նրան բեմական գործունեության 35-ամյակի առթիվ. «...Դուք ժրաջան մեղուի պես 35 տարի շարունակ թռաք մէկ բեմից միւսը եւ գեղարուեստի մարգերից, բազմապիսի ծաղիկներից հաւաքեցիք առատ հիւթ, որպես-

զի հայ բենի փեթակը լցնելու օժանդակէք...: Սրտանց շնորհաւորում են Ձեր փառքը եւ ցանկանում է՛լ աւելի փառաւորութիւն ու կանաչ, պայծառ արեւ»:

Փետրվարի 18 - Գևորգյան ճեմարանի մանկավարժական խորհրդի ԺՁ նիստում Կոմիտասը հրաժարվում է իր պաշտոնից խմբավարական ռոճիկը կրճատելու համար՝ դրա մեջ տեսնելով անպատվություն իր անձի նկատմամբ:

Փետրվարի վերջ - Ներսիսյան դպրոցի հրավերով Կոմիտասը էջմիածնից Թիֆլիս է գնում՝ ղեկավարելու Ներսիսյան դպրոցի երգչախմբի մարտի 3-ին տալիք հոգևոր համերգը:

Մարտի 3, Թիֆլիս - Արքունական թատրոնի դահլիճում տեղի է ունենում Սկոբելեկյան կոմիտեի (բարեգործական նպատակով) կազմակերպված՝ տարբեր դավանանքի պատկանող երգչախմբի համերգը: Ելույթ են ունենում ռուսական, վրացական, կաթոլիկական և հայկական երգեցիկ խմբերը:

«Հոգևոր համերգի մէջ բոլորին գերազանցեցինք հայերս», - գրում է այդ համերգի մասին Կոմիտասը Ա.Չոպանյանին:

Մարտի 4 - Ներսիսյան դպրոցի դահլիճում, աշակերտների համար Կոմիտասը կարդում է «Հայ ժողովրդական երգն ու հոգևոր երաժշտությունը, նրանց միջև եղած կապը» թեմայով դասախոսություն:

Ապրիլի 15, Էջմիածին - Կոմիտասը նամակ է գրում Ա.Չոպանյանին, որտեղ նկարագրում է վանքում տիրող ներքին հակամարտությունները և ներկայացնում իր աշխատանքի արդյունքները. «Այս ձմեռուան աշխատանքներս խիստ արդիւնաւէտ եղան. գտայ հայոց հին խազերի բանալին եւ սկսայ կարդալ պարզ եղանակները: Այս ամառն ուզում եմ մի քանի շաբաթով նախքան հայրենիք գնալս անցնել Երուսաղէմ, մի քանի կարելոր ձեռագիր եւս ուսումնասիրեմ, որ գործն շտապով առաջ տանեմ: Յետոյ մանրամասնաբար քեզ կհաղորդեմ»:

Սեպտեմբերի 5, Էջմիածին - Կոմիտասը դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Սատթեսու Բ-ին. «...Եթէ հաճոյ է Վեհիդ ինձ չկորցնել,

այլ գտնել, արտասուելով աղերսուն եմ՝ արձակեցեք ինձ Ս.Էջմի-
ածնայ Միաբանութեան Ուխտից եւ նշանակեցեք Սելանայ Մե-
նաստանի մենակեաց: Քսան տարին կորցրի, գոնէ մնացած տա-
րիներս շահեցնեմ եւ անդորրութեամբ գրի առնեմ ուսումնասի-
րութիւններիս պտուղները՝ իբրև առաւել կարելոր ծառայութիւն
հայ տառապեալ սուրբ եկեղեցւոյ եւ գիտութեան»:

Սեպտեմբերի 12, 13, Էջմիածին - Երկու օրվա ընթացքում Կոմիտասը
ծայնագրում է Վասպուրականի 47 երգ, որ նրա համար կատա-
րում է Տիգրան Չիթունին:

Սեպտեմբեր, Էջմիածին - Կոմիտասը նամակ է գրում Մարգարիտ Բա-
բայանին. «Մարդ չկայ, որին բանաս սիրտդ, մարդ չկայ, որից մի
բան լսես. նստում եմ առաւօտից մինչեւ իրիկուն բուբուին պէս իմ
սեղանի առաջ, գրում ու գրում... գալիս է հանգստի թոպէ, մարդ
ես որոնում, որ գրածդ երգես, նուագես ու կարծիք լսես,- չես
գտնում: Դուրս եմ գալիս ու վագրի պէս այս ու այն կողմ եմ շուռ
գալիս մէն-մինակ, իմ պարտիզում եւ տանիքի վրայ: Ես զարմա-
նում եմ, թէ ինչու մինչեւ այժմ դեռ չեմ խելագարուել այս
մթնոլորտի խարդախ վայրերում: Մէկ ուզում եմ թռչեմ հեռու
միայնակ, մէկ ուզում եմ փակուեմ մէնակ ու ճգնեմ, բայց ի՞նչ եմ
անում որ չեմ ճգնում... այո՛, բայց ո՛չ այսպիսի, այլ մուսայիս
հետն եմ ուզում միայնակ ապրել, որ սիրտս չպղտորուի, միտքս
չխարդախուի, հոգիս չխռովի եւ խիղճս չմեռնի... բայց եւ այնպէս
չեմ յուսահատուել. աշխատում եմ, շատ բան եմ գրել, շատ բան
եմ արել»:

Յոկտեմբերի վերջ - Ալեքսանդր Մյասնիկյանը Մոսկվայից նամակ է
գրում Կոմիտասին և հայ ուսանողական միության անունից
խնդրում նրան գալ Մոսկվա, ուսանողներից կազմել մի երգեցիկ
խումբ և համերգներ տալ հայ ուսանողական միության օգտին:

Նոյեմբերի 5 - Կոմիտասը պատասխանում է Ա.Մյասնիկյանի նամա-
կին: Նա գրում է, որ աշխատանքներով շատ ծանրաբեռնված է և
խորհուրդ է տալիս դիմել Վեհափառին, եթե նա թույլատրի,
«...այն ժամանակ կգամ. ես պատրաստ եմ ծառայելու: Եթէ այդ

չի յաջողուի, կթողնենք եկող տարուան, երբ ես այլեւ ուսուցչութիւնը թողնելու եմ, ազատ եմ եւ կարող եմ»:

1910

Յունվարի 12, Ս.Էջմիածին - Ամենայն Հայոց կաթողիկոս Սատթեոս Բ-ին հոգևոր երաժշտության մասին Կոմիտասը գրում է. «...Բուն ազգային եղանակները՝ հոգեշունչ, պարզ ու վսեմ շարականի երաժշտութիւնը, որ մեր նախնեաց նախանձեղի հոգու պատկերներն ու հայելիներն են, որոնք մշտամրմունջ էին, այժմ դատապարտուել են արհամարհանքի, կորստի եւ նախատիճքի, աւելին կասեմ՝ տանում են մեր սիրտն ու հոգին դէպի խեղդող, օտարական ճանապարհները: Եթէ վերջին մշտյուն էլ, որ մնացել է, մենք փչենք ու հանգցնենք, այն ժամանակ մեր աչքով կտեսնենք մեր սրտի թաղումը, ապա ուրեմն եւ մեր կեանքի գոյութեան վառարանի հանգչելը...»:

Մարտի 15, Ս.Էջմիածին - Կ.Պոլսի «Տաճար» հանդեսի խմբագիր Գարեգին Խաչատրյանին Կոմիտասը գրում է. «...Իրաւ է, ես գտել եմ հայ խազերի բանալին եւ նոյնիսկ կարդում եմ պարզ գրուածքները, բայց դեռ վերջակէտին չեմ հասել. զի իւրաքանչիւր խազի խորհրդաւոր իմաստին թափանցելու համար, նոյնիսկ տասնեակ ձեռագիրներ պրպտելով, երբեմն ամիսներ են սահում, իսկ ձեռքիս տակն եղած խազերը, այն էլ անուն ունեցողները, 198 հատ են առ այժմ, մի կողմ թողնենք դեռ անանուն խազերը, որոնք խիստ շատ են»:

Ապրիլի վերջ, Բաքու - «Թատրոն և երաժշտություն» ամսագրի մարտապրիլ միացյալ համարում լույս է տեսնում Կոմիտասի «Հայ գեղջուկ պար» խորագրով աշխատության սկիզբը:

Մայիսի սկիզբ, Կ.Պոլիս - «Տաճար» կիսամյա հանդեսի 10-րդ համարում տպագրվում է Կոմիտասի «Շարական խազերու նշանակությունը» խորագրով նամակ-բացատրականը:

Մայիսի 20 - Մեկնում է ծննդավայր՝ Կուտինա, հանգստանալու և բուժ-

վելու համար: Մի քանի օր անց գնացքով հասնում է Բաթուն և հյուրընկալվում ավագ քահանա Մեսրոպ Տեր-Մելյանի տանը:

Մայիսի 27, Բաթուն - Կոմիտասը մասնակցում է Համբարձման տոնի հանդիսավոր պատարագին և իր գեղեցիկ ձայնով զմայլեցնում ժամավորներին:

Հունիսի 3 - Կոմիտասի ղեկավարությամբ Բաթունի քաղաքային ժողովարանի դահլիճում տեղի է ունենում ուսուցիչներից և բարձր դասարանի աշակերտներից կազմված երգչախմբի համերգը:

Հունիսի 4 - Բաթունից գերմանական «Դոյչլանդ» նավով մեկնում է Կ.Պոլիս:

Հունիսի 10 - Հասնում է Կ.Պոլիս: Մի քանի օր մնում է Պոլսում, մասնակցում Ղալաթիո եկեղեցում տեղի ունեցող պատարագին՝ իր սքանչելի ձայնով գերելով ներկաներին:

Հունիս, երկրորդ կես - Իր ծննդավայրում՝ Կուտինայում, ս.Թեոդորոս եկեղեցում Կոմիտասը մատուցում է պատարագ:

Հունիսի վերջ - Բաքվում լույս է տեսնում Կոմիտասի «Հայ գեղջուկ պար» գրքույկը:

Հուլիս, Կուտինա - Տեղի է ունենում Կոմիտասի կազմած և ղեկավարած երգչախմբի երկու բաժնից բաղկացած համերգը քաղաքի տղամարդկանց համար: Նույն ծրագրով համերգը հաջորդ օրը Կոմիտասը կրկնում է համաքաղաքացի կանանց համար:

Օգոստոսի 20 - Շուրջ 2 ամիս իր ծննդավայրում մնալուց հետո Կոմիտասը մեկնում է Աֆիոն-Գարահիսար: Հինգ օր մնում է այստեղ:

Օգոստոսի 29, Էսկիշեհիր - Տեղի ազգաբնակչության համար Կոմիտասը մատուցում է հանդիսավոր պատարագ:

Սեպտեմբերի սկիզբ - Էսկիշեհիրից Կոմիտասը հասնում է Բրուսա:

Սեպտեմբերի երկրորդ տասնօրյակ - Բրուսայում տեղի է ունենում Կոմիտասի ղեկավարած 90 հոգանոց երգչախմբի համերգը:

Սեպտեմբերի 25, 26 - Բրուսայից Կոմիտասը ժամանում է Պոլիս: Նա այցելում է Ղալաթիո եկեղեցին, երգչախումբ կազմելու առիթով խորհրդակցում բարեկամների հետ:

Հոկտեմբերի սկիզբ, Կ.Պոլիս - Կոմիտասը հատուկ քննության ենթար-

կելով երգչախմբին մասնակցել ցանկացող աշակերտ-աշակերտուհիների ձայնային տվյալները՝ քննությունից անցած սաների հետ անց է կացնում ձայնավարժության առաջին պարապմունքը:

Յուլետների 24, Կ.Պոլիս - Բերայի Արհեստավորաց սրահում Կոմիտասը կարդում է հրապարակային դասախոսություն՝ նվիրված հայ գեղջկական երաժշտությանը:

Նոյեմբերի սկիզբ - Նախնական պայմանավորվածության համաձայն, Կոմիտասը նոյեմբերի 7-ին Ղալաթի խորհրդարանի սրահի մեջ պետք է հրապարակային դասախոսություն կարդար՝ նվիրված հայ եկեղեցական երաժշտությանը, սակայն ատենապետ Արիստակես Գասպարյանը մերժում է սրահը տրամադրել՝ պատրվակ բռնելով պատրիարքական արտոնագիր չունենալու հանգամանքը: Կ.Պոլսի թերթերում տպագրված հոդվածներում և հաղորդագրություններում ցասունով է խոսվում Ա.Գասպարյանի դեմ՝ դատապարտելով նրա վարմունքը:

Նոյեմբերի 21, Կ.Պոլիս - Պըտի Շանի ձմեռային թատրոնում հանդիսավոր պայմաններում տեղի է ունենում Կոմիտասի գլխավորած 300 հոգուց բաղկացած երկսեռ երգչախմբի անդրանիկ համերգը:

Հայ մամուլի էջերում մեծ գովեստով է խոսվում այդ համերգի մասին, միաժամանակ դատապարտվում է համերգը խափանելու համար խռովարարների նյութած դավերը և պատրիարքարանի կողմից հարուցված արգելքները:

1911

Յուլվարի 28, Ջնյունիա - Մեսրոպյան վարժարանի սրահում Կոմիտասը հրապարակային դասախոսություն է կարդում հայկական ժողովրդական և եկեղեցական երաժշտության ծագման և զարգացման մասին:

Յունվարի 30, Ջնունիա - Սբորթինկ սրահում Կոմիտասի գլխավորությամբ տեղի է ունենում 135 հոգուց բաղկացած երգչախմբի

համերգը, որն ավարտվում է փայլուն հաջողությամբ:

Փետրվարի սկիզբ - Ձմյուննիայից Կոմիտասը վերադառնում է Կ.Պոլիս:

Փետրվարի 20, Կ.Պոլիս - Բերայի Յունյոն Ֆրանսեզ սրահի մեջ Կոմիտասի ղեկավարությամբ տեղի է ունենում 200 հոգուց բաղկացած երկսեռ երգչախմբի համերգը: Երկու բաժնից կազմված համերգը տևում է շուրջ չորս ու կես ժամ և ունենում բացառիկ հաջողություն:

Մարտ, Կ.Պոլիս - Կոմիտասը հանդես է գալիս համերգներով և դասախոսություններով: Համերգներից և դասախոսություններից ստացված գումարները հավաքվում են հայ երաժշտանոց ստեղծելու օգտին: Հայ մամուլը ջերմորեն է արձագանքում երաժշտանոց ստեղծելու Կոմիտասի ջանքերին:

Մարտի վերջ - Կ.Պոլսից Կոմիտասը մեկնում է Իզմիր՝ այնտեղ համերգ տալու նպատակով:

Ապրիլի 6 - Իզմիրից մեկնում է Եգիպտոս:

Ապրիլ-մայիս - Լիմոն է Ալեքսանդրիայում, ապա՝ Կահիրեում: Հանդես է գալիս համերգներով և դասախոսություններով՝ հիացմունք պատճառելով ներկաներին:

Ալեքսանդրիայում այցելում է ղպտիների մայր եկեղեցին: Խոսակցության ընթացքում հայտնում է, որ ինքը հանգամանորեն զբաղվել է ղպտիների խազերով և որ դրանք ամենից հինն են: Ղպտիները մեծ հարգանքով են լցվում Կոմիտասի հանդեպ և զարմանում նրա արտակարգ երաժշտական գիտելիքների վրա:

Հունիսի 16 - Կոմիտասը համերգով հանդես է գալիս Ալեքսանդրիայի Ալիամպրա թատրոնում: Այս առթիվ հայտնի գրող Տիգրան Կամսարականը գրում է. «...Անցյալ գիշեր... երգելով ու բարբառելով, զվարճաբանելով, երբեմն ալ միշտ հանկուցանելով՝ Հայաստան ուխտագնացության տարիք զմեզ. կամ լավ ևս է ըսել քիչ մը Հայաստան բերիք Եգիպտոսի հայերուս. մենք կկարծեինք, թե հայ կրոնավորը, որ Էջմիածնեն կուզա՝ մյուռոն միայն կբերե, դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս պահ մը, ո՞վ ըսավ,

թե լեռները չեն քալեր...»:

Յունիսի վերջ - Ալեքսանդրիայից Կոմիտասը մեկնում է Փարիզ:

Յուլիս-օգոստոս - Մարգարիտ Բաբայանի հետ Կոմիտասը հանգստանում է Անգլիայի Ուայտ կղզում: Շուրջ երկու շաբաթ այստեղ հանգստանալով, նա գրի է առնում մի շարք երգեր:

Օգոստոսի երկրորդ կես-սեպտեմբեր - Լինում է Փարիզում, Բեռլինում, Դրեզդենում:

Նոյեմբերի երկրորդ կես - Կոմիտասը վերադառնում է Կ.Պոլիս:

Նոյեմբերի վերջ, Կ.Պոլիս - Կոմիտասը դիմում է Թուրքիայի ռուսական դեսպանատանը և խնդրում էջմիածին գնալու համար վավերացնել իր անցագիրը: Դեսպանատան ներկայացուցիչները Կոմիտասին համապատասխան արտոնագիր տալու համար դիմում են Պետերբուրգ՝ բարձրագույն իշխանությանը:

Դեկտեմբերի 26, Կ.Պոլիս - Կոմիտասը կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրայանին ուղղված դիմումում գրում է, որ ինքը մնալու է Կ.Պոլսում. «...Կուզեի անձամբ գալ ու հրաժեշտ տալ, բայց ռուս կառավարութեան ներկայացուցչութիւնները՝ դեսպանատունն ու հիւպատոսարանը ըստ պահանջման օրինաց, իբր տաճկահպատակ հոգեւորական, անցագիրս չվավերացրին (ուղիղ 4 շաբաթ է անցել, որ դիմել եմ Պետերբուրգ եւ ցարդ պատասխան չկայ բարձրագոյն իշխանութիւնից), ես էլ, ժամանակս ի զուր չանցնելու համար, սկսեցի գործովս զբաղուել»:

1912

Յունվար - Կոմիտասը կատարում է «Գուսան» երգչախմբի երգիչների ու երգչուհիների ձայնաքննություն ու ընդունելություն և երգչախմբի կազմը հասցնում 200-ի:

Փետրվարի 24, Կ.Պոլիս - Գրող, մշակութային գործիչ Վահան Մալեգյանին Կոմիտասը գրում է. «... Այժմ եգիպտահայերու պատուական հիւրն է ընտիր երգիչ Շահ-Մուրադեանը, որու ունեցած ան-

նախընթաց յաջողութիւններն ինձ անչափ ուրախացուցին, եւ կը պարծօն իրաւամբ, երբ օտարները մեր մասին գիտութեան եւ գեղարուեստի միջոցաւ է, որ լաւ գաղափար կը կազմեն, եւ այսպիսի գործնէութիւնն անջինջ ու քաղաքակրթիչ դեր ունի»:

Մարտի 28/15, Կ. Պոլիս - Մարգարիտ Բաբայանին՝ այլ հարցերի հետ միասին, գրում է. «Երկու հատ էլ տաճկերէն երգ են գրել, մէկը Սուլթանի, միւսը սահմանադրութեան նուիրուած, որպէսզի գործերնիս յաջողուին, եւ բաւական ընդարձակ շրջան անեն պալատի մէջ: Երեկ Սուլթանի արարողապետն էր եկել այցելութեան, չես իմանում, թէ որքան են պոպիկ երաժշտութիւնից, թէեւ սա բաւականին հասկանում է, մեծ կրթութիւն եւ ուժ ունի»:

Ապրիլի 1, Կ. Պոլիս - Պըտի Շանի ձմեռային թատրոնում տեղի է ունենում երաժշտանոց հիմնադրելու օգտին կազմակերպւած Կոմիտասի «Գուսան» երգչախմբի համերգը: Կատարվում են Կոմիտասի գրած խմբերգերն ու մեներգերը:

Ապրիլ-մայիս - Կոմիտասը իր ղեկավարած «Գուսան» երգչախմբի հետ մի քանի համերգներ է տալիս Կ.Պոլսում, որից գոյացած գումարները հատկացնում է Ազգային հիվանդանոցին և հիմնվելիք հայկական երաժշտանոցին:

Կոմիտասը դասախոսութիւններով և համերգներով հանդես է գալիս նաև Ատաբազարում և Իզմիրում:

Յունիսի սկիզբ - Կ.Պոլսից Կոմիտասը մեկնում է Եվրոպա՝ Լայպցիգում տպագրվող «Յայ գեղջուկ երգեր» խորագրով գրքույկի հրատարակության հետ կապված աշխատանքները կարգավորելու համար:

Յունիս-հուլիս - Լինում է Փարիզում, հայ երաժշտության մասին դասախոսութիւն կարդալու հրավերով մեկնում է Անգլիա, վերադառնում է Գերմանիա, լինում է Բեռլինում, Լայպցիգում և հուլիսի վերջին վերադառնում է Կ.Պոլիս:

Օգոստոսի սկիզբ - Կոմիտասը նկարիչ Փանոս Թերլեմեզյանի հետ մեկնում է իր ծննդավայր՝ Կուտինա, հանգստանալու:

Կուտինայում հանգստանալու ժամանակ Փ.Թերլեմեզյանը նկա-

րում է ծառի տակ նստած Կոմիտասին՝ ընթերցելիս:

Սեպտեմբեր, երկրորդ տասնօրյակ - Կոմիտասը վերադառնում է Կ.Պոլիս և ձեռնամուխ լինում «Գուսան» երգչախմբի պարապմունքների վերսկսմանը:

Էսայան վարժարանի սրահի մեջ հարյուրավոր երաժիշտ մանկավարժների ու մասնագետների համար Կոմիտասը կարդում է դասախոսություն «Պարն ու մանուկը» թեմայով:

«..Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդութիւնը, հանցանքն ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին, պետք է, որ իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ բարձրանալ: Միալ դաստիարակութեան արդյունքն է, որ շատերը, որոնք հանճարներ պիտի ըլլային, եղած են գողեր...: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Միալ ուղղութեամբ՝ ազգ մը կ'սորտակեք վերջը...»:

Սեպտեմբերի վերջ - Չերնոգորիան, Հունաստանը, Սերբիան ու Բուլղարիան պատերազմ են հայտարարում Թուրքիային: Սկսվում է Բալկանյան առաջին պատերազմը: Կոմիտասը դադարեցնում է երգչախմբի դասերը՝ պատերազմից հետո այն նորից վերսկսելու մտադրությամբ:

Հոկտեմբեր-դեկտեմբեր - Կոմիտասը հիմնականում զբաղվում է գիտական և ստեղծագործական աշխատանքներով և Ղալաթիո կեդրոնական վարժարանում իր ստանձնած երգեցողության դասերով:

Դեկտեմբերի 15, Կ.Պոլիս - «...Կեանքս լաւ է, բնակարանս յարմար, աշակերտներս ուշադիր, մարդիկ են պատրաստում զաւառներուն ուսուցչութեան եւ խմբեր կազմելու համար: Բայց գիտես, որ ժամերս չեմ վատնում: Օրուան մէջ մինչեւ կէսօր ինձ համար է, աշխատում եմ անձնական գործերովս, իսկ կէսօրէն յետոյ էլ, երբեմն ինձ եւ երբեմն էլ աշակերտներիս համար եմ յատկացրել» - գրում է Մարգարիտ Բաբայանին:

Փետրվարի 9, Կ.Պոլիս - Կոմիտասը նամակ է գրում Փարիզ՝ Մարգարիտ Բաբայանին և խնդրում իր համար նվագարան (Flugel) գնել, պատմում է նաև իր անձնական գործերի մասին:

Ապրիլի 13, Կ.Պոլիս - Կոմիտասը և նկարիչ Փանոս Թերլեմեզյանը միացյալ հեռագիր են ուղարկում բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին՝ նրա գրական գործունեության 30-ամյակի առթիվ:

Մայիսի 12, Կ.Պոլիս - Էսայան վարժարանում տեղի է ունենում Կոմիտասի գլխավորած «Գուսան» երգչախմբի փորձը, որին ներկա է լինում Ֆրանսիայի դեսպան Ս.Պոբը իր տիկնոջ հետ, Մեհմեդ Էմին Պեյը, կոմս Օսդորոկը և հռչակավոր դաշնակահար Ֆուռլանը:

Երեկոյան Պըտի Շանի ծնեռային թատրոնում կայանում է «Գուսան» երգչախմբի համերգը:

Մայիսի 28, Ատաբազար - Արամյան վարժարանի սրահում Կոմիտասը դասախոսություն է կարդում «Հայ ժողովրդական ու աշուղական երաժշտությունը» թեմայով: Ձեկուցման ընթացքում երգում է և բացատրում:

Մարտ-մայիս, Կ.Պոլիս - Կոմիտասը մասնակցում է Էսայան Սանուց Միության «Գրական ասուլիս» կոչվող հավաքույթի նիստերին, որոնք նվիրված էին Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամային, Դանիել Վարուժանի «Հեթանոս երգեր» և Ռուբեն Ջարդարյանի «Ցայգալույս» ժողովածուներին: «Գրական ասուլիսին» մասնակցում էին արևմտահայ նշանավոր գրողներ և քննադատներ:

Հունիսի 25, Թիֆլիս - Կ.Պոլսից Էջմիածին ուղևորվող Կոմիտասը Բաթումից հասնում է Թիֆլիս:

Հուլիսի սկիզբ - Թիֆլիսից Էջմիածին մեկնող Կոմիտասը Ղարաքիլիսայում հյուընկալվում է Սպիրիդոն Մելիքյանի տանը:

Հուլիսի 19, Ս.Էջմիածին - Նամակ է գրում Հովհ.Թումանյանին. «Սիրելի՛ Հովհաննես: Հակառակ բոլոր փափագիս, չկարողացայ քեզ տեսնել Տփլիսում:

Ես եկել եմ, սիրելիս, միայն շատ կարճ ժամանակով, այստեղ: Ձեռագիրներ եմ նայում եւ գեղջուկ երգեր հաւաքում: Իսկ սեպտեմբերին պիտի գտնուեն անպատճառ Պոլիս, ուր արդէն հաստատուել եմ եւ գործ եմ սկսել: Ունեմ ինձ համար անձնական դպրոց, ուր պատրաստում եմ խմբապետներ եւ երգիչներ. ունեմ 300 հոգուց բաղկացած երկսեռ խումբ, որի անունն է «Գուսան»:

Յուլիս-օգոստոսի սկիզբ - Կոմիտասը շրջագայում է Երևանի նահանգը, Իգդիրի, Կոտայքի, Շիրակի, Գառնիքասարի, Ապարանի, Աշտարակի գավառները և հավաքում ժողովրդական երգեր:

Օգոստոսի 9-11 - Կոմիտասը ներկայանում է Բյուրականում հանգստացող Գևորգ Դ կաթողիկոսին. «Յա, բարով, բարով, Կոմիտաս հայր սուրբ, ասում եմ Պոլսում մեծ պատիվ ունես, գործը շատ աջող է գնում, շատ ոսկի եմ տալիս, երբ ես գնում, իհարկե քեզ համար այդ լավ է»: «Վիրավորանքից ու զգվանքից քիչ մնաց խելքս թոցնեի: Ջղայնացած, կարճ ու կտրուկ պատասխանեցի. - Այսօր եկա, վաղը կգնամ»:

Օգոստոսի 12, Թիֆլիս - Էջմիածնից Կոմիտասը ժամանում է Թիֆլիս:

Օգոստոսի 21 - Շուրջ երկամսյա բացակայությունից հետո Կոմիտասը վերադառնում է Կ.Պոլիս:

Սեպտեմբերի 18, Կ.Պոլիս - «Ազատամարտ» լրագրում տպագրվում է Կոմիտասի «Յայը ունի ինքնուրույն երաժշտություն» խորագրով հոդվածը:

Յուլիտեմբերի 12, Կ.Պոլիս - Յայ գրերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյակին նվիրված հանդեսում Ելույթ է ունենում «Գուսան» երգչախումբը: Կատարում է Կոմիտասի մշակած «Նմանյալ Մովսեսի», «Ով մեծասքանչ» և այլ շարականներ ու երգեր:

1914

Յունվար, Կ.Պոլիս - Կոմիտասին այցելության է գալիս ռուս հայտնի կոմպոզիտոր Միխայիլ Գնեսինը, որը հրեական հին ձայնանիշերի համբավավոր հետազոտող Մագգիտի կողմից հանձնարա-

րություն ուներ լուսաբանություններ խնդրել Կոմիտասից հրեական և հայկական եղանակների հավանական փոխառնչության մասին: «Զրուցելով Կոմիտասի հետ, ես զգում էի և գիտական կենտրոնացման լրջությունը, և մարդկային հմայքի բարյացկամությունը: Միայն ավելի ուշ ծանոթանալով Կոմիտասի ստեղծագործություններին՝ ես համոզվեցի, թե որքան մեծ է նրա տաղանդը, ինչ նշանավոր կոմպոզիտոր է նա, ինչ հետաքրքիր և ինքնատիպ վարպետ...»:

Յուզիսի 1-15, Փարիզ - Կոմիտասը մասնակցում է միջազգային երաժշտական ընկերության համագումարին: Երկու հիմնական դասախոսություններից («Հայկական խազագիտությունը», «Հայ գեղջուկ երաժշտությունը») բացի երաժշտական ընտրանիի թախանձանքին ընդառաջելով, նա կարդում է երրորդը՝ Հայ երաժշտության ամանակի, կշռի, շեշտավորության և տաղաչափության մասին:

Յուզիսի 9 - Բլուսնեթալ եղբայրները հայ թերթերում ծանուցում են հասարակությանը ձայնապնակների վաճառքը: Դրանք Արմենակ Շահ-Մուրադյանի կատարմամբ և Կոմիտասի նվագակցությամբ մի քանի եկեղեցական երգեր էին: Պոլսահայ մի քանի հետադեմ հոգևորականներ ձայնապնակների վրա այն դրոշմելը սրբապղծություն են համարում և բողոքում կրոնական ժողովին:

Յուզիսի 18 - Կրոնական ժողովը որոշում է. «Նկատելով, որ տ. Կոմիտաս վարդապետը Հայաստանյաց ս. եկեղեցվոյ սեփական և Աստծո տաճարին հատկացյալ սրբազան երգերն իր երգեցողությամբ ի վաճառս հանած է, որոնք կրամոֆոնի միջոցով կերգվեն ամենուրեք, մանավանդ կրոնական զգացումները վիրավորող անպատշաճ վայրերու մեջ, որոշեց ս. պատրիարք հոր հանձնել պարտ ու պատշաճը տնօրինելու և խնդրել ս. կաթողիկոսեն նկատողություն ընել տ. Կոմիտաս վարդապետին հայ եկեղեցականի բոլորովին անվայել ընթացքը»:

Յունիսի երկրորդ կես, Փարիզ - Կոմիտասը հրավեր է ստանում Լոնդոնում, Մարսելում դասախոսություններ կարդալու, բայց շտապում է Կ.Պոլիս: Ճանապարհին նա այցելում է Վիեննա և Ֆիլիպե ու այս քաղաքներում կարդում մի-մի դասախոսություն՝ այն ուղեկցելով երգով:

Յունիսի 7 և 8, Կ.Պոլիս - «Բյուզանդիոնի» այս օրվա համարներում տպագրվում է Արշակ Չոպանյանի «Անկրոն որոշում մը» հոդվածը: Ա.Չոպանյանը գրում է. «Կոմիտաս վարդապետի մասին կրոնական ժողովի որոշումը ամենեն անկրոնն է որոշումներուն:

«Կրոնք»-ը, եթե զայն ըմբռնենք ոչ թե տերտերական, տիրացուական, խանութպանական իմաստով, այլ իր իմաստասիրական բարձր ու բուն առումով, ուրիշ բան չէ, բայց եթե հավատք գերագույն արդարության և գերագույն գեղեցկության: Կրոնական ժողովին որոշումը հայհոյանք մըն է գեղեցկության դեմ, և զուրկ է արդարության հետին նշույլեն... »:

Յունիսի 9-22, Կ.Պոլիս - «Ազատամարտ» լրագրում տպագրվում է տեղեկատվություն. «Մոտ երկուսուկես ամսվան բացակայությունե մը ետք Եվրոպայեն Պոլիս վերադարձավ երեկ Կոմիտաս վարդ.: Տաղանդավոր երաժշտագետը Փարիզի երաժշտական աշխարհին մեջ հայ հոգևոր ու ժողովրդական երաժշտութեան հանդես մեծ հետաքրքրութիւն արթնացնելե ետք անցած էր Վիեննա: ...Կոմիտաս վրդ. Սիրքեճիի կայարանին մեջ ընդունեցավ համակիրներու բազմութեան մը և իր երգչախմբի անդամներուն կողմէ:

Մեր խմբագիրը երեկ իսկ հարգելի երաժշտագետին հետ տեսակցութիւն մը ունեցավ, զոր, իր շահեկանութեանը պատճառով պիտի հրատարակենք մեր վաղվան թվով»:

«Ազատամարտ» լրագրի համար 1557-ում տպագրվում է «Յայ երաժշտության հաղթանակը» վերնագրով «Տեսակցություն մը Կոմիտաս վարդապետի հետ» հարցազրույցը:

Ամռան վերջ - Կոմիտասը մեկնում է Գերմանիա:

Սեպտեմբերի 10 - Չոպանյանին գրում է. «Ամեն իրիկուն օպերա են գնում: Վագների երկերի շարքն են տալիս այս և եկող շաբաթ. շատ ուրախ են որ սկզբից հասա»:

Յուլի 13/26, Կ.Պոլիս - Երվանդ Յակոբյանին գրում է. «Ժամանակիս վայրագութիւններէն ըստ կարելոյն հեռու պահելով՝ միտքս ու զգացումներս՝ անդադար կ'աշխատիմ կարելուր ուսումնասիրութիւններով:

Խմբիս և համերգներու չը կրցայ տակաւին սկսել՝ աշակերտներուս զինուորագրութեան պատճառաւ, սակայն եւ այնպէս՝ շաբթուս նոր խումբ կազմակերպելու նախապատրաստութեան սկսայ: Յոյս ունիմ Ջատկական տօներին հասցնել մեր հնագոյն եղանակներով ներշնչուած Սուրբ Պատարագի Արարողութիւնները՝ զորս պիտի ուսուցանեմ նոր խմբիս:

Քաղաքապետութիւնը հիմը դնելու վերայ է երաժշտարանի մը, որի պաշտօնեաներէն մէկն այլ զիս կարգեցին. չը մերժեցի, բայց միայն ներդաշնակութեան դասերն ստանձնեցի, որ ձայնս խնայեմ ու խնամեմ»:

1915

Մարտի 23, Կ.Պոլիս - Բերայի Բյուրոնիս սրահում տեղի է ունենում գեղարվեստական ցերեկույթ՝ «մասնակցությամբ Կոմիտաս վարդապետի»:

Ապրիլի 11-24, Կ.Պոլիս - Յայ մտավորականների՝ Սիամանթոյի, Դանիել Վարուժանի և մյուսների հետ միասին Կոմիտասը սուլթանական կառավարության կողմից արքայազնի և Անատոլիայի խորքերը: Աքսորում կրած անհուն տառապանքները, ահն ու սարսափը, հայկական կոտորածները հոգեպես ցնցում են մեծ արվեստագետի ողջ էությունը:

Ամառ - Միջնորդությամբ հաջողվում է Կոմիտասին վերադարձնել արքայազնի:

Սեպտեմբեր - «Ուսման առաջին օրն էր, հավաքվել էինք դպրոց պարապուներն սկսելու... Որքան մեծ ուրախություն և անակնկալ բան էր, երբ դպրոց ոտք կոխելով իմացանք Կոմիտասի գալը և նորից երգի ու երաժշտության դասատու նշանակվելը ազգային

Կենտրոնական վարժարանում: Կոմիտասին տեսնելու միտքը հուզում էր մեզ անուշ երազով, թերևս և մյուսներին տեսնելու հույսով: Ահա Կոմիտասը գալիս է, մեր աչքերը բևեռվում են նրա վրա.. Կոմիտաս^օ, թե^օ Կոմիտասի ուրվական... ժպտուն, թովռուն, կատակող, սիրով, ծաղրով, «տո լաճ», «տո ծուռ» ասող, աշակերտներով հրճվող Կոմիտասը տխուր, «խռով», կմախքացած դեմքով, ատամներից մի քանիսը փշրված,- ո՛վ գիտե ո՛ր գազան թուրքի բռունցքից,- գլուխը կախեց, բարևեց և առանց ժպիտի մտավ դպրոց» (Վարդան Պետոյանի հուշերից):

1916

Սկզբներ - Կոմիտասի հիվանդության սկզբնական շրջանի մասին նրանից գրեթե անբաժան, Աստվածատուր Չարենցը պատմում է հետևյալը. «Արդեն հիվանդության նշանները ծայր տված էին և դոկտ. Թորգոմյան, ընկերակցությամբ դոկտ. Գոնոսի հսկեցին ու զանազան դարմաններ ըրին»:

Գարնան վերջեր - «Բուրոբովին լավ էր»:

Ամռան սկիզբ - «Առաջարկեցի զինքը հյուրընկալել մեր կղզիի տունը: Մեզ բարեկամ երկու հիշյալ բժիշկները շատ հարմար ու օգտակար գտան առաջարկս: 1916-ի ամառը 3 ամսի չափ մեր մոտ անցուց Վարդապետը և այնքան լավ վիճակ մը ուներ, որ հոն վերստին գրի առավ և դաշնակցեց հայկական պարերը»:

Աշնան սկիզբ - «...Մենք Գատըգյուղ վերադարձած էինք և ինքը Բերայեն կուգար շաբթվան 2-3 օրը միասին անցնելու: Ուրբաթները հատկացուցած էինք երկար պտույտներու ուր մանկունակ զվարթություն մը ուներ հարածուն և անվերջ. կերգեհինք ընդհանրապես երկծայն»:

Յուկտեմբեր - «...Իր վիճակին մեջ փոփոխություն երևցավ, ամեն շաբաթ իր զվարթությունը կը պակասեր հետզհետե. կը հիշեմ մանավանդ թե վերջին շաբաթուն մեջ այցելելուն՝ դժգոհություն և գայրույթ ուներ արևին դեմ, ինքը որ կղզի եղած պահուն արևա-

ծագը կը վայելեր երանությամբ:

Մեզ մոտ եղած այդ վերջին **Ուրբաթը**՝ երեկոյան ճաշի ժամը հնչելուն՝ երբ կսպասեինք իր սենյակեն իջնելուն, հանկարծ գահավեժ քայլերով վար վազեց, ուղղակի դուրս, փողոց խոյացավ և դեպի նավամատույց ուղղվեցավ, բնականաբար ես ալ ընկերացա իրեն: Երբ հասանք եկեղեցու առջև, մտավ ներս և տաճարին դուռը բանալ տալով առաջացավ և ծնրադրելով սկսավ արտասովախառն աղոթել»:

Շաբաթ - «Ձինքն առաջնորդեցի Բերա, իր տունը, ուր դոկտ. Թորգոմյան և դոկտ. Գոնոս, անմիջապես խորհրդակցությունն մը հետո, զինքը փոխադրեցին Շիշլի»:

1919

Ապրիլ - Կ.Պոլսի հոգեբուժարանից Կոմիտասին տեղափոխում են Փարիզի Վիլ-Էվրար արվարձանի հիվանդանոցը:

1921

Կոմիտասին տեղափոխում են Վիլ-ժուիֆի հիվանդանոցը:

Մարտ - Նկարիչ Փանոս Թերլենեզյանն այցելում է հիվանդ Կոմիտասին: «...խոսեցի իր աշակերտների մասին, - գրում է իր հուշերում Թերլենեզյանը, - ուրախացավ, որ եկել են Փարիզ սովորելու:

Չարցրի՝ հա՞յ երաժշտությունն է լավ, թե եվրոպականը. «Եղբայր (բարկացած), դուն ուզում ես ծիրանից դեղձի հա՞մ առնել, նա իր տեղն ունի մյուսը՝ իր»:

Չարցրի. «Կերգե՞ս»: «Այո», - ասաց: «Դե Կոմիտաս ջան, մի բան երգիր ինձ համար»: «Չէ, հիմա ես ինձ համար եմ երգում և այն էլ շատ կամաց»:

Մի կես ժամ էլ դեսից-դենից խոսելուց հետո հանկարծ խռովեց, դուռը բաց արավ և գնաց երեսը կպցրեց պատուհանի ապակունու և էլ չխոսեց»:

1930 – 1931

Մեծ հանդիսավորությամբ Սովետական Հայաստանում և սփյուռքում տոնվում է Կոմիտասի ծննդյան 60-ամյակը:

1935

Կոմիտասի կյանքի վերջին շրջանի մասին Սրբուհի Պյուլպյուլյան-Քերեստեջյանը պատմում է. «...Չէր ուզեր բնավ, որ իրեն հետ երաժշտության մասին խոսվի: Անգամ մը, երբ փորձեցի դաշնամուրին կից մը տվի, «Լմնցավ այլևս ինձ համար», եղավ իր պատասխանը:

Չափեն ավելի կզայրանար նաև, երբ իրեն կզգացնեին իր հիվանդ ըլլալը: Այդպես անգամ մը խիստ ցավալի դեպքի մը ներկա եղա: Իրեն հայրենակից մտերիմ անձ մը հաջողեցա մոտեցնել իրեն, սակայն հազիվ թե ներս մտած և անխոհեմաբար «Անցյալ ըլլա հայր սուրբ, իմացա, որ հիվանդ եք եղեր» բառերը արտասանած էր, վարպետը կատաղի զայրույթով մը անկողնին մոտեն հողաթափը վերցնելով՝ «Դո՛ւրս կորսվի, խայտառակ հիվանդը դու ես» պոռալով վանեց զինքը:

Ուրիշ հատկանշական գիծ մը իր հոգեկան անբնականոն վիճակին մեջ կարծես թե արժանապատվության զգացումն էր. չէր ուզեր, որ զգացնեն իր անկեալ վիճակը: Իր հիվանդության ամբողջ տևողության, բաղդը ունեցա նաև տարին մեկ կամ երկու անգամ իրեն համար կրոնական զգեստ մը կարել ու նաև կոշիկները հայթայթել. սակայն կուզեր անպայման գիտնալ նախ, թե ով կվճարե այդ բոլորը: «Ես պետք չունիմ ուրիշներու», կսեր և հաճախ նաև օրերով չէր ուզեր հագնիլ զայն:

Վարպետին հիվանդության վերջին շրջանին էր, երբ օր մը նշմարեցի, որ իր շապիկին կոճակներեն մին փրթած էր և զայն տեղվույն վրա կարեցի: Չպիտի մոռնամ երեխայական անկեղծ իր ժպիտը, որով շնորհալիորեն ըսավ. «Ապրիս, շնորհակալ եմ»: Դեմքին վրա այդ պահուն տառապողի ծամածռություն մը նշմարելով, հարցուցի թե ինչ կզգա, «սրունքիս վրա վերք մըն է գոյացած», ըսավ. ըսի «վարպետ, թողեք որ տեսնիմ». «Ո՛չ, չլլար, ամոթ է», պատասխանեց:

...Վերջին այցելություններու պահուն վարպետը արդեն այլևս անկողինը չէր թողուր: Միշտ ավելի ու ավելի դժգույն, սպառնան նշաններ ցույց կուտար: Այդ օրերուն էր, որ անգամ մը դուրսը, պարտեզին մեջ ման եկող մյուս մտային հիվանդները ինձ ցույց տալով, խիստ տկար ձայնով մը ըսավ. «Դեռ քիչ մը գործեր ունիմ կարգադրելիք ասոնց հետ, բայց մոտ օրեն արդեն ամեն ինչ կը վերջանա»:

«...Իրապես ալ մի քանի շաբաթ վերջը ոչ ևս էր հայ երգին զմայլելի Մելոսը, Կոմիտաս»:

Յուկտեմբերի 21 - Առավոտյան ժամը 6-ին Փարիզի հոգեբուժարանում վախճանվում է Կոմիտասը:

Յուկտեմբերի 27 - Կատարվում է թաղման հանդեսը: Դամբանախոսում են՝ միջազգային երաժշտական ընկերության անունից պրոֆ. Կուրտ Սաքսը, ֆրանսիական երաժշտական ընկերության կողմից Ամեդե Գաստուեն, հայ երաժշտագետների և կոմպոզիտորների անունից Արա Պարթևյանը, Կոմիտասի սաների անունից Հայկ Սենեբրջյանը և ուրիշներ:

Ժամը 13³⁰-ին ավարտվում է դամբանականները և նրա դագաղը իջեցվում է եկեղեցու նկուղը՝ փոքր մի մատուռ՝ հարմար առիթով Հայաստան փոխադրելու նպատակով:

1936

Մայիս - Հայտնի հոգեբույժ Հ.Յազմաչյանի գլխավորությամբ Ֆրանսիայից ներգաղթող հայերի հետ Կոմիտասի զննված աճյունը փոխադրվում է Երևան:

Մայիսի 28 - Կոմիտասին հանդիսավորությամբ թաղում են հայկական պանթեոնում:

«Սիրելի Կոմիտաս, այսօր և միշտ դու մեզ հետ ես քո շքեղ երգերով, որ բարձր արվեստով, պատմական սիրալի գործով: Դու անմահ ես. ինչքան ժամանակ, որ հայ ժողովուրդը կապրի, կապրի և քո երգը: Բայց դու հոգնել ես շատ, սիրելի Կոմիտաս, տառապել ես շատ, զարհուրանքներ ես կրել, վայրագ թշնամու սուրն ես տեսել, հանգստացիր

հիմա, մայրենի հարազատ հողի գրկումն ես հիմա: Քո սիրած Արարա-
յան դաշտի բուրուննալից երգը ծավալվում է քո շուրջը, քո երգերը
ծփում են քո վրա, քո երգերի հետ ծփում են աշխատանքի և ազատու-
թյան նոր, հաղթական կորովի երգեր...

Հանգչիր խաղաղ, սիրելի՛, նվիրական Կոմիտաս...»:

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ



Կոմիտասը Գևորգյան ճեմարանի սաների հետ
1890-1891

ԿՈՄԻՏԱՍՆ Է ԱՍՈՒՄ

Հայ երաժշտության մասին

* * *

Ամբողջ արեւելեան երաժշտութեան մէջ թէ իւր հիմքին նայելով, թէ տաղաչափութեամբ, ծայների դասաւորութեամբ, ոճով, իւրեանց կազմութեամբ, ձեւով, երգեցողութեան եղանակով, արտայայտութեան գեղեցկութեամբ եւ չափի բազմազանութեամբ առաջին տեղն է բռնում **հայկական երաժշտութիւնը - Հայոց երաժշտութիւնը:**

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

Երկու գրքով, Գիրք Ա. - Ե., 2005, էջ 156

... Հայ երաժշտութիւնը ո՛չ միայն մեղկ ու տխուր չէ, այլ համակ ուժ է եւ կենդանութիւն, ու իր մէջ կը սնուցանէ փիլիսոփայութիւնն իսկ, ոգին իսկ իր ցեղին,- որովհետեւ երաժշտութիւնը ամենէն մաքուր հայելին է ցեղին, ամենէն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտայայտութեանց մէջ, կենդանի՝ որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ՝ որքան ուժեղ է իրեն ծնունդ տուող ժողովուրդը:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

Երկու գրքով, Գիրք Բ. - Ե., 2007, էջ 195

...Հայկական խազերով կարելի պիտի ըլլայ ոչ միայն հայկական հին երաժշտութիւնը ուսումնասիրել, այլ նաեւ ուսումնասիրել ուրիշ ազգերու հին երաժշտութիւնները, ինչպէս յունականը, որոնց մասին դժբախտաբար որեւէ ուսումնասիրութեան աղբիւր գոյութիւն չունի այժմ...

Սույն տեղում, էջ 196-197

* * *

... Հայ ժողովրդական երգերը դաշնակելուց առաջ պէտք է քաջ հմուտ լինել հայ ժողովրդի պատմական, բնական եւ ազգային պայմաններից, եղանակի կազմութեան, ոգուն, ոճին, բառերի իմաստին, մեր ժողովրդական տաղաչափութեան, ժողովրդի երգեցողութեան եւ արտասանութեան հանգամանքներին եւ էլի մի շարք այլ բաներին, ապա ձեռնարկել դաշնակելու եւ հրատարակելու. հակառակ դէպքում միշտ թերի կողմ կմնայ:

Այս կերպ չենք կարող գաղափար տալ մեր ժողովրդական եղանակների մասին առհասարակ օտարներին եւ մանաւանդ եւրոպացի երաժիշտներին. պէտք է մեծ զգուշութեամբ եւ սրբութեամբ հաւաքենք մեր ժողովրդական երգերն ու պարերգերը, որոնք բոլորովին այլ եռանդ, այլ զգացմունք եւ այլ միտք են պարունակում, քան միւս արեւելյան ազգերինը:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

Գիրք Ա. - Ե., 2005, էջ 136

* * *

Ժողովրդական է միայն այն երգը, որ բնագղմամբ եւ անմիջապէս է ստեղծում մի ժողովուրդ: Մի ազգի ժողովրդական երգերն այնքան բնորոշիչ են, որ չէ կարելի օտար եւ ցեղակից ազգերինի հետ խառնել:

Նույն տեղում, էջ 133

Ի՞նչ է ազգային երաժշտութիւնը, ի՞նչն է միւս տալիս ազգային ժողովրդական երգերին: Արդեօք նրա հպարտ լեռները, խոր ձորերը, դաշտերը, բազմազան կլիման, պատմական հազար ու մի դէպքերը եւ անցքերը, ժողովրդի ներքին եւ արտաքին կեանքը - այո՛, այս բոլորը, բոլորը միւս են կազմում ազգային երաժշտութեան, մի խօսքով այն ամենը, ինչ ազդում է այդ ազգի զգայարանքների եւ մտքի վրայ:

Նույն տեղում, էջ 324-325

Ինչպես գեղարուեստի ամեն ճիւղ, նոյնպես երաժշտութիւնը ունեցել է իր մանկութեան, հասունութեան եւ լրիւ զարգացման շրջանը:

Նույն տեղում, էջ 325

Մեր նախնական երաժշտութիւնը եղել է պարզ, անպաճոյճ եւ հազիւ մի քանի ձայներից միայն բաղկացած: Յետոյ երաժշտական եղանակները հետզհետէ նրբացել, բազմացել, ընդարձակուել եւ խորացել են:

Նույն տեղում, էջ 325

Մեր երաժշտութիւնը երկու գլխաւոր խմբի է բաժանուում.

1) Եկեղեցական

2) Աշխարհական կամ աւելի ուղիղն ասած՝ ժողովրդական:

Այս երկու խմբի եղանակները այն յատկանշական երեւոյթն են ներկայացնում, որ ե՛ւ ձայնը, ե՛ւ խօսքը, կամ ուրիշ բառերով եւ երաժշտութիւնը եւ բանաստեղծութիւնը **միաժամանակ** եւ մի եւ նոյն **անձի** ստեղծագործութեան կնիքն են կրում:

Նույն տեղում, էջ 325

Երաժշտութիւնը մի տեսակ շարժողութիւն է, ինչպէս լոյսը, ինչպէս ջերմութիւնը, էլէկտրականութիւնը եւ այլն: Եւ սա շատ պարզ է, որովհետեւ երաժշտութիւնը կազմուած է ձայներից, որոնք ուրիշ բան չեն, բայց եթէ օդում առաջ եկած շարժումներ:

Նույն տեղում, էջ 326

... Երաժշտութեան արտայայտութեան եղանակը, ոգին կախումն ունի բնութիւնից: Իսկ ինչ վերաբերում է նրա բովանդակութեան, դա կախուած է ժողովրդի կեանքի պայմաններից:

Նույն տեղում, էջ 326

Մեր ժողովրդական եւ եկեղեցական եղանակները հաւասար չափով չեն զարգացած: Առաջիկաները արտաքին քաղաքական պայմանների ազդեցութեան տակ ճնշուել, սեղմուել, ամփոփուել են, առանց

կորցնելու իրանց խորութիւնը եւ արտայայտիչ ոյժը: Իսկ երկրորդները, եկեղեցու անձեռնմխելի հովանու տակ աճել, ընդլայնուել եւ զարգացել են:

Նույն տեղում, էջ 329

Հայ ժողովրդական երաժշտութիւնն ունի երկու գլխաւոր ճիւղ՝ արեւմտեան եւ արեւելեան: Առաջնի եղանակները լայն են եւ բարդ, ճոխ են եւ լուրջ, պայծառ են եւ եռանդուն. երկրորդի՝ սեղմ են եւ պարզ, աղքատ են եւ թեթեւ, դալուկ են եւ խաղաղ:

Նույն տեղում, էջ 330

Հայ գուսաններն ունին, ժողովրդականից անկախ, ինքնուրոյն դպրոց: Գուսանական դպրոցները երկու տեսակ են: Առաջնին պատկանում են կրթուածները, երկրորդին՝ անուսումները: Վերջինները մի կանուրջ են կապում բուն ժողովրդականի եւ կրթուած գուսանական դպրոցի մէջ:

Նույն տեղում, էջ 343

Ազգային երաժշտութիւնը ազգի մը մեծութեան չափանիշն է, երաժշտութիւնը որքան մեծ է՝ ազգն էլ նույնքան մեծ է: Հայ գեղջուկն ալ ունէր իր երգը և ան կերգեր իր տան մեջ: Մարդ իր տան մեջ ինզինքը ազատ կզգա, և ազատութիւնը կստեղծագործէ:

Գեղջուկը կարդալ չգիտէ, բայց երգել գիտէ: Ան կերգէ իր գյուղը, հողը, իր տունն ու հայրենիքը: Ան այս բոլորը դարձյալ պիտի ունենա: Եթէ այժմ փոքր է, վաղը պիտի մեծանա, ինչպէս մի երեխա մեծանալէ վերջ իր տունը կկազմէ:

- Սովետ. Հայաստան, 1982, N 6, էջ 21

Տուէք ժողովրդին իրա ոգով ստեղծելու զարգացած օրինակ եւ նա կը տայ ձեզ բնական ընդարձակ ստեղծագործութիւն. ոչ մի բան նորազգայարանքներից խուսափել չէ կարող, դորա համար էլ խիստ բազմա-

պիսի են ժողովրդի ստեղծագործութեան արդիւնքները:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏ

Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

Գիրք Բ, էջ 273

...Միտքն ստանում է մի առանձին գոյն, երբ նորա մէջ ոգի կայ. այս է պատճառը, որ մէկի երգածն իր տպաւորութիւնը թողնում է, իսկ միւսինը ոչ...

Նույն տեղում, էջ 306

ՊԱՐԻ ՄԱՍԻՆ

* * *

Մարդկային կեանքի աչքի զարնող երեւոյթներից մէկն էլ պարն է: Պարն արտայայտում է իւրաքանչիւր մի ազգի բնորոշ գծերը, մանաւանդ, բարքն ու քաղաքակրթութեան աստիճանը:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏ

Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

Գիրք Ա, էջ 284

Պարի ներքին բովանդակութիւնն անփոփոխ այս երեք տարրը՝ շէշտ, յանգ եւ եղանակ, բոլոր ազգերն էլ ունին, բայց արտայայտութեան աստիճանը կախումն ունի ազգային խառնուածքից եւ քաղաքակրթութիւնից. իսկ այդ երկուսը՝ ժողովրդի ամբողջ ներքին եւ արտաքին վիճակից:

Նույն տեղում, էջ 284-285

Չայ գեղջուկ պարը կիրք զարթեցնող շարժումներ չունի եւ զգացումներն արտայայտում են մարմնի ոչ թէ մեղկ, մոլի, կատաղի, հրապուրիչ եւ այլն շարժումներով, այլ պարերգերի միջոցաւ:

Նույն տեղում, էջ 285

Հայոց ազգային պարերը խմբական են: Խմբապարը շատ խորունկ արմատ է ձգել հայ գեղջուկի մէջ, որ հինը պահում է եւ նորը յօրինում: ...Պարողները մէկին ընտրում են պարագլուխ, որ, սովորաբար, իրանց շրջանի անուանի ձայնեղն ու պարողն է լինում:

Նույն տեղում, էջ 289

* * *

Պարն ամենահիմնական նշանակութիւնն ունեցող երեւոյթ մըն է. ամէն գեղարուեստ պարի մէջ կը պարփակուի: Իբրեւ շարժում՝ պարը շատ կարեւոր դեր ունի ապագայ դպրոցական կեանքի գեղարուեստական շարժումին մէջ...

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

Գիրք Բ, էջ 75

* * *

...Ամէն կեանքի մէջ պար կայ. արդէն ամբողջ տիեզերքի կեանքը պար չէ՞: Մարդկային կեանքի մէջ երկու տեսակ պար կայ. մին՝ ուրախական, միւսը՝ տխրական: Թէեւ մարդիկ ներկայիս առաջինը կ'ընեն, բայց հին ժամանակներուն՝ տխրականն ալ տեղի կ'ունենար, ինչպէս մեր մէջ մեռելական պարեր...

Նույն տեղում, էջ 75

* * *

Պարն ալ, ծայնական երգին նման որ առաջանալով ողբերգութեան հասած է, իր զարգացումն ունեցած է օպերային մէջ՝ քաղաքակիրթ ազգերու մօտ:

Նույն տեղում, էջ 76

* * *

Պարին ամենահասարակ ձեւն է ընտանեկան պարը, որուն մէջ միտք, զգացում առաջ կը բերենք:

Նույն տեղում, էջ 76

* * *

Մարդ մը, ազգ մը որքան զարգանայ, նոյն չափով զարգացած երեւան կու գան պարն ալ, նուազն ալ, ինչպէս նախնական թմբուկը օպերայի մէջ դարձած է ամէն ձայն զգացնող գործիքը:

Նույն տեղում, էջ 76

* * *

Մտաւոր զարգացումի աստիճանին վրայ կը գտնուի պարին շարժումն ալ: Ուրեմն ազգի մը քաղաքակրթութեանն է կապուած իր պարին շարժումներու զարգացումը:

Նույն տեղում, էջ 77

* * *

Հայ ժողովրդական երգերի չափերն սկզբից մինչեւ վերջ պահում են նոյն արագութիւնը [իսկ] բայց պարերը մի հաստատուն չափ մինչեւ վերջը չունին, այլ պարի շարժումներն ալիքաւոր զօրանում եւ թուլանում են կամ արագանում եւ դանդաղում...

Նույն տեղում, էջ 305

* * *

Երգը ներքին՝ հոգեկան զգացումին արտահայտության մեկ ձևն է, ուրեմն շարժումըն է. և պարն էլ ինքնին շարժում մը ըլլալով, երգը կզուգորդվի պարին հետ: Զուգորդումներն ինչ ուղղությամբ որ ընթանան, երգն ու պարն այլ արտահայտությամբ երևան կուգան:

Բաղիկյան Խ.Գ.

Կոմիտասը՝ ինչպիսին եղել է.-

Ե., 2002, էջ 421

ԼԵԶՎԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

* * *

Ազգի մը լեզուն ու գրականութիւնը կարող են ձեւափոխուիլ ու զարգանալ՝ օրինակ ամենելով ուրիշ ազգերէն, բայց երբ ան ինքնա-
յատուկ լեզու եւ գրականութիւն ունի, ունի ե՛ւ ինքնուրոյն երաժշտու-
թիւն: Ամբողջ արեւմտեան ազգերը զարգացան՝ սնունդ ամենելով հին
յունական քաղաքակրթութեան բեկորներէն՝ լատինականի միջոցաւ...

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

Գիրք Բ, էջ 87

* * *

...Իւրաքանչիւր ազգի երաժշտութիւնն իր ազգի հնչական ելեւեջ-
ներէն կը ծնի ու կը ծաւալի: Հայ լեզուն ունի իր յատուկ հնչաւորու-
թիւնը, ուրեմն ե՛ւ համապատասխանող երաժշտութիւնը:

Նույն տեղում, էջ 87-88

* * *

Հայ երգն ունի ճիշտ այն առանձնահատկութիւնը, ինչ հատուկ է
հայոց լեզվին:

* * *

Երաժշտութիւնն էլ լեզվի պես ունի իր քերականական օրենքներն
ու ոլորմանց տարբեր ոճերը, որոնք միշտ զանազան են տարբեր ազ-
գերի համար:

Բաղիկյան Խ.Գ.

Կոմիտասը՝ ինչպիսին եղել է.-

Ե., 2002, էջ 417

* * *

Երաժշտութիւնն էլ ինչպէս բանաստեղծութիւնն ունի տաղաչափա-
կան օրենքներ. այսինքն՝ իւրաքանչիւր երգ շեշտերի դրութեան համա-

ծայն պէտք է բաժանել հատածների:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ
Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:
Գիրք Ա, էջ 267

* * *

Երաժշտութեան եւ լեզուի շեշտադրութեան օրէնքները սերդ կապ ունին. երկուսի շեշտերն անբաժան ընթանալով մի անքակտելի ներդաշնակութիւն պէտք է ներկայացնեն:

Նույն տեղում, էջ 268-269

* * *

Երգն այն է, որ լեզուն եւ եղանակը զուգընթացաբար են գնում. երբ բառերը ասում եւ երգում ենք կոչւում է **եղանակել**...: Առանց լեզուի (բառեր) եւ եղանակի երգ չի լինիլ:

Նույն տեղում, էջ 138

* * *

Երգն ու լեզուն թէւ իրարուց բոլորովին տարբեր են արտայայտութեան ձեւով, այո, բայց երկուսն էլ պատկանում են միեւնոյն դասակարգին, թէպէտեւ զանազան երեւոյթներին են պատկանում...

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ
Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:
Գիրք Բ, էջ 306

* * *

Մեր երգի կշիռն ու չափը բխում է նոյն երգի բառերի շեշտերի կշռից եւ չափից:

Նույն տեղում, էջ 307

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

* * *

Ուսուցիչ պարոններ ու քոյրեր, զգուշութեամբ ու երկիւղածութեամբ մօտեցէ՛ք դաստիարակութեան գործին. խիստ փափուկ պաշտօն մըն է ձերը. դաստիարակելու կոչված էք սերունդ մը, որ ապագայ ազգն է. սխալ ուղղութեամբ ազգը մը կը խորտակէք վերջը:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

Գիրք Բ, էջ 79

* * *

...Եթէ մանուկը չի հասկնար ձեր դասաւանդութիւնը, յանցանքը ձերն է, որովհետեւ չէք կրցած հասկանալ անոր հոգին. պէտք է վար իջնել մինչեւ անոր հոգեկան աստիճանը, եւ զայն առնելով ձեզի հետ բարձրացնել:

Նույն տեղում, էջ 78

* * *

...Ընտանիքը որքան զարգացած ըլլայ, մանուկն ալ այնքան միտքի առավելութիւններով երեւան կու գայ:

Նույն տեղում, էջ 78

* * *

Սխալ դաստիարակութեան արդիւնքն է որ շատեր որոնք հանճարներ պիտի ըլլային, եղած են գողեր...

Նույն տեղում, էջ 78



Բեռլին, 1896-1899



Գևորգյան ճեմարան
(Էջմիածին)



Քեթրահիա (Թուրքիա) - Կոմիտասի ծննդավայրը

ԻՐ ՄԱՍԻՆ

Ամբողջ մտատանջությունս է հասցնել աշակերտներ, որոնք դպրոցներու մեջ տեղ գրավեն, նվիրվեն ազգային երաժշտության ուսումնասիրության, տարածեն ժողովրդին մեջ հայ երաժշտության ոգին, որպեսզի ժողովրդի մեջ ազգային երաժշտության խոսքը մարմնանա և անոր ազդեցության տակ ժողովուրդը թոթափելով իր թույլ պատյանը, մտնե վերակենդանացման շավղին մեջ: Ինչքան բաղձալի է ունենալ այս նպատակով առանձին վարժարան, որուն միջոցով մեծ արդյունքը կարելի կըլլար ձեռք բերել:

ԱԶՍՅԱՆ Թ. Կոմիտաս վարդապետ.-

Կ.Պոլիս, 1931, էջ 149:

...Ես պիտի հասնեմ նպատակիս, նոյնիսկ, եթե ամբողջ կեանքս իսկ վրայ դնեմ: Դորա համար շատ թանգ եմ իմ սրտակից բարեկամներիս իւրաքանչիւր, նոյնիսկ չնչին համարած կամ բժախնդիի նկատողութիւնները:

ԿՈՄԻՏԱՍ: Նամակներ.- Ե., 2007, էջ 31-32

Ժամանակ է լինում, որ ես ընկղմած եմ կատարելապէս միայն հայ երաժշտութեան մէջ եւ ահա այն ժամանակ ես գրում եմ, ստեղծում եմ այնպիսի բան, ինչպիսին յարմար է մեր երաժշտութեան ոգուն, բայց լինում է եւ ժամանակ, որ առանց իմ կամքի ընկնում եմ մի այնպիսի երեւակայութեան շաւղի վերայ, որ կամ հայկական չէ, կամ նորա կողքիցն է անցնում:

ԿՈՄԻՏԱՍ: Նամակներ.- Ե., 2007, էջ 31

Ես կատարեալ չեմ, ինչպէս բոլոր մարդիկ, բայց՝ կատարելութեան ձգտող, նոյնիսկ այն դէպքում, երբ ես մերժում <եմ> մէկի կարծիքը, թէւ մերժում եմ առժամանակ, բայց այդ ինձ մտածել է տալիս, թէ ինչո՞ւ այս կամ այն կտորը դուր չէ եկել մէկին կամ միւսին, եւ ես աշխատում եմ հարցը լուծել:

Նույն տեղում, էջ 32

Իմ երգչի կարողությունները մեկ նպատակի միայն կծառայեն, մեծ ժողովուրդիս երգն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին և ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերեն ունեցել է իր ինքնուրույն երգն ու երաժշտությունը:

Ժամանակակիցները Կոմիտասի
մասին. - Ե., 1960, էջ 80

Ինձ համար չկա ուրիշ երկինք՝ քան իմ ժողովրդի հարազատ հոգին:

Նույն տեղում, էջ 243


Մեկ ուզում եմ թռչեմ հեռու միայնակ, մեկ ուզում եմ փակվեմ մե-
նակ ու ճգնեմ, բայց ի՞նչ եմ անում որ չեմ ճգնում ... այո՛, բայց ոչ այս-
պիսի, այլ մուսայիս հետն եմ ուզում միայնակ ապրել, որ սիրտս
չպղտորվի, միտքս չխարդախվի, հոգիս չխռովի և խիղճս չմեռնի ...
Բայց և այնպես չեմ հուսահատվել. աշխատում եմ, շատ բան գրել, շատ
բան եմ արել...

Նույն տեղում, էջ 124

Ես տարիներու աշխատանքով շինեի եմ իմ ուղեգիծը, ուրկէ ընթա-
ցեր եմ մինչեւ ցարդ եւ պիտի ընթանամ ասկէ ետք ալ, որքան ատեն որ
ուժ զգամ երակներուս մէջ. ոչ մէկ խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս
իմ առաքելութեանս մէջ. որուն նուիրականութեանը համոզուած եմ ես
բոլոր սրտովս:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ
Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:
Գիրք Բ, էջ 198





Կոմիտասի ձեռագիրը

2009թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի Ազգային գրադարանին է նվիրել Ալեքսեյ Դավթի Հարությունովը (Արարատ Դավթի Մագուլյան)



ԳՆԱՅԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԵՐ

Ասույթներ, քաղվածքներ Կոմիտասի մասին

Ուր որ հայ կա, այնտեղ է Կոմիտասի երգը: Կոմիտասը համազգային մեծություն է: Նրա երգերով մեր ժողովուրդը ավելի գիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ, ինքնաճանաչեց:

...Կոմիտասը հայ երգով լույս աշխարհի հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ, նրա խեղդված վիշտը, իրավագուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Երկերի ժողովածու: Դ.5. - Ե., 1977, էջ 68

Կոմիտասը ստեղծագործող էր նախ և առաջ: Կոմիտասի երգերը ստեղծագործություններ էին իրենց հյութալից, կառուցիկ և միաժամանակ **հարազատ պոլիֆոնիայով**:

Այդ պոլիֆոնիան չունի իր նախորդը, չունի իր տրադիցիան, դա հիմնովին Կոմիտասի սեփական ստեղծագործությունն է: Դա նրա մեծ երախտիքն է հայ երաժշտության զարգացման գործում:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՍԻՐՃՅԱՆ

Երկերի ժողովածու: Դ.8, լրացուցիչ-

Ե., 1963, էջ 103

Կոմիտասը ցույց տվեց հայ աշխատավոր ժողովրդի հանճարը, նրա հոգեկան հարստության անսպառ գանձերը, նրա երաժշտական «ճարտարապետությունը», երաժշտական «մանրանկարչությունը», երաժշտական «տաղերգությունը», նրա երաժշտական «էպոսը»...: ...Նա հպարտություն տվեց հայ ժողովրդական մեծ արվեստին: Նա է

հիմնադիրը ազգային երաժշտության կուլտուրայի և հմուտ ուղե-
ցույցը:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՅԱՆ

Ժամանակակիցները Կոմիտասի մասին. –

Ե., 1960, էջ 6

Կոմիտասը, իհարկե, ինչպես բոլոր հանճարները, կոնկրետ մարդ է եղել, բայց թե ի՞նչ կոնկրետ: Եթե շատ կոնկրետ լիներ, էլ ի՞նչ Կոմի-
տաս: Նա իր մեջ կրել է բնությունը: Դա մեր հողն է, հողի համը, ջուրը,
սարերի օդը, էլ ինչ ասեն: Նա այդ բոլորը բյուրեղացնում է երգով:
Իհարկե, այստեղ կարևորը խոսքերը չեն: Կարևորը հենց երգն է, նրա
երգի նոտաների մեջ հենց այդ հողը, ջուրը զգում ես:

... Ինձ թվում է Կոմիտասը շատ ուժեղ է զգացել բնությունը, հողը,
և նա բնության երգն է ստեղծել, ոչ թե՝ ինչպես ասում են իր կոնկրետ,
անձնական երգը: Եթե այդպես լիներ, Կոմիտասը քիչ բան արած կլի-
ներ: Հանճարն էլ հենց էդ է էլի: Երկրի շունչը դարերով, ժամանակներով
է կուտակվում մարդու մեջ: Կոմիտասը այդ շնչով մարմնացած էակ է, և
նրա ուժը դրա մեջ է, այստեղից պետք է հասկանալ նրան:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

- Սովետ. արվեստ, 1969, N 10, էջ 5

Ես Կոմիտասի կյանքի գործը կնձանեցնեի հիմք զգելուն: Այդ հիմքը
լուսեղեն է, ներդաշնակ և միաժամանակ ամուր խարսխված հարազատ
հողին:

... Երբ լսում եմ Կոմիտասի երաժշտությունը, շոգից ծարաված
ճամփորդ եմ դառնում, որ պապական շուրթերով խմում ու խմում է կար-
կաչահոս աղբյուրից: Կոմիտասի երաժշտությունն էլ հենց այդ աղբյուրի
պես է. կենարար, մաքուր ու բանաստեղծական:

Կոմիտասը եղել է, կա ու կմնա իմ ամենամեծ ուսուցիչը: Կոմի-
տասն է հարթել առաջին ուղիները:

ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

- Սովետ. արվեստ, 1969, N 10, էջ 1-2

* * *

Կոմիտասը մեր ազգային երաժշտական դպրոցի հիմքն է: Ինձ թվում է, որ ոչ մի հայ կոմպոզիտոր չի կարող իր վրա չկրել Կոմիտասի բարեբեր ներգործությունը: Կոմիտասի երաժշտությունը մի այնպիսի անաղարտություն է, մի այնպիսի վսեմաշուք լեզու, որ դժվար է այս կամ այն կերպ նրան չառնչվելը, նրա ազդեցությունը չկրելը:

Ամեն մի հայ կոմպոզիտոր պետք է իմանա Կոմիտասի ստեղծագործությունները, պետք է խորհի դրանց մասին: Ես միշտ եղել և գերված կմնամ Կոմիտասի երաժշտությամբ:

ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

-Էջմիածին, 1969, N ԺԲ, էջ 20

Ով որ լսել է իր՝ արցունքներով կարծես շաղախված ձայնը, այն թրթռուն, ոգևորված, նուրբ ու զգայուն երգը, երբեք չպիտի կարողանա մոռանալ ... ամբողջապես հոգի էր այդ ձայնը և կտաներ ունկնդրին դեպի անհունը ... Նա հայ երգին մարմնացյալ արտահայտությունն էր և ո՛ւր երթար, ի՛նչ հանգամանք էլ լիներ, նա իր երգով անսահման ոգևորություն էր ներշնչում իր շուրջը:

ՍԱՐԳՍԻՏ ԲԱԲՅԱՆ

Երգչուհի, Կոմիտասի մտերիմներից

Ժամանակակիցները Կոմիտասի մասին.-

Ե., 1960, էջ 129

Եթե ուզեինք մեր արվեստի մշակներուն շքախումբը նմանեցնել համաստեղության մը, պիտի կրնայինք ըսել, որ մեր երկնակամարին վրա Կոմիտաս մեկն է ամենեն չքնաղ ու ամենեն աղամանդային փայլով շողացող աստղերեն: Մեկն է մեր այն փառքերեն, որոնք իրենց գործին մեծությունով ու տարողությունովը, իրենց մատուցած մեծ ծառայությունովը, ամբողջ ազգին մշտական երախտիքին են արժանացած: Անոր տաղանդը կարող ենք նմանեցնել նաև պրիսմակի մը (պրիզմա), որուն բազմաթիվ երեսներեն ամեն մեկը իր առանձին ցուլքը ունի: Ու եթե ուզեինք այդ պրիսմակը ծանոթացնել իր բոլոր կողմերով, հարկ

պիտի ըլլար անջատաբար ներկայացնել զինքը ոչ միայն իբրև նրբարվեստ ու ինքնատիպ երաժշտագետ, այլև իբրև ներհուն տեսաբան ու քննադատ, իբրև քաջ ազգագրագետ ու բանասեր, իբրև պերճաբան դասախոս ու քարոզիչ, այլ մանավանդ իբրև անբաղդատելի խմբավար ու անզուգական երգիչ:

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Կոմիտասի աշակերտներից
ժամանակակիցները Կոմիտասի մասին
Ե., 1960, էջ 170

... Ամենազլխավորն այն է, որ նրան հաջողվեց հավաքել մեր ժողովրդի հոգու հարստությունը, որը նրան է հասել դարերի խորքից, ինչպես որ մարգարիտն են հանում ծովի հատակից: Կոմիտասի ամեն մի երգ հայ ժողովրդի մարգարիտն է...

Կոմիտասը ոչ միայն հանճարեղ կոմպոզիտոր է՝ խմբերգերի մեծ վարպետ, այլև իր ստեղծագործությունների փայլուն, անկրկնելի մեկնաբանը:

ԱՌՆՈ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

-Երեկոյան Երևան, 1969, 15 նոյեմբ.

* * *

Ես Կոմիտասին համարում եմ հայկական երաժշտության հավերժական խորհրդանիշ, իսկ նրա ստեղծագործությունը՝ մեծագույն օրինակ և աղբյուր, որից ներշնչանք կստանան հետագա հայ բոլոր կոմպոզիտորները: Ինձ հատկապես հոգեհարազատ է լակոնիկությունը, պարզությունը, պարկեշտությունը երաժշտության մեջ և երաժշտական միջոցների խնայումը:

ԱՌՆՈ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

Коммунист, 1969, 21 нояб.

Կոմիտասը իր կյանքով, իր տիտանական ստեղծագործական աշխատանքով, մաքառումով և իր ճակատագրով, իմ պատկերացմամբ

խորհրդանշում է հայ ժողովրդի պատմությունը, պայքարը, ճակատագիրը: Կոմիտասը իրեն ծնող ժողովրդի նման իր ստեղծագործական, լուսավորչական գաղափարները իրականացնելու համար մաքառել է անասելի ծանր ու դժվարին պայմաններում:

... Կոմիտասն իր ստեղծագործությամբ, գիտական, տեսական հետազոտություններով շրջադարձային դեր խաղաց ազգային երաժշտական մշակույթի զարգացման գործում և միայն իրեն հատուկ հանճարով ու հեռատեսությամբ կանխորոշեց նրա առաջընթացի ուղիներն ու հեռանկարները:

ԷԴՎԱՐԴ ՄԻՐՁՈՅԱՆ

-Հայրենիքի ծայն, 1969, 19 նոյեմբ.

Կոմիտասի երգերը հնարավոր չէ լսել առանց հուզմունքի: Վիթխարի է դրանց ընդգրկումը՝ լուսավորից, քնարականից մինչև հերոսական-ողբերգականը, դրանք հանդիսանում են մեր ժողովրդի յուրատեսակ երաժշտա-պատմական հանրագիտարանը: Կոմպոզիտորների և կատարողների սերունդները դաստիարակվել են Կոմիտասի երգերով:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Коммунист, 1969, 21 нояб.

Երբ ես երգում եմ «Կռունկը» կամ «Պիրանի ծառը», երբեմն այն զգացողությունն եմ ունենում, որ յուրաքանչյուր հնչյուն ու դարձվածք ձեռքիցս բռնած ինձ քաշում են ինչ-որ անմեկին ոլորտներ, հուզական խորխորատներ: Այդ պահին ապրում եմ մի վիճակ, որ հավանաբար պիտի դիդրոյական կշտամբանք ծներ. ես, իրավ, մոռանում եմ սրահը, մոտ եմ մոռանալու նույնիսկ ինքս ինձ, բայց երբեք հնչյունների հորձանքի մեջ ապրող, փոթորկվող ու տոկացող մարդուն ... Դրա համար էլ ինձ համար դժվար է պնդել, թե վերջնական ու անփոփոխ է այնքան ծափեր ստացած «Կռունկի», «Ծիրանի ծառի» ու շուրջ չորս տասնյակ անուններ հաշվող կոմիտասյան երգացանկիս մյուս գործերի մեկնաբանությունը:

...Գձմարտապես Կոմիտասս հասկանալու համար բացսիրտ ու լայ-

նախոհ պիտի մոտենաս նրան, ուժով զսպես աչքերիդ մեջ ակամա կուտակվող արտասուքը, որ անմշուշ տեսնես, լսես ժողովրդիդ ու նրա զավակի՝ Կոմիտասի լուսավոր, հուզառատ հոգին:

ԳՐՀԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ

-Սովետ. Հայաստան, 1969, 21 նոյեմբ.

* * *

Կոմիտասը նման էր վարպետ քարտաշի մը: Դարերէ ի վեր հայ ժողովուրդը ապրեցաւ գուլուններուն տեսակները եւ իւրաքանչիւր փլուզման, անփոխարինելի արժէքներ կորսուեցան: Յաջորդաբար ինկան մեր մշակոյթին ոգեղէն սիւները: Բարեբախտաբար քանի մը երաժիշտներ եկան եւ դուրս բերին մեր գոհար երգերը փլատակներուն տակէն, մաքրելով զանոնք փոշիներէ՝ ըստ իրենց ճաշակին: Այդ նուիրեալներուն մէջէն ամէնէն վաւերական, երաժշտական մեծ հմտութեամբ պատրաստուած օժտեալ դէմքը Կոմիտասն էր: Այո՛, քարտաշ մը: ... Իրմէ զատ ոչ ոք այդ հանճարային բոցով պիտի կարենար նոյնքան բարձրարժէք կատարելութեամբ մտատեսուածը իրագործել:

* * *

Կոմիտաս մեծ եղաւ մեր մէջ իր ունեցած երկու հիմնական առաւելութիւններուն շնորհիւ: Ուրեմն նախ իր առանձնաշնորհեալ եւ ազնուական ճաշակը՝ ու յետոյ, իր ներդաշնակելու արուեստին պարզութիւնը: Ասոնց հիմնական ապացոյց՝ իր «պատարագ»-ը:

ՕՅԱՆ ԴՈՒՐՅԱՆ

-Յառաջ, Բեյրութ, 1969, 25 մայիսի

Կոմիտասն աննյութեղէն ու հազարագույն մի էութիւն-տաճար է. նրա դեանը մոտենալու համարձակութիւնն և իրավունք կարող են ունենալ նրանք, ովքեր ժողովրդի մեծ արվեստի նկատմամբ ունեն երկյուղածութիւն և սրբազան դող:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՉՅԱՆ

-Հայրենիքի ծայն, 1969, 19 նոյեմբ.

Ամեն անգամ, երբ կատարում եմ նրա երգերը, մտքումս հառնում է նրա դաժան ու մռայլ ճակատագիրը: Կոմիտասով տարվել եմ դեռ շատ երիտասարդ տարիներին և մեծ սիրով կատարել բոլոր համերգներում: Զետաքրքիր ու հուզիչ Կոմիտաս էր երգում հայրս: Շատ ու ամենուր երգել եմ Կոմիտասի անմահ «Կռունկը»:

Անսահմանորեն սիրում եմ Կոմիտաս և քանի դեռ երգում եմ, ես չեմ բաժանվի նրանից:

Կոմիտաս ... սիրելի, անկրկնելի, մեծ Կոմիտաս:

ՊԱՎԵԼ ԼԻՍԻՑՅԱՆ

-Գարուն, 1969, N11, էջ 10

Անսահման հպարտությամբ և ուրախությամբ եմ գիտակցում, որ իմ հայրենիքն աշխարհին տվել է այնպիսի հրաշալի մի կոմպոզիտոր, ինչպիսին Կոմիտասն է:

Ստեղծագործական մեծ հուզմունքով եմ աշխատում Կոմիտասի ստեղծագործությունների վրա, դրանք ինձ հսկայական բավականություն են պատճառում:

ԶԱՐՈՒՅԻ ՂՈԼՈՒԽԱՆՅԱՆ

-Սովետ. Հայաստան, 1969, 21 նոյեմբ.

Կոմիտասը խորհրդանշում է մի ողջ ժողովուրդ: Կոմիտասը մեր ազգային հպարտությունն է: Կոմիտասով միայն կարող ենք ցույց տալ օտարներին մեր երաժշտության վեհությունը, պարզությունը և մեծությունը:

... 1967թ. Մոսկվայում Չայկովսկու անվան կոնսերվատորիայում աշխարհահռչակ նկարիչ Ռոքուել Քենտի խնդրանքով կատարեցի մի քանի աշխարհիկ և հոգևոր երգեր: Քենտը հիացած և հուզված բացականչեց.

- Դուք այնպիսի՝ հիասքանչ երաժշտություն ունեք, պահպանեցեք այն...

Իսկ հանրահայտ փիլիսոփա Ասմուսի համար կոմիտասյան երաժշտությունը վեհ է ու խոր:

- Սա բախյալան երաժշտությանը զուգակշիռ մի երաժշտություն է, -
հայտարարեց նա:

ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ

-Գարուն, 1969, N11, էջ 22-23

Կոմիտասը գույնի արտակարգ զգացողություն ունի ... Կոմիտասը դարաշրջանի խոշորագույն կոմպոզիտորներից մեկն էր, որ առաջին անգամ իր՝ կոմպոզիտորի մտածողությունը հիմնեց գույնի օրինաչափության վրա: Տեսե՞ք, ասում էր՝ Ձիգ տուո՞ւ, քաշի ... Սա եվրոպական բնորոշ ոչ մի տակտի, ռիթմի մեջ չի տեղավորվի, անկարելի է: Ձայնը դառնում է օդ, ձայնը դառնում է լույս, որը չի ենթարկվում պուլսացիայի օրենքին:

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

-Գարուն, 1984, N 2, էջ 94

Եթէ ընդունել ենք, որ գոյութիւն ունի հանճարի՝ լոյսի եւ մռայլութեան երկու կերպ, ուրեմն Կոմիտասը, իհարկէ լոյսի հանճար էր, ոչ միայն իր ստեղծագործութիւնների, այլեւ հազարամեայ անցեալի ժառանգութեան արժեւորմամբ: Եւ նրա կենսագրութեան կողքին քայլող մռայլը եւ ողբերգականը դրսից պարտադրուածներն են սոսկ, որ առայսօր արթունօրէն ուղեկցում են նրա անուանը: Եթէ նրա ստեղծած գոհարները շարենք կողք-կողքի, կունենանք զրնգուն ձայների մի աշխարհ-հայրենիք՝ գրաւիչ ու կանչող:

* * *

Կոմիտասը մեր երաժշտամշակութային տարածքի սահմանումն ու քարտեզագրումն է տուել: Այսօր մեր մէջ շարունակում է գոյատեւել Արեւելք-Արեւմուտք փոխյարաբերութեան երաժշտական հոգեբանութեան ծանր դրոշմը: Այս կնճիռը հարթեցնող ուժն այսօր Կոմիտասն է, նրանից սկիզբ առած կոմպոզիտորական դպրոցը:

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

Կոմիտաս Վարդապետ

Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

Գիրք Ա. - Ե., 2005, էջ 7, 9

Կոմիտասն ինքը հայ ժողովուրդն է: Մեղվի պես նա տուն էր բերում մեր գեղջուկ երգերի նեկտարն ու անշոշափելի մանանամ: Կարո՞ղ է մեղուն թղթե ծաղիկներից մեղր բերել, իհարկե, ոչ: Հայ ժողովրդի բազմադարյան երգերը թղթե վարդեր չէին, այլ իրական, և Կոմիտասը իր հանճարով ոսկե մեղվի նման հանդիպեց նրանց: Իր հանճարեղ ոգու հնոցում ձուլեց հայ մեղեդու նախանյութը, հանքանյութը և դուրս բերեց այնպիսի քնքշություններ, երաժշտական ձևերի և խոսքի այնպիսի հույզ ու թարմություն, որոնք հուզեցին ոչ միայն իրեն՝ հայ ժողովրդին, այլև համաշխարհային երաժշտական աշխարհում աղոթքի արժանացավ Կոմիտասի անունով հայ ժողովրդի անունը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

-Հայրենիքի ծայն, 1969, 19 նոյեմբ.

Եվ ահա, նկատի ունենալով այն հայտնի իրավիճակը, որի մեջ է գտնվում աշխարհասփյուռ մեր ժողովուրդը, մենք պարտավոր ենք ասելու նաև, որ հիմա տվյալ իրական և տիրական հանգամանքներում մայր հայրենիքի շուրջ համախմբվելու, արտասահմանում հայ համագալին ոգին կենդանի պահելու խնդրում Կոմիտասի գործը վիթխարի է:

Կոմիտասն է այն կամուրջը, որին չի հսկում ոչ մի «սահմանապահ», որով անցնելու համար չի պահանջվում ոչ մի «վիզա»՝ ոչ մի կողմից և ոչ ոքի կողմից:

Այս է Կոմիտասի առաքելությունն այսօր:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

-Հայրենիքի ծայն, 1969, 19 նոյեմբ.

Կոմիտասը...

Եթե Հռիփսիմեի վանքը Հայաստանի, հայ ժողովրդի ոգու և էության քարակերտ պատկերն է, միջնադարյան մանրանկարչությունը՝ Հայաստանի գույնը, Սասնա Դավիթը՝ խոսքը, ապա նա՝ Կոմիտասը, Հայաստանի ծայն է - գուսպ, խոր, առնական, բայց փխրուն, տաք, կարտած, լի հառաչանքով, այլև օրհնությամբ, արցունքով, այլև ժպի-

տով, թախիծով, այլև լույսով, անհուն, անսահման լույսով:

Կոմիտասով այդ ծայնը լսելի է դառնում աշխարհին:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Երկեր: 3 հատորով: Բ.2.- Ե.:

Սովետ. գրող, 1984, էջ 368

... «Սոնա յար» ենք երգում և չգիտենք, որ երգը հեղինակ ունի, և այդ հեղինակի անունը Կոմիտաս է: Կարծում ենք երգը հեղինակ չունի, ինչպես հեղինակ չունեն օդը, ջուրը, որոտը, ծաղիկն ու ծիածանը, մայրենի լեզուն:

Տարիներ էին պետք, ուսման ու աշխատանքի փորձի ու փորձության տարիներ, որպեսզի իմ սերունդը ճանաչեր ու հասկանար Կոմիտասին, որպեսզի հասկանար, թե ինչ ասել է «Գարուն ա, ձուն ա արել», որպեսզի հասկանար, թե ինչ ասել է «Սիրտս մման է էն փլած տներ»: Ու ճանաչեցինք, ու հասկացանք, ու լցվեցինք, ու հարստացանք Կոմիտասով:

Կոմիտասը դա Մենք ենք, մեր Բնությունը, մեր բնավորությունը, մեր պատմության Արիադնայի կծիկը, ժամանակներն իրար կապող ուղեցույց թելը, մեր արվեստի անկեղ մորենի՛ն, մեր սրտի «Սեզամ բացվիրը»:

Կոմիտասը մեր ոգու ինքնությունն դրոշմն է, մեր հավիտենության վկայականն աշխարհի առաջ:

ՀԱՍՈ ՍԱՀՅԱՆ

-Սովետ. Հայաստան, 1969, 21 նոյեմբ.

Ջարմանալի ուժ, խորություն և բարձրություն, զարմանալի բույր ու երանգ ունեն կոմիտասյան մեղեդիները:

Թեև քսաներորդ դարի նախաշեմին դողանջեցին դրանք, բայց իրենց մեջ ունեին այն բոլոր հարստությունները, ինչ հայ մելոսն ստեղծել էր իր բազմադարյան ճանապարհին: Նրանց մեջ ասես լսելի էին բնության արարչաստեղծ ոգուն և արևին ձոնված հեթանոսական հիմների արձագանքները, հայ գեղջուկի պարզ ու սրտառուչ երգի

մրմունջները, վանքերի գմբեթների տակ հոգեկան տուրք դարձող շա-
րականների ու պատարագների խորհրդավոր հնչյունները, ժողովրդա-
կան զվարթ գուսանների լույսով ու հունորով լի երգերը:

ՎԱՅԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

-Գրքերի աշխարհ, 1969, N11, էջ 4

Մեծ քաղաքացի է Կոմիտասը:

Վեղարավոր հանճար, անհրավունք սիրահար, խաչակիր աշխար-
հական: Նրա ամբողջ կյանքը մարաթոնյան մի վազք է հայ երգի որոն-
ման ճանապարհին: Գիշեր ու ցերեկ, արևին ու անձրևին, տոնախմբու-
թյուններին ու ուխտագնացություններին, հարսանիքներին ու սգի արա-
րողություններին Կոմիտասն անդադրում որոնում ու որոնում էր մեր
երգը: Եվ նա գտավ որոնածը: Գտավ հեքիաթային սիրահարին հատուկ
սիրով, կրքով ու ջերմությամբ: Դրանից հետո փրկված էր մեր երգը:

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆ

- Սովետ, Հայաստան, 1969, 21 նոյեմբ.

Ասում են Կոմիտասը հայկական Բախ է, Շուբերտ: Այդ բոլորը լավ է,
դրանց մեջ ճշմարտություն կա, բայց Կոմիտասը Կոմիտաս է, միայն ու
միայն Կոմիտաս: Չէ՞ որ մեծ արվեստագետները մեկը մյուսին կրկնել
չեն կարող: Իսկ իմ Կոմիտասը ահա այնպիսին է, ինչպիսին կա, արդեն
տեսնում եք:

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ

-Երեկոյան Երևան, 1969, 17 նոյեմբ.

Կոմիտասը մեկն է այն երջանիկներից, որոնց բախտը զուգակց-
վում է ժողովրդին և դառնում նրա խորհրդանիշը:

Շատ արվեստագետներ Կոմիտասի կերպարը ստեղծելիս առաջին
պլան են քաշում 1915 թվականի դեպքերը և տեսնում Կոմիտասին խե-
լակորույս, մոռանալով, որ այդ տարեթիվը մի դրվագ է նրա կյանքում և
թերևս նրա տխուր վախճանը: ... Սրբություն դարձած դեմքերի հետ
արվեստագետը զգույշ պետք է վարվի: Եթե կա պատկերը, ապա նմա-

նությունը պարտադիր է: Նա այսպիսին էր. շեշտիր կամ հարստացրու, խորացրու:

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՁՅԱՆ
-Գարուն, 1969, N 11, էջ 8

Կոմիտասն ինձ վրա թողեց կատարյալ աշխարհիկ մարդու տպավորություն: Նա շատ լավ էր խոսում ռուսերեն: ... Ջրուցելով Կոմիտասի հետ, ես զգում էի և գիտական կենտրոնացման լրջությունը, և մարդկային հմայքի բարյացկամությունը: Միայն ավելի ուշ ծանոթանալով Կոմիտասի ստեղծագործություններին, ես համոզվեցի, թե որքան մեծ էր նրա տաղանդը, ինչ նշանավոր կոմպոզիտոր էր նա, ինչ հետաքրքիր և ինքնատիպ վարպետ, և որքան մեծ էր նրա դերը XIX դարի հայ երաժշտության զարգացման գործում: Որքան թանկ է ինձ համար խոստովանել, որ ես եղել եմ այն փոքրաթիվ ժամանակակիցներից մեկը, որն անձամբ ճանաչել է հայ երաժշտության մեծ սկզբնադիրներից մեկին:

ՄԻԽԱՅԻԼ ԳՆԵՍԻՆ
Կոմպոզիտոր, մանկավարժ
Հարությունյան Մ.Գ. Կոմիտաս.- Ե., 1969, էջ 17-18

Նրա խմբական երգերի մեջ տեսնում ենք մի շարք անձնական հայկական եղանակներ, որ հյուսված են ամբողջության հետ. դրանք ոչ միայն գեղեցիկ են իբր եղանակներ, ներդաշնակային նրբություններ, այլև իրենց բնավորությամբ կատարելապես հայ երգի ոգով են ներկայանում և շատ անգամ դժվար է զատել իսկականը հորինվածքից: Դա միայն հորինվածք չէ, այլ **ոճի ստեղծագործություն**: Ահա դրանում է կայանում Կոմիտասի գործի մնայուն նշանակությունը ոչ միայն հայ, այլև արևմտյան երաժշտության համար: Նրա խմբական երգերը օրինակելի են:

Դաշնամուրային մշակումների մեջ նրա ներդաշնակային ոճը բնական կերպով կապված է ժողովրդական երգի հոգու հետ: Ի՞նչ նրբություն, ի՞նչ անուշ բուրմունք: Չես իմանում, թե ինչո՞վ ավելի հրճվես.

ծաղկո՞վ, - ժողովրդական երգով, - թե՞ այն ծաղկատուն դաշտով, որի վրա նա բուսել է: Ահա ինչի հետ կհամեմատեի Կոմիտասի ներդաշնակային ոճը: Իբրև օրինակ կբերեմ այստեղ «Անտունի» անունն երգը՝ երաժշտական տպավորականության սքանչելի մի գործ:

Պետք է ասել, որ Կոմիտասի երգերի մեջ նախնականը (պրիմիտիվ) զարմանալի կերպով հյուսվում է ամենանուրբ մանրագնին ներդաշնակության հետ, և այն միշտ համոզիչ է: Լսելով Կոմիտասի ներդաշնակությունները, դուք համոզված եք, որ դրանց միայն այդ ձևով կարելի էր ներկայացնել: Նա համոզում է ձեզ իր տաղանդի մեծ ուժով: Դա նրա գործի **ամենաբնորոշ գիծն է:**

ԹՈՎՄԱՍ ՀԱՐՏՄԱՆ

Ռուս կոմպոզիտոր

Ժամանակակիցները Կոմիտասի մասին

-Ե., 1960, էջ 57-58

Հսկայական է նրա ծառայությունները հայ երաժշտության մեջ: Նրա գեղեցիկ գործերը դուրս եկան հարազատ Հայաստանի սահմաններից, դարձան համաշխարհային երաժշտական մշակույթի հպարտությունը: Կոմիտասը միայն մեծ կոմպոզիտոր չէ... Նա նաև անվանի երաժշտագետ է, հիանալի ազգագրագետ, այս բնագավառում շատ մեծ են նրա ծառայությունները:

... Հայ կոմպոզիտորները իրենց ստեղծագործությունների մեջ հետևում են և կհետևեն կոմիտասյան հիանալի ավանդույթներին:

ԴՄԻՏՐԻ ՇՈՍՏԱԿՈՎԻՉ

Ռուս կոմպոզիտոր, դաշնակահար, մանկավարժ

-Երեկոյան Երևան, 1969, 17 նոյեմբ.

Կոմիտասի երաժշտության մեջ չկա ոչ մի ավելորդ հնչյուն, ոչ մի ավելորդ միտք և ոչ մի ավելորդ զգացմունք: Սրանում է Կոմիտասի մեծությունը: Իսկ այսպիսի արվեստը սահմաններ չունի:

* * *

Կոմիտասի անունը թանկ է, որպես անունն ականավոր երաժիշտ-
ներից մեկի, որի տաղանդին, մտքին ու սրտին պարտական ենք ծնուն-
դով, զարգացմամբ ու ծաղկմամբ, մեր կյանքի այն հոյակապ հարս-
տության, որ անվանում ենք սովետական բազմազգ երաժշտական
կուլտուրա:

... Նա մեզանից յուրաքանչյուրի համար իր ժողովրդին, արվես-
տին, մարդուն, կյանքին անձնվեր ծառայելու օրինակ է:

* * *

Դառնալով պատմություն, նա շարունակում է մնալ այսօրվա մեջ,
և ավելին, օրեցօր ավելի ու ավելի է խուժում վաղվա օրվա մեջ:

...Կոմիտասի երաժշտության մեջ չկա ոչ մի ավելորդ հնչյուն, ոչ մի
ավելորդ միտք և ոչ մի ավելորդ զգացմունք: Սրանում է Կոմիտասի
մեծությունը: Իսկ այդպիսի արվեստը սահմաններ չունի:

ԴՄԻՏՐԻ ԿՈՔԱԼԵՎՍԿԻ

Ռուս կոմպոզիտոր, մանկավարժ

-Յայրենիքի ծայն, 1969, 26 նոյեմբ.

-Սովետ. Հայաստան, 1969, 21 նոյեմբ.

-Էջմիածին, 1969, N ԺԲ, էջ 22

Կոմիտասը հայ ժողովրդի հնչող ոգին է: Կոմիտասը 20-րդ դարի՝
իր հետագա զարգացման մեջ գեղարվեստական փայլուն նմուշներ
տվող հայկական պրոֆեսիոնալ երաժշտական կուլտուրայի հանճա-
րեղ սկիզբն է:

Ես՝ ռուս կոմպոզիտորս, միշտ հնայվում եմ նրա երաժշտությամբ:

* * *

Երգի համաշխարհային տիտան է Կոմիտասը, բազմակողմանի

երաժիշտ ու գիտնական, այն բացառիկ դեմքերից, ովքեր էական դեր են կատարում իրենց ժողովրդի հոգևոր կյանքում:

ՏԻԽՈՆ ԽՐԵՆՆԻԿՈՎ

Ռուս կոմպոզիտոր

-Սովետ. Հայաստան, 1969, 21 նոյեմբ.

-Սովետ. գրակ., 1969, N 10, էջ 4

Կոմիտասը մեծ արվեստագետ է, նրա երգերը միշտ հուզում են մարդկային սիրտը: Լսել և հմայվել նրա մեղեդիներով՝ ինձ համար մեծ բավականություն է:

Երազում եմ, որ իմ ղեկավարած ռուսական երգչախումբը կատարի մի քանի համարներ նրա «Պատարագից»:

Ինչպիսի՞ յուրահատուկ վարպետություն է դա:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՎԵՇՆԻԿՈՎ

Դիրիժոր, երաժշտական գործիչ

-Սովետ. Հայաստան, 1969, 21 նոյեմբ.

Ժողովրդական երաժշտության լադային և ռիթմային հիմքերին խորամուխ լինելով է Կոմիտասը մշակել հայ երաժշտական ֆոլկլորի լավագույն նմուշները, ստեղծել իսկական գլուխգործոցներ: Ֆակտուրայի թափանցիկությունը, նուրբ և շքեղ ձայնավարությունը, մանրակրկիտ ընտրված ներդաշնակ միջոցների անաղարտությունն ու պարզությունը և, վերջապես, որ շատ կարևոր է, շարադրման յուրօրինակ բազմաձայն կերտվածքը այսօր, բազում տասնամյակներ անց մեր մեջ հիացմունք և զարմանք են առաջացնում:

ԿԱՐԱ ԿԱՐԱԵՎ

Կոմպոզիտոր, մանկավարժ

-Երեկոյան Երևան, 1969, 18 նոյեմբ.

Ես կարող եմ համոզված ասել, որ Կոմիտասը իմ սիրած հայ կոմպոզիտորն է: Ես սիրում եմ նրան իր երաժշտության նախաստեղծ գեղեցկության, անարատության, մաքրության և գեղարվեստական

մտածողության բարձր ներդրման համար: Իմ համոզմամբ Կոմիտասը ավելի խորն է բացահայտել և մարմնավորել հայ ժողովրդական ձայնի առանձնահատկությունները, այն մաքրել է բոլոր նստվածքներից և դուրս է բերել, այսպես ասած, «դիատոնիկ լայնություն»:

ՕԹԱՐ ԹԱԲԹԱՔԻՇՎԻԼԻ

Կոմպոզիտոր

Коммунист, 1969, 21 нояб.

Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունի»-ն, այդ էլ բավական կլիներ նրան խոշոր արվեստագետ համարելու:

ԿԼՈՂ ԴԵԲՅՈՒՍԻ

Ֆրանսիացի կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր

Գասպարյան Ս. Կոմիտաս.

Ե., 1961, էջ 105

Նա առաջինը կարողացավ գտնել հայ երաժշտության նկարագրին միանգամայն հարմար դաշնակունձը, որն այնուհետև հայտնվում է մեզ գերազանց քաղցրությամբ ու լիաբուխ փափկությամբ՝ հավասարապես երևան բերելով որոշ բանաստեղծական և հայեցող բնություն, որ նրա գեղեցկագույն զարդերից մեկն է:

ՖՐԵԴԵՐԻԿ ՄԱՎԼԵՐ

Ժամանակակիցները Կոմիտասի մասին.-

Ե., 1960, էջ 33

* * *

1914 թվի Փարիզի երաժշտական կոնգրեսում, ուր հավաքվել էին աշխարհի գլխավոր երաժշտագետները, Կոմիտասը հայ ժողովրդական ու հոգևոր երգերից մի համերգ տվեց՝ հիացնելով ներկա եղող կոմպոզիտորներին:

Ժողովրդական երաժշտությունը, ինչպես և արորի, խոփի, զութանի երգերի մասին տված նրա դասախոսությունները, պիտի ասել, համագունարի նիստերից ամենից թանկագինը եղան:

Երբ Կոմիտասը դաշնամուրի մոտ նստեց մեղմորեն երգելու հայկական երգ, ունկնդիր հասարակությունը քարացած մնացել էր լուռ, և այնտեղ տիրեց այն վեհապանծ հմայքը, այն գերագույն պարզությունը, որ բխում է հայկական երաժշտությունից:

ՖՐԵՂԵՐԻԿ ՄԱԿԼԵՐ

Սորբոնի համալսարանի պրոֆեսոր
-Էջմիածին, 1969, N ԺԲ, էջ 21

... Հայ ժողովուրդը դարերի ընթացքում և չնայած իր համասփյուռ գոյության անակնկալներին, մնացել է հրաշալի կերպով օժտված գեղարվեստի բոլոր դրսևորումներում: Երաժշտական առումով նա տեր է բազմազան, նշանակալի, մերթ նրբահյուս ու մերթ ողբերգական մի արվեստի, հիմնված գլխավորապես գեղջկական երաժիշտների վրա, որը մեկն է ամենաբնորոշ ժողովրդական արվեստներից: Ամիրաժեշտ էր, սակայն, որպեսզի ազգի վերջին աղետներից առաջ դրսևորվի նախաձեռնությունը մի ուսյալ-լուսավորյալ արվեստագործի, որը կարենար քաղել և ներկայացնել այդ արվեստի ամենաարժեքավոր կողմերը: Այդ արվեստագործը Կոմիտասն եղավ:

ԱՍԵՂԵ ԳԱՍՏՈՒԵ

Իրանսիացի երաժշտագետ
Կոմիտասական: Հ.2.- Ե., 1981, էջ 264-265

Փարիզի առաջին այցելումից է սկիզբ առնում նրա ստեղծագործական ձեռագրի որոշ բարեշրջումը. այն դառնում է ավելի եթերային, ավելի լուսավոր, և այդ ժամանակից ի վեր նա ի վիճակի է եղել այնքան հարազատորեն արտահայտել խոր հույզերը ժողովրդական երգերի, որոնց նա տվել է պոլիֆոնիկ ձև:

Ի միջի այլոց, բնավ հեշտ գործ չէ ֆոլկլորային թեմաներ ներդաշնակելը: Տգետները երևակայում են, թե ձիրքի տեր որևիցէ կոմպոզիտոր կարող է գլուխ հանել դրանից: Խոշոր մոլորություն: Իրականում հազվագյուտ են այն երաժիշտները, որոնք օժտված են թանկարժեք ունակությամբ՝ չաղավաղել ժողովրդական եղանակները, որ

նրանք զգեստավորում և շատ հաճախ էլ ... ծպտում են: Բայց Հայր Կոմիտասն օժտված էր այդ կախարդական հատկությամբ բոլորից ավելի:

ՇԱՐԼ ԿՅՈԿԼԵՆ

Ֆրանսիացի կոմպոզիտոր, երաժշտագետ
Կոմիտասական: Հ.2.- Ե., 1981, էջ 268

* * *

1899 թվի Բեռլինի միջազգային ընկերության սրահում Կոմիտասի կարդացած դասախոսությունը հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության մասին պիտի մնա անմոռանալի: Առաջին անգամ է, որ Բեռլինում այդպիսի մի դասախոսություն է կարդացվում և գուցե մինչև այժմ Փարիզի աշխարհանդեսում անգամ այսպիսի դասախոսություն չի կարդացվել:

ՕՍԿԱՐ ՖԼԱՅՇԵՐ

Գերմանացի երաժշտագետ , մանկավարժ
-Էջմիածին, 1969, N ԺԲ, էջ 20

* * *

Կոմիտասը աննման վարպետ է. նրա դաշնակունն աներևակայելի դժվար ու գունավոր է. նրա մեներգի ու խմբերգերի շարահյուսումներն անկարելի է գերազանցել:

ԱԼՈՒՍ ՍԵԼԻԱՇ

Գերմանացի երաժշտագետ , խմբավար
-Էջմիածին, 1969, N ԺԲ, էջ 20

* * *

Կոմիտասը իր ժողովրդի իսկական հանճարն է. նրա անունը սրբություն է բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների համար: Նրա իմաստուն և նուրբ, ուժեղ և երբեք չճչացող, խոր, ինչպես իր ժողովրդի հոգին, ստեղծագործության բյուրեղյա մաքրությունը բարձր են գնահատում աշխարհի երաժիշտները:

Կոմիտասի երաժշտությունը լավ գիտեր և սիրում էր իմ հայրը, որը

նույնպես իր կյանքը նվիրեց մարիական ժողովրդի երաժշտական կուլ-
տուրային:

Խոնարհվում եմ Կոմիտասի պայծառ հիշատակի առջև:

ԱՆԴՐԵՅ ԷՇՊԱՅ

Կոմպոզիտոր, դաշնակահար
-Էջմիածին, 1969, N ԺԲ, էջ 20

* * *

Ես երաժշտական վերլուծության եմ ենթարկել Կոմիտասի ստեղծա-
գործությունները և եկել եմ այն եզրակացության, որ Կոմիտասը հռչա-
կավոր արվեստագետ է: Ոչ միայն հայերը, այլ ողջ երաժշտական աշ-
խարհը կարող է հպարտությամբ արտասանել այդ անունը:

ՌՈՒԲԵՐՏ ԼԱԽ

Ավստրիացի երաժշտագետ, կոմպոզիտոր
-Էջմիածին, 1969, N ԺԲ, էջ 21

* * *

Ոչ ոք ինձ չի կարող մեղադրել չափազանցության մեջ, եթե ես
ասեմ, որ այդ համերգը (1906թ. Փարիզ) մի հեղաշրջում էր և իր հայտ-
նությանը զարմացրեց մեզ: Ներկա եղողներից ոչ ոք, ի բացառյալ
նուրբ գիտականերից, իրեն պատկերացնել չի կարող այդ արվեստի գե-
ղեցկությունը, որն ըստ էության ոչ եվրոպական է, ոչ արևելյան, բայց
եզակի է իր տեսակի մեջ: Սքանչելի քաղցրահունչ, խորապես հուզա-
կան, չափավոր քնքույշ այդ մեղեդիները նրբակերտ են ու ավարտված:
Ճկուն ու կենդանի ռիթմերի առատությամբ հարուստ երաժշտություն է
դա՝ կարծեք հենց սրտի խորքից հոսելիս լինի, որպես սառնորակ,
վճիտ, արևշող հոսանք: Նրա մեջ փայլատակում է արեգակը, սակայն
ոչ Արաբիայի և Պարսկաստանի կիզող արեգակը, ավելի շուտ երկնա-
յին ոսկեփայլ լույս է, որի ջերմությունը փայփայում, փաղաքշում է ծյու-
նածածկ լեռների գագաթը, անտառների կանաչը, առվակների խոխո-
ջը: Մարդկային հոգուն վիճակվել է իր ընդերքում պահպանելու այդ
ժպտադեմ երկրի հարազատ հողի մաքրությունը, նրա սերն ու հավա-

տը դեպի լուսավորը, դեպի կյանքը: Այդ պարզության անզնահատելի գանձարանը ... հոսել է մեզ անձեռնմխելի հիասքանչ երգի ձևով՝ որպես հոտավետ պայծառ ծաղիկներ:

ԼՈՒԻ ԼԱԼՈՒՍ

Ֆրանսիացի երաժշտական քննադատ

-Էջմիածին, 1969, N ԺԲ, էջ 21

* * *

... Ես օտարս, եթե փորձեմ ձեր ներկայությամբ Կոմիտասին փառաբանել, հավակնություն մի՛ համարեք այդ , այլ երեւակայեցեք, թե ես որդին եմ այն բազմաթիվ ֆրանսիացիների, որոնք Կոմիտասին լսեցին Փարիզում առաջին աշխարհամարտից առաջ եւ չկարողացան զսպել իրենց զարմանքն ու հիացմունքը:

* * *

Նրա կյանքին անդրադառնալիս, հիրավի, դժվարանում ես ասել, թե նրա մեջ ո՞րն է ավելի զարմացնում ու հիացնում քեզ. մա՞րդը, թե՞ երաժշտագետը: Որպես մարդ Կոմիտասը ազգասիրության անզուգական օրինակ է: Հայ մշակութային գանձերի որոնմանը նվիրած իր կյանքը Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստանի միջեւ հավասարապես բաժանած լինելով եւ հայկազյան լեզվի բոլոր բարբառների հանդեպ իր ունեցած գուրգուրանքով նա մարմնացնում է հայ ժողովրդի համազգային միասնականությունը:

ԺԱՆ-ՊԻԵՐ ՍԱՀԵ

Ֆրանսիացի հայագետ

-Նորք, 2002.- N 2, էջ 114, 117

* * *

Ես կզարմանամ Կոմիտասի արտակարգ ընդունակություններուն վրա: Խորապես թափանցելով ժողովրդական երգին էության մեջ, ան

այդ երգերը ներդաշնակած է հազվագյուտ ճաշակով և ճշգրտությամբ:
Այն բոլոր երգերը, որոնք ես անձամբ լսած եմ ուղղակի իրմե և կամ
ուսումնասիրած եմ, ամեն բանե առաջ կփաստեն, թե Կոմիտաս եզակի
դեմք մըն է որպես ներդաշնակող և որպես պոլիֆոնիստ:

ՎԵԼԵՇ ԷԳՈՆ

Ավստրիացի երաժշտագետ
-Էջմիածին, 1969, N ԺԲ, էջ 22





Ա.Մելիքյան, Կոմիտաս վարդապետ, Ա.Շահ-Մուրադյան

ԿՈՄԻՏԱՍԸ ՀՈՒՇԵՐՈՒՄ

(Պատառիկներ հուշագրություններից)

Հիշում եմ մի գեղեցիկ օր: Էջմիածնում հյուր էի Կոմիտասի մոտ. նստել էինք նրա փոքրիկ պարտեզում, ստվերաշատ տանձենու տակ: Կոմիտասը նոր էր գտել «Մոկաց Միրզան» և մշակել էր այդ էպիկական հուժկու երգը: Շատ ոգևորված և երջանիկ էր զգում իրեն այդ գյուտով: Կատարեց ինձ մոտ արվեստի բացարձակ կատարելությամբ: Անկարելի է նկարագրել այդ: Ես հիացած էի և նույնպես երջանկացած: Դեռ մինչև այսօր ես հոգուս մեջ տեսնում եմ ոգևորված Կոմիտասին և լսում նրա սրտաբուխ ձայնը: Կոմիտասը հրապուրել, հմայել էր ինձ:

-Այս երգը շատ հին է,- ասաց նա,- հեթանոսական դարերից, թերև: Տես ի՞նչ հզոր ձայներ կան, ի՞նչ խրոխտ շեշտեր: Մեր բարձր լեռներից, շառաչուն ջրերից, խոժոռ ժայռերից են ծագում ամել: Մեր քաջ նահապետների հոգուց է բխել այս առնական երգը: Այնքա՛ն հին է նա, որ անշուշտ Ձե՛նով Օհանը երգել է, Սասունցի Դավիթը լսել...

Եվ ուրախությունից փայլում էին նրա աչքերը: Մեր գյուղական ժողովրդից վերցրած երգը Կոմիտասը բյուրեղացրած վերադարձրեց նրան: Այդ երգը եկավ քաղաք, բարձրացավ բեմերի վրա, հաղթական հնչեց բոլոր հանդեսներում:

ԱԿԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Երկերի ժողովածու: Հ.5.- Ե., 1977, էջ 67-68

1899 թվականեն սկսյալ, երեք տարի շարունակաբար Կոմիտասին հետ պաշտոնավարած ենք Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Այդ ժամանակամիջոցին կապրեինք նույն սենյակին մեջ: Երեք տարի Կոմիտասին հետ օր ու գիշեր նույն երդիկին տակ ապրելով, մոտեն ճանչցա անոր նկարագրի գծերը...

Կոմիտաս մարդկային բացառիկ առաքինություններու ծով էր: Չափազանց աշխատասեր, աննկուն կամքի տեր, անկեղծ, բարեհոգի, ընկերասեր, քաղցր և համեստ՝ ամենուն նկատմամբ: Մաքրակրոն էր ան և մեծ հայրենասեր մը: Բացի իր երաժշտական հանճարեն, քովմտի

շնորհքներ ալ ուներ. բանաստեղծ էր և ճարտար կոմիկ դերասան մը, որ ֆարսի մեջ ալ մեզ հայտնի էր: Վերին աստիճան սրամիտ, կենսուրախ և պատրաստաբան էր Կոմիտաս և սիրված ճեմարանի մեծեն ու փոքրեն: Կոմիտաս բացառիկ դուրեկան ձայն մը ուներ և արժանացած էր Խրիմյան Չայրիկի մասնավոր համակրանքին, Խրիմյան Չայրիկի կարգադրությամբ, տոնական օրերը, Կոմիտասը կղեկավարեր դպրաց դասը և պատասխանատու էր խորանեն երգված սաղմոսերգություններու և ավետարաններու ընթերցման:

* * *

Կոմիտաս մեծ ընթերցասեր մըն էր, ուժեղ էր հայոց լեզվի մեջ, և հայոց պատմությունը շատ լավ գիտեր: Մասնավորապես կկարդար Մովսես Խորենացին և Նարեկացին, իսկ Աբովյանին «Վերջ Չայաստանին» կանվաներ իր մասունքը:

Կպատմեր, որ իր ուսանողական տարիներեն ան ընտրած էր իր կյանքի ուղին: Ան հաճախ կըսեր, որ «Երաժշտական չոր մասնագիտությունը ոչ մի բավարարություն չի ներկայացներ իրեն, իր միակ փափագը խորանալն է անոր մեջ»: Միշտ կըսեր, որ ժողովրդական բանահյուսությունը իր հոգվույն մեջ զուգընթաց էր ժողովրդական երաժշտության հետ: Եվ կավելցներ վստահ շեշտով մը. «Ես պիտի հասնիմ իմ բուն նպատակին - մեր հայ ժողովրդական երաժշտության գանձերը դուրս պիտի բերեն հայրենի ավերակներեն...»:

ՉՐԱՅԱ ԱՃԱՌՅԱԼ

Ժամանակակիցները Կոմիտասի մասին.

-Ե., 1960, էջ 75, 76-77

... Կոմիտասը դաշնակելուց առաջ երգի եղանակը զտում էր օտարամուտ տարրերից, որ և հեշտությամբ հաջողվում էր նրան, որովհետև Կոմիտասը քաջ ծանոթ էր ոչ միայն հայկական, այլև տաճկական, մեր արևելյան թուրքական, ինչպես և պարսկական եղանակներին: Այդ է պատճառը, որ նրա մշակած եղանակներն այնպես հարազատ են մեզ համար: Մեկ-մեկ նա երգում էր որևէ տաճկական երգ, ապա մեր հոգևոր

երգերից մեկը. թվում էր, թե այդ երկուսը միևնույն եղանակներն են: Բայց երբ նա հոգևոր երգերից հեռացնում էր օտար ազդեցությունը և առնում էր միայն հիմնական եղանակը, այն ժամանակ մեզ այնպես էր երևում, թե դա մի ժողովրդական երգ էր: Եվ իսկապես, նա անմիջապես երգում էր, և մենք իսկույն նկատում էինք մեր հոգևոր և ժողովրդական երգերի գրեթե նույնությունը:

Եվ Կոմիտասն այն կարծիքի էր, թե մեր հոգևոր երգերի եղանակները մեր ժողովրդական երգերի եղանակներն են:

ՍԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

Երկեր: Բ.Է.-Ե., 1975, էջ 434

Միջահասակ, նիհար, ջլուտ և զգայուն, դեմքը դեղնավուն, աչքերը արտահայտիչ ու վառվռուն, գլուխը ճաղատ, մորուքը ոչ «վարդապետավայել», այլ ծնոտի տակ միայն թողած, այսպես կոչված վագներյան, ինքը արագաքայլ և անհամբեր, միշտ շտապող, միշտ աշխատասեր, կյանքից գոհ, լավատես:

Այսպես էր Կոմիտասը:

Վանքում ապրում էր հին միաբանական խցերից մեկի մեջ, երկրորդ հարկը կազմող մի մեծ սենյակում:

Դաշնամուրի տեղակ նա իր կաբինետային աշխատանքները կատարում էր ֆիզիարմոնի վրա:

Չնայելով որ նրա սենյակը զարդարուն էր գորգերով ու նկարներով, բայց ինքն արվեստագետն ապրում էր, կարելի է ասել, սպարտական կյանքով, ուտելու մեջ պարզ ու չափավոր, չէր խմում ու չէր ծխում. քնում էր գարուն թե ձմեռ բաց պատուհանով և, որ գլխավորն էր, պառկում էր ուղղակի հատակի վրա, առանց ներքնակի ու բարձի: Նոտագրության մեջ մաքրասեր էր, գրում էր, իր իսկ տողած թղթերի վրա, այնպես որ նրա ձեռագրերից կարելի է ուղղակի կլիշե պատրաստել:

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

«Կոմիտաս» ժողովածու.- Ե., 1930, էջ 77-78

Մի անգամ, երբ ես իմ աշխատանոցում էի, խոհարարը եկավ, թե ոսկե զարդերով կառք կա կանգնած դռանը և քեզ են հարցնում: Վար իջա՝ տեսնեմ, կայսեր արարողապետ Իսմայիլ Ջանանի բեյը, որ կառքի միջից թուլյատվություն խնդրեց նկարներս տեսնելու:

Բարձրացանք մեր տան երկրորդ և երրորդ հարկերը, ու նա ուշի ուշով դիտեց բոլոր նկարները: Վար իջնելիս, երբ Կոմիտասի սենյակի դռան առջևից էինք անցնում, ասի որ չէի՞ք բարեհաճում Կոմիտաս էֆենդիին ծանոթանալ: Նա պատասխանեց. «Կուզեի, բայց կրնա ըլլալ որ խանգարեն»: Ասացի. «Բնավ չեք խանգարի» և Կոմիտասի սենյակի դուռը բանալով՝ ներս հրամցրի: Նրանք ծանոթացան և արարողապետը ոտքի վրա դիտեց այդ սենյակում կախված իմ նկարները: Սուրճ խմելուց հետո ինձ դարձավ՝ «Չեմ համարձակվում, ապա թե ոչ, պիտի խնդրեի Կոմիտաս էֆենդիին որևէ մի բան նվագել կամ երգել»:

Կոմիտասը լսելով այդ կամացույց և ֆրանսերենով ասված նախադասությունը, անմիջապես գնաց պիանոյի մոտ և ինքն իրեն ակորդներ վերցնելով՝ երգեց Շուբերտից գերմաներեն մի երգ, անչափ խորունկ զգացումով, որ մենք քարացել էինք: Նրա վերջացնելուց հետո էլ բավական ժամանակ լուռ էինք, երբ Թուրքիո դիվանագետը՝ ինքն իրեն չկարողանալով զսպել՝ ձեռքը սեղանին խփեց և ասաց. «Sapristi: (գրողը տանի) ութ հարյուր տարվա պետություն ենք և ցարդ այսպիսի մի արվեստի և արվեստագետների տաճար չունեցանք»:

Այդ սուլթանական գործեր վարող դիվանագետը մեկնեց սրտմտած: Իսկ նրա մեկնելուց հետո՝ ես շնորհավորեցի Կոմիտասին այդ հաղթանակի համար և վերկացանք երկուսս միասին «Լաչիմ նանա» պարեցինք:

Այդ պարը նա սովորել էր Կոտայքի Ղըրխբուլաղ գյուղում՝ ճեմարանի աշակերտ եղած ժամանակ:

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ

Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 190

Գեղեցիկ չէր: Նույնիսկ պիտի ըսեմ հակառակը՝ իր սև երկայն ռտենկոթին բռնագբոսիկ պաշտոնականությանը մեջ: Իր ոսկրոտ դեմքով ինծի կհիշեցներ Սոկրատի ինչ-ինչ դիմաքանդակները:

Պահ մը վերջը, սակայն, երբ տրվեցավ ինծի լսել իր մատներուն տակ հառնող առաջին ներդաշնակությունները դաշնամուրին ու մանավանդ իր արծակած առաջին երկարածիգ կանչերը մեր ամեհի ու քաղցր լեռներեն կարծես փրթած՝ խորհեցա վերստին Սոկրատին, բայց այս անգամ Պղատոնի այն էջին վերհիշումով, ուր Պղատոն զայն կնմանեցնե աթենացի քանդակագործներու աշխատանոցներուն մեջ տեսնվող այն խոշոր, տգեղ ու տարօրինակ «իլեն»-ներու քանդակներուն, որոնք պահոցներ են սակայն, կըսե, որ երբ բացվին աստվածներու վեհորեն գեղեցիկ արծանիկներ հայտ կբերեն:

ՇԱՀԱՆ ՌԵԹԵՆՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ

Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 83

Թե ի՞նչ ծավալ ուներ իր ձայնը, դժվար է ասել. մերթ հզոր տենորի տպավորություն էր անում, զիլ տարածուն, մերթ կարծես բարիտոն, նույնիսկ բաս, այնքան քնքուշ ու արտահայտիչ և մարդկային հոգին տակնուվրա անող, ու ազգին խոր ցավերը, հույզերը, ուրախությունները մարմնացնող, մերթ կարծես հառաչանքներ, հեծկլտանքներ էին ելնում նրա կրծքից, երբեմն էլ փայտի սղոցի ձայնի պես բան էր լսվում, կարծես իրեն կտրատում էին...

ՍԱՐԳՍԻՏ ԲԱԲՅԱՆ

Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 130

1914 թվի դպրոցական վերամուտին Կոմիտասը Բերա-Բանկալթիի Նիկողոսյան երկսեռ գիշերօթիկ և ցերեկօթիկ ազգային վարժարանի կողմն հրավիրվեցավ իբրև երաժշտության դասատու: ...Ան միշտ դասի ժամեն առաջ կուգար, և օգտագործելով մանուկներու զբոսանքի ժամերը, կհավաքեր զանոնք իր շուրջը և կերգեր ու կպարեր անոնց հետ: Իսկ երբ դասարան կմտնեին՝ այդ երեխաները այլևս նախորդ դասերու չարածիճի և անզուսպ երեխաները չէին, կարծես ուրիշ երեխաներ ըլ-

լային: Բավական էր, որ Կոմիտաս ըսեր. «Ուշադրություն, մանուկներ»,
և անոնք, կարծես մագնիսացած, կիետևեն անոր ամեն մեկ ցուցմուն-
քին: Ձվարթ տրամադրությունը Կոմիտաս կնկատեր երեխաներու
մտային և հոգեկան ընդունակություններու զարգացման նախապայ-
մանը, իսկ երեխաներուն մեջ այդ տրամադրությունը արթնցնելու հա-
մար անիկա օժտված էր բնական և մեթոդալուծիական բոլոր տվյալ-
ներով:

ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 262-263

Ժողովրդական երաժշտության մարզում ևս Հայր Կոմիտասը ան-
խոնջ հավաքում էր գեղջկական երգերը՝ այնքա՛ն համով-հոտով: Որ-
քան հետաքրքրությամբ էին լսվում նրա զվարճալի պատմությունները,
ուր նա քողազերծ էր անում իր խորամանկությունները, որոնց նա եր-
բեմն ստիպված էր եղել դիմել, որպեսզի չխրտնեցնի գեղջուկ երգիչնե-
րին թփերի տակ թաքնվելով կամ պառկելով գյուղական մի կտրին՝
այնտեղից ձայնագրելու համար բակում երգվող ու հորինվող խոսք ու
երաժշտությունը: Հաճախ մի որևիցե տոնի կապակցությամբ հավաք-
ված գյուղացիների բազմությունը նրան առիթ էր ծառայում հետա-
քրքիր ձայնագրումների: Օրինակ՝ Վարդավառի հանդիսություններին՝
Վաղարշապատում և Սուրբ Էջմիածնում, կամ Հովհաննես Մկրտչի
հռչակավոր ուխտագնացության ժամանակ՝ Մուշում:

ԱՄԵՂԵ ԳԱՍՏՈՒԵ

Կոմիտասական, հ.2, էջ 262.





Կոմիտաս, 1890թ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍԻՆ

Եղիշե Չարենց

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (Հատվածներ)

Դ

Հայրենի երգ իմ վսեմ,
Հազարամյա՛ մեր հանճար, -
Լոկ ժողովուրդն է հյուսել
Քո դաշնությունը պայծառ, -
Քեզ ժողովուրդն է խոնարհ
Տառապանքով իր ծնել,
Իր ավյունով պահել վառ,
Իր ոգու մեջ ընդունել...

Զ

Հնչյուններ ես հավաքել
Հենքի համար քո երգի
Դու՝ հանդերից մահաբեր
Հայրենական եզերքի.-
Եվ հայրենի հանդերի
Մրմունջներից չմարող
Հյուսել ես երգ անթերի
Սերունդների համար նոր: -

ԼԴ

Ո՛վ հայրենի մեր երգի
Հրե հանճար տառապած
Դու չտեսա՛ր քո երկրի

Արշալույսը փառապանծ...
Իբրև աճյունն դու եկար,
Իբրև մեռած տարագիր, -
Հին դաշնության դու վկա
Եվ առաջին քարակիր ...

ՃԼԶ

... Միջագետքից-Օրենբուրգ,
Հելլենսպոնտից մինչև Վան, -
Ո՞ր աշխարհում արդյոք սուրբ
Չկա մասունք նաիրյան...
Ո՞ր ավերով աշխարհի
Քո մերկ ոտքերը չանցան, -
Օ՛, նաիրյան հանճարի
Հագարամյա Սերմնացան ...

ՃԽԲ

Կխաղաղվի՛ վերջապես
Խոնջած աճյունը քո հար –
Դարձած մոխի՛ր կենսաբեր,
Դարձած ավյուն, դարձած քար: -
Անէացած, սրբացած
Կապրի ոգիդ հմայող՝
Դարձած ելնո՛ղ երգի ձայն-
Եվ հայրենի՛ դարձած հող...

Չարենց Ե. Անտիպ և չիավաքված երկեր.-
Ե.: ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1983, էջ 306-307, 314-315, 342, 344

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Ոչի՛նչ չեմ փոխի քո մեկ երգի հետ,
Իմ կյանքն է կապված քո մեկ երգի հետ,
Ամենից չքնաղ, ամենից շքեղ
Արև՛ն է զուգված քո մեկ երգի հետ:

Թոթովենց Վ. Երկեր: Երեք գրքով.-
Գիրք 1.- Ե., 1988, էջ 34

ԿՈՄԻՏԱՍ

Կոմիտաս, ինչպես սիրածից, քո երգից ես չեմ կշտանում,
Թվում է իմ Արագածի հեռավոր հովերն են գալիս, -
Թվում է դեռ պանդուխտ եմ ես ու երգդ ինձ տուն է տանում,
Ու դեմից Սևանն է կանչում, կարոտած իմ յարն է լալիս:

Երգիդ մեջ ձեռքով է անում ինձ հեռվից ծիրանի մի ծառ,
Բուրում է փոշոտ ճամփեքիս ձյունաշող, ծեր փշատենին,
Բլուրին վանքն է աղոթում, դռանը՝ մատաղի մի գառ,
Ու ձորում, ճերմակ հոնքերով ջաղացն է ննջում գետափին:

.....
Դու մեր հին վշտերի մորմոք, մեր սիրո ծիրանի դու ծով,
Կոմիտաս, թե մթին հեռվում հալվի էլ Մասիսն իմ անհետ,
Դու նորից Մասիս կմնաս մեր երգի նուրբ շշնջոցով,
Աշխարհի ծովերը մտած դու հայոց մայր մրմունջի գետ:

Շիրազ Յ. Երկեր: Ի.1. - Ե.: Սովետ. գրող.- 1981, էջ 176

ԲԵՅԹ՝ ԿՈՄԻՏԱՍԻՆ

Աշխարհի ծովը մտած դու հայոց մրմունջի գետ.-

Պանդուխտին դու տուն բերող անուշ ծուխ հայրենի տան...

Նույն տեղում, էջ 183

Պարույր Սևակ

ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ (Հատված պոեմից)

Դու Ամենայն Հայոց երգի Վեհափառն ես,

Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,

Գիրն ու տառն ես Հայոց երգի:

Հայոց երգի

Անձիր հերկի

Եվ ակոսն ու խորունկ առն ես,

Եվ մատնընտիր սերմը նրա,

Եվ խոստունը գալիք բերքի...

Եվ ծիրանի մեր այն ծառն ես,

Որ ինչքան էլ ճղակտոր՝

Շտկվել է և բար տվել,

Ու... մեր դարդը իրար տվել...

...Դու՝ մեր տավիղ,

Եվ քո լարը

Մինչև անգամ և հատվելիս

Հայերեն է նորից ճնգում:

Դու՝ մեր սրտի ձայնալարը,

Մինչև անգամ վհատվելիս

Հայերեն ես դարձյալ տնքում ...

Դու ես քարը

Եվ սրբատաշ մեր պատշարը.

Հացը օրվա

Եվ նեղ ժամի մեր պաշարը.

Մեր փակ հոգին, բաց աշխարհը,

Սրբագործված մեր նշխարը.

Եվ մեր ճարը՝

Օտարամուտ ախտի դիմաց.

Խնկածավալ մեր տաճարը՝

Օտարահոտ աղտի դիմաց.

Վերադարձի մեր պատճառը՝

Մեր հարկադիր գաղթի դիմաց.

Համահավաք մեր հանճարը՝

Ազգասփյուռ բախտի դիմաց...

Դու մեր հաստատ Մասիս սարը՝

Վստահելի թիկունքն ես մեր,

Մեր երգերի ծովասարը

Ու բյուրակյան ակունքն ես մեր,

Մեր արնոտված հավքի լեզուն,

Մեր կարոտած ֆիդան յարը,

Մեր լեփլեցուն հոգիների ձայնատարը,

Մեր երգերի խազը-նոտան-ձայնատառը,

Ձայնասրփյուռը կենդանի

Ու ձայների թանգարանը, -

Մեր հայկական երգարանը ...

Արտը մեզնից՝ դու ես մաճկալ,

Հարդը մեզնից՝ դու ցորենը,

Հարթը մեզնից՝ կատար դու սեզ.

Լուրթը մեզնից՝ երկինքը դու,

Շուրթը մեզնից՝ դու համբույրը,

Ցուրտը մեզնից՝ իսկ դու՝ կրակ,

Իսկ դու օջախ,

Իսկ դու թոնիր ...
Եվ մեզանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչքուն՝ըը,
Այս խաչքունը՝ քո իսկ հերկի:
Ընդունիր դո՛ւ, դու՛ մեր երգի
Մշտահնչուն նվագարան.
Ընդունիր դու՛ մեր ցաքուցիր
Մասունքների հավաքարա՛ր.
Դու՛ խազերի մեր քերական,
Դու՛ հոգևոր մեր շարական.
Դու՛ սրբազան մի ավազան,
Որ մեր հոգին ախտահանեց.
Դու՛ բիբլիական մի գավազան,
Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց.
Դու մեր կարոտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտարթուն,
Անլռելի զանգակատուն ...

Սևակ Պ. Երկերի ժողովածու 3 հատորով:
Հ.2. - Ե., 1983, էջ 243-246

Համո Սահյան

ԿՈՄԻՏԱՍ

Քո երգերի մեջ գութանի վար է,
Ծիրանի ծառ է ու խնկի ծառ,
Սիրավոր լոր է ու Սոնա յար է,
Թուխ այտի խալ է ու ծնկի ծալ:

Մոր լցված աչքը որդու գալուն է,
Շենքի քարին է զրկված հարկի, -
Անպոտ երկինք է, ձյունոտ գարուն է,
Կուց-կուց արյուն է արոր հավքի:

...Այսպես է երգը ... Երգը հնչում է,
Ու ներշնչվում են ցամաք ու ծով,
Մի բուռ երգի մեջ ապրում, շնչում է
Անդարձ աշխարհին իր անցուդարձով:

Սահյան Գ. Երկերի ժողովածու 2 հատորով.

Գ. 2. - Ե.: Գայաստան, 1976, էջ 57-58

Գևորգ Էմին

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Երբ ժողովուրդն է հավատացյալ
Էջմիածի՛ն էր գնում ուխտի,
Լոկ դո՛ւ Աստժո տեղն իմացար, -
Ուխտ գնալով ... ժողովրդի՛ն:

Էմին Գ. Երկերի ժողովածու 2 հատորով.

Գ.1., Բանաստեղծություններ. –

Ե., 1975, էջ 45

«ԷՐՎՈՒՄ ԵՄ, ԷՐՎՈՒՄ»

Ես նրան տեսա իր մոլեգնության գերագույն պահին.
Հևհևն ռիթմից դեմքը փոխված էր՝ այլալված, դեղնած.
Ականջը դոփող եղանակի տակ մի անմարդկային ծռմբվում էր նա:
Իսկ երբ ցավագար պատեֆոնն արդեն մարեց շնչաբեկ,
Դեռ քրտնաթաթախ երգապնակը ես ձեռքս առա.
Երգապնակը ... նրա երեսին տնաբույս մի ձեռք
Խն ռոկ-ըն-ռոլլի ծայնագրությունն էր կացրել բարակ:
Թաղանթի տակից մեր գրերն էին մանրիկ երևում,
Մեր երգն էր այնտեղ՝ «Էրվո՛ւմ եմ, էրվո՛ւմ» ...
Մթնեցին ասես աչքերս հանկարծ,
Սեղմվեց հոգիս վիրավորանքից, զայրույթից, ցավից.
Թվաց, որ այստեղ, այս սենյակներում
Իմ Կոմիտասը՝ հրից ու սրից հագիվ փրկված՝
Մի երրորդ անգամ մեռնո՛ւմ է դավից...

...Ո՛չ, կանգնիր, կանգնիր,
Մի՛ թողնիր, որ մեղկ այդ ալիքները կեսգիշերային՝
Օվկիանոսների այն ափից եկած,
Քեզ՝ քաշած իրենց ալեպտույտում՝ պոկե՛ն քո ծառից,
Եվ դու ճյուղի պես մի հողմահալած՝
Անտուն, անարմատ հածե՛ս աշխարհով,
Չորանաս, ընկնես հեռու մի հողում:
Մի թողնիր, որ այն, ինչ որ դարերում
Չկարողացավ թշնամին անել ջարդով ու սրով,
Արվի խոսքերի փաղաքուշ փայլով,
Ժպիտով սիրուն,
Երգով, համբույրով ու գուրգուրելով...

Պոկիր, շուտ պոկիր երգապնակից
Կրակե շապիկն այդ կանաչավուն.
Լսու՞մ ես, օտար թաղանթի տակից
Ջարագատ մի ձայն կանչում է ցավով, -
«Էրվո՛ւմ եմ, էրվում »...

Կապուտիկյան Ա. Երկերի ժողովածու
2 հատորով.- Բ.1. - Ե., 1974, էջ 408-409

Վիկտոր Կոչևսկի

ԷՋՄԻԱԾԻՆ

(Հատված)

Ես հավատում եմ, շա՛տ եմ հավատում
Մեծ Կոնիտասի երգին սրբազան,
Որին քշեցին կառափնատուն,
Բայց անգոր եղան և խաչ և զազան:
Նրա մեջ ահա, թախծոտ այդ երգի,
Էջմիածինը իր վիշտն էր ողբում,
Եվ ցավն էր ողբում դարավոր վերքի,
Որ ցասունի էր փոխվում օրնիրուն:
Այս երգը կապրի հավետ անթառամ,
Կհասնի ամեն մարդու ականջին,
Ժիժեռնակները երամ առ երամ
Տուն կգան նորից նրա ջերմ կանչին:

Թարգմ. Վ. Բաբայան
Գարուն ա... -Ե., 1969, էջ 80

Մամեդ Ռահիմ

ԱՐԱՐԱՏ

(Հատված)

Պատմիր ինձ, ով Արարատ, թե թուրքիայում քանի՞ նոր
Կոմիտասներ են թաղել – շուրթերին երգ անավարտ,
Քանի՞ նայրեր Ջոհրապի մահն են սգուն անեն օր,
Քանի՞ Սուբհի են խեղդել ... Պատմիր ինձ, ով Արարատ:

Թարգմ. Յ. Սահյան

Գարուն ա... Ե., 1969, էջ 59

Պավլո Տիչինա

ԿՈՄԻՏԱՍ

Սարի վրա սև անպ գոռաց,
Կայծակ տվեց ձորակուն,
- Գարուն ա ու ձյուն ա արել,
Կոմիտասն է հեկեկուն:
Կանցնեն անպեր, սև, տխրագին,
Նորից կգան նոր ցավեր,
Ու կցոլան երկնում կրկին
Արյան գույնի բյուր աստղեր:
Ժամանակի միջով կանցնի
Երգը նրա ալեկոծ,
Կոմիտասի հետ կլացի
Հողը հայոց՝ կրծքին խոց:

Թարգմ. Ս. Մուրադյան

Սովետ. Հայաստան, 1978, N 6, էջ 28

ԵՐԵՔ ԵՐԳ ԿՈՄԻՏԱՄԻՆ

Գ

Ապրողներ, դուք իմ երգը լսելիս,
Խնդրում եմ՝ հիշեք և չմոռանաք.
Ինձ սպանեցին թշնամիքը բիրտ
Ու վայրագությունն ամենավայրագ:
Եթե ապրում եմ թշնամանքը դեռ
Եվ վայրագությունն իր չոր վայունով,
Հիշեք, նրանք իմ տունը քանդել,
Ողողել երգս իմ իսկ արյունով:

Ես չեմ մոռացել.

Ձյունի վրա սև խանձողներ կային:
Եթե աշխարհում մարդասպան կա դեռ,
Հիշեք, որ նա է ինձ մատնել մահին...
Անձրևն արյուն էր, արյունը՝ անձրև:

Ես մեկն եմ միայն անթիվ զոհերից:
Հիշեցեք անցած փորձանքները դուք,
Բոլոր զոհերին հիշեցեք նորից,
Որ կանխեք ամեն արհավիրք ու բուք:

Ապրողներ, լսեք, աստված հայերին
Չար բախտ էր տվել ու նենգ հարևան,
Դրա համար դարձա սև մահվան գերին
Ես – Կոմիտասս հայոց երգահան:

Էլ սարսափ չունեն, պառկած եմ հողում,
Էլ չունեն տանջանք, տխրություն ու վիշտ
Լոկ ապրողների համար եմ դողում
Ես – Կոմիտասս հայոց երաժիշտ:

Բալկարերենից թարգմ. Յ. Սահյան
Գարուն ա ... - Ե., 1969, էջ 69-70

* * *

Կոմիտասի կյանքը և գործը ներշնչման աղբյուր է եղել բազմաթիվ բանաստեղծների համար: Գրվել են պոեմներ, բալլադներ, բանաստեղծություններ: Կոմիտասի նկատմամբ իրենց սրտի խոսքն են ասել նաև տարբեր ազգերի բանաստեղծներ:


«Գարուն ա...» ժողովածուն (Ե., 1969), որը կազմել և խմբագրել է Գևորգ Դևրիկյանը, իր մեջ ամփոփում է հայ և այլազգի բանաստեղծների գործեր:

Բացի վերը նշված հեղինակների գործերից ժողովածուում տեղ են գտել Գուրգեն Մահարու, Նաիրի Ջարյանի, Գեղամ Սարյանի, Արման Կոթիկյանի, Կոստան Ջարյանի, Սարմենի, Վահրամ Ալազանի, Սողոմոն Տարոնցու, Վահագն Դավթյանի, Շերամի, Մարո Մարգարյանի, Լևոն Միրիջանյանի, Արսենի Տարկովսկու, Գեորգի Լեոնիձեի, Ամինե Ավդալի և ուրիշների բանաստեղծությունները:

Պարբերական մամուլում և տարբեր ժողովածուներում տպագրվել են բազմաթիվ բանաստեղծություններ, որոնց մի մասը ներկայացնում ենք ստորև:



Էջմիածին, 1901թ.



Սողոմոնը երգում է «Լույս զվարթ» շարականը: Դրվագ Գ.Խանջյանի նկարազարդումներից Պ.Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի համար

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՄԻՏԱՍԻՆ

(Մատենագիտական համառոտ ցանկ)

ԱՔՐԱՀԱՄՅԱՆ Ս. Երգերի արքան: (Հատվածներ «Կոմիտաս» պոեմից)

//Գրակ. Ադրբեջան, Բաքու, 1969, N 6, էջ 28-29:

ԱՃԵՄՅԱՆ ԻՐՄԱ: Կոմիտասի վերածուիլ: /Աճեմյան Ի. «Տալ միայն»

գրքում.- Իսթանպուլ, 1975, էջ 11-12:

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ե. Կոմիտաս //Սովետ. դպր., 1969, 19 նոյեմբ.:

ԽԱՐԱԶՅԱՆ ՍԱՐԳԻՍ: Կոմիտասին //Սովետ. գրակ., 1969, N10, էջ 39:

ԲԱՆԴՈՒՐՅԱՆ ԳԱՐԻԿ: Կոմիտաս: /Բանդուրյան Գ. «Օազիս» գրքում.-

Ե., 1987.- էջ 16:

ԲԵԳԼԱՐՅԱՆ ՀՐԱԶՅԱ: Կոմիտասին: /Բեգլարյան Հ. «Գետերը չեն

հոգնում» գրքում.- Բաքու, 1981.- էջ 90-91:

ԲՈՒՆՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ: Կոմիտաս: /Բոլորչյան Թ. «Ամռան լուսաբաց»

գրքում: Ե., 1975.- էջ 107-108:

ԳԱՍՏԵԱՆ ԳԱՌՆԻԿ: Ներբողներ Կոմիտասին: /Գալստեան Գ. «Ժամա-

դրուքին աշխարհի հետ» գրքում.- Լոս Անճելըս, 2007.- էջ 88:

ԳԱՐԱՅԵԱՆ ՀՈՒՐԻ: Երգը ինձի համար: //Խօսնակ., Լիբանան.- 2000.-

սեպտ.-հոկտ.- էջ 43:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՔԱԶԻԿ: Կոմիտաս: (Լիրիկական պոեմ) /Գրիգորյան Ք.,

«Կանչ հնձան» գրքում.- Ե., 1973.- էջ 143-148:

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ: Կոմիտաս: /Երկերի ժողովածու 2 հատորով: Հ.2.-

Ե., 1975.- էջ 213-225:

ԶԱՀՐԱՏ: Կոմիտաս //Հայրենիքի ձայն, 1972, 12 ապր.:

ԶԱՐԵԱՆ ԿՈՍՏԱՆ: Կոմիտաս վարդապետին //Յառաջ, Փարիզ, 1994.-

14 հոկտ.:

ԶԱՐՅԱՆ Ն. Կոմիտաս //Հայրենիքի ձայն, 1969, 19 նոյեմբ.:

ԷՄԻՆ Գ. Կոմիտասն աքսորի ճամփին //Սովետ. գրակ., 1969, N 10, էջ

27-28:

ԽԱՉԱՏՈՒՐ ԳԵՎՈՐԳ: Կոմիտաս: /Խաչատուր Գ. «Երգը թռչուն է»

գրքում.- Ե., 1974.- էջ 27:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳԵՎՈՐԳ: Կոմիտասի հիշատակին (Զարդաքանդակ-

ներ) //Յորիզոն.- 2003.- 3-9 հոկտ.- ք. 32.- էջ 5;

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԱՅԻՏ: Կոմիտաս: /Կիրակոսյան Ա. «Արևածաղիկ» գրքում.- Ե., 1978.- էջ 14-15:

ԿՈԹԻԿՅԱՆ ԱՐՄԱՆ: Կոմիտաս: /Կոթիկյան Ա. «Ակոսներում» գրքում.- Ե., 1965.- էջ 21; Կոթիկյան Ա. «Խուրեցի Յովնան» գրքում.- Ե., 1946.- էջ 56:

ԿՈՆՈՄԻՏՑ ՎԱՂԴԻՄԻՐ: Կոմիտասի հիշատակին: //Թարգմ. Ա.Ավագյան.- Գարուն, 1980, N 4, էջ 36:

ԿՈՄԻՏԱՍԱԿԱՆ: (Ե.Չարենցի, Յ.Շիրազի, Գ.Մահարու, Կ.Ջարյանի, Պ.Սևակի, Ն.Ջարյանի, Ա.Կապուտիկյանի, Գ.Էմինի, Ա.Վշտունու բանաստեղծությունները նվիրված Կոմիտասին) //Սովետ. Հայաստան, 1969, 16 հոկտ.:

ԿՈՒԼԻԵՎ Կ. Մաղում է ծյունը //Ավանգարդ, 1969, 18 նոյեմբ.:

ՀԱԿՈՔՅԱՆ Կ. Հավերժի ձայնը //Երեկոյան Երևան, 1969, 20 նոյեմբ.:

ՀՈՎԵՆՑ Մ. Կոմիտասի արձանի առջև //Գրակ. թերթ, 1969, 14 նոյեմբ.:

ՄԱՀԱՐԻ Գ. Կոմիտաս: Երգ Կոմիտասին //Սովետ. Հայաստան, 1969, 16 հոկտ.:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Ս. Կոմիտասին //Գրակ. թերթ, 1971, 30 հուլիսի:

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅԱ: Կոմիտաս: //Մարգարյան Ա. «Դու ինձ սպառում էիր» գրքում.- Ե., 1975.- էջ 99-100:

ՄԵՏԱՔՍԵ: Քարե աղբյուր: //Մետաքսե «Զրույց աշխարհի հետ» գրքում.- Ե., 2007.- էջ 261-262:

ՄԻՐՉՈՅԱՆ ՕՖԵԼՅԱ: Անմար հուր: /«Վեցածայն խմբերգ» (Բանաստեղծ. ժողովածու) գրքում.- Թբիլիսի, 1977.- էջ 72-73:

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Ն. Կոմիտասն է երգում //Սովետ. Հայաստան, 1969, 21 նոյեմբ.:

ՇԱՀԵՆ: Կոմիտաս: /Շահեն «Գուսան Հայաստանի» գրքում.- Ե., 1964.- էջ 39:

ՇԵՆՈՒԿԵԱՆ ՄԻՀՐԱՆ: Երգը: //Խօսնակ., Լիբանան.- 2000.- սեպտ.- հոկտ.- էջ 42-43:

ՉԼՈՅԱՆ Ս. Կոմիտասին //Սովետ. Հայաստան, 1969, 23 փետր.:

ՊԱՐՍԱՄՅԱՆ Ա. Կոմիտասին //Հայրենիքի ձայն, 1971, 27 հունվ.:

- ՍԱՐՄԵՆ:** Երգ անճահողթյան //Սովետ. Հայաստան, 1969, 20 նոյեմբ.:
- ՎԵՍՊԵՐ Մ.** Սոնետ հիացման //Գրակ. թերթ, 1970, 13 փետր.:
- ՎՇՏՈՒՆԻ Ա.** Կոմիտասին //Սովետ. Հայաստան, 1969, 16 հոկտ.:
- ՏԻԶԻՆԱ Պ.** Կոմիտաս /Թարգմ. Ս.Սուրադյան //Սովետ. Հայաստան, 1978, N 6, էջ 28:
- АХУМЯН Т.** Песни могучего сердца //Комсомолец, Ереван, 1969, 19 нояб.
- ЗАРЯН К.** Комитас /Пер. с арм. Л.Григорян //Лит. Армения, 1969, N10, с.3-4.
- ЗАРЯН Н.** Квартет имени Комитаса /Пер. с арм. С. Липкин //Лит. Армения, 1969, N10, с. 14-15.
- КАРЕНЦ В.** В твоих песнях /Пер. с арм. Н. Саакян //Лит. Армения, 1969, N10, с. 15-16.
- КАРЕНЦ В.** Поешь ты в каждой душе. /Пер. с арм. Н. Саакян //Коммунист, 1969, 20 нояб.
- КУЛИЕВ К.** Комитас //Комсомолец, Ереван, 1969, 14 дек.
- МАРГАРЯН А.** Комитас. /Пер. Я.Сарпин.- Коммунист, 1969, 22 окт.
- ПОЛЯКОВ Н.** Комитас //Лит. Армения, 1980, N3, с.57.
- ПРЯНИШНИКОВ Д.** Выдающийся армянский композитор //Совет Молдавия, 1969, 8 окт.
- РУХКЯН М.** Подвиг Комитаса //Комсомольская правда, 1969, 21 нояб.
- САРМЕН.** Комитас /Пер. С. Шервинского //Коммунист, Ереван, 24 авг.
- ТЕРЬЯН М.** Родоначальник армянской полифонии //Коммунист, Ереван, 1969, 20 нояб.
- ЧАРЕНЦ Е.** Звонкой песни разлив. /Пер. В.Рогова //Коммунист, 1969, 21 нояб.
- ЭМИН Г.** Комитас в пустыне. /Пер. с арм. И.Сельвинской //Лит. Армения, 1969, N10, с.4-5.

Կոմիտասի բանաստեղծությունները, անկախ գեղարվեստական արժեքից, նրա նուրբ հոգու, քնարական մտածողության, իրողությունները յուրովի ընկալելու և արտահայտելու վկայություն են: Կիրատարակե՞ր, արդյոք, իր բանաստեղծությունները Կոմիտասը, եթե ողբերգական ճակատագիր չունենար, թե՞ դա զուտ ինքնադրսևորման «թաշուն» ձև կմնար: Դժվար է ասել:

Բանաստեղծական ներքոհիշյալ փունջը ներկայացնում ենք, քանի որ ամեն մի մասունք յուրովի է բացահայտում մեծն Կոմիտասին:

ԿՈՄԻՏԱՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

(Նմուշներ)

ԱՂԵՐՍ

Կա՛ց, Տե՛ր, Տե՛ր իմ,
Բա՛ց, Տե՛ր, սե՛ր իմ.
Զարկին դևեր
Իմ թևեր.
Տո՛ւր, Տե՛ր,
Հո՛ւր, Տե՛ր,
Որպես խոտեր
Էլ չըդդղան
Իմ ոտեր...

ՃԱՆԱՊԱՐՀ

Բարակ ուղին սողալով,
Ոտի տակին դողալով...
Ճամփի ծայրին բուսել է
Կյանքի ծառը շողալով:

Ի՛նչ լայն սիրտ է, որ ունի
Այս ճանապարհին Աճիունի...
Մարդու, բույսի, գազանի
Եվ թևավոր թռչունի:

* * *

Անուշ գարուն՝
Ծաղիկ, բողբոջ,
Զվարթ առուն՝
Կայտառ խոխոջ,
Կանաչ դալար,
Ծիծաղ ցողիկ,
Վտակ դալար,
Դուք ո՞ւր թողիք:

ԵՌ ՈՒ ՍԵՐ

Երկիրը եռուն է՝ կողիկը գոցելով՝ ծաղիկ-ծաղիկ,
Առվակը սիրուն է՝ հողիկը խոցելով՝ մաղիկ-մաղիկ,
Վարդիկը ջեռուն է՝ շողիկը բոցելով՝ լըռիկ-լըռիկ,
Յովիկը ծիրուն է՝ լողիկը ծոցելով՝ ջըռիկ-ջըռիկ:

ԻՄ ԵՐԱԶՈՒՄ

Եվ այս գիշեր, իմ երագուն, քեզ հետ մեկտեղ
պարեցինք,
Մեր-ոգիներ սուրբ սեղանին մողրամոմեր շարեցին:
Ոսկի-արծաթ ամպի ծալեն նուրբ ու բարակ քող
ճարեցինք,
Ինծի-քեզի կարմիր-կանաչ սիրո շապիկ կարեցին:

ԱՂՈԹՔ

(Նվեր օրհորդ Լուիզ Գավուքչյանին)

Վա՛րդ, դու կաթե՛ կարմիր ոգիդ,
ճերմակ շուշան՝ սիրտ ու հոգիդ,

Մանուշա՛կ
Անուշակ՝
Գուրգուրե
Ու բուրե:

Տո՛ւր, սուսունիկ՝ ոսկի արև,
Յո՛ւյս անթառամ՝ կյանք հարատև:

Օրե օր
Նորե նոր

Հար գարուն
Ձարդարուն:

1914, 25/ԺԱ, Կ.Պոլիս

Եվ ա՛յս գիշեր, քո երազում, տեսել ես, որ ես ու դու՝
Երես-երես ճանաչել ենք սիրո ծովում իրարու...

«Կոմիտաս: Փռշուր մը: Քնարերգություն» գրքից.- Ե., 2004




ժպտի մաս կարճանձեղնե Բ, Է՛ և Բ՛:

արեղ սան իմ թարթի լիճ րեճել:

Այսին թիւան արեւիցի Ժ՛ իմ կարճանձեղնե:

Ժ՛ կրթի լայնաւոր, ինքնուր Է



Սի էջ «Հայ գեղջուկ երաժշտութիւն» ուսումնասիրութեան ինքնագրից

ԿՈՄԻՏԱՍԻ ԳՐԻ ԱՌԱԾ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԵՐԳԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԿԵՐԻ Ժողովածու (Խմբ. հանձնաժող. Ռ.Ա.Աթայան և ուրիշն. - Ե.: Հայպետհրատ, 1969.- Վերնախոր.՝ Հայկ. ՍՍՀ Գիտ. ակադ., Արվեստի ին-տ.

Հ.1. Մեներգեր*: Ներածութ. և ծանոթագր. Ռ.Ա. Աթայան.- Ե., 1969.- 188 էջ:

Բովանդ.՝ **ՀՍՄՀ Գիտ. ակադ. Արվեստի ինս-ի կողմից; Խմբագրի կողմից - Մեներգեր դաշնամուրի նվագակցությամբ**; 1. Հով արեք; 2. Հաբրբան; 3. Երկինքն ամպել է; 4. Անտունի; 5. Գարուն ա; 6. Ծիրանի ծառ; 7. Քելեր, ցուլեր; 8. Քելե-քելե; 9. Սար, սար; 10. Կանչե կռունկ; 11. Ես սարեն կուգայի; 12. Ջինչ ու զինչ; 13. Ալագյազ (սարն ամպել է); 14. Խնկի ծառ; 15. Ալ այլուդս; 16. Կուժն առա; 17. Կաքավի երգը; 18. Չեմ կրնա խաղա; 19. Շողեր ջան; 20. Չինար ես; 21. Ես առուն; 22. Ալագյազ (բարձր սարին); 23. Հոյ Նազան; 24. Գարուն; 25. Կռունկ; 26. Ամպել ա կամար-կամար; 27. Ես աղջիկ եմ; 28. Էրվում եմ; 29. Տուն արի; 30. Գութանը հաց եմ բերում; 31. Ողբերգ; 32. Լուսնակը սարի տակին; 33. Ես գիշեր լուսնակ գիշեր; 34. Ջուր կուգա վերին սարեն; 35. Լե, լե, յանան; 36. Շախկըր-շուխկըր; 37. Ծիծեռնակ; 38. Ախ, մարալ ջան; 39. Օրօր; 40. Մոկաց Միրգա:

Հավելվածներ; 1. Կուժն առա (Ա, Բ); 2. Չեմ կրնա խաղա; 3. Շողեր ջան; 4. Չինար ես; 5. Ես առուն (Ա, Բ, Գ, Դ, Ե); 6. Տուն արի; 7. Գութանը հաց եմ բերում; Հատված «Հայ քնար»-ի առաջաբանից; «Հայ քնար միաձայն գեղջուկ երգերի» Ա տասնյակի նախաբանը; Հատված «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանի Ա հիսնյակի ծանոթությունից; Հատված «Հազար ու մի խաղ» Բ հիսնյակի ծանոթությունից; - ծանոթագրություններ - Ռ.Աթայանի:

Հ. 2. Խմբերգեր*: Խմբ. Ռ.Ա. Աթայանի.- Ե., 1965.- 280 էջ:

Բովանդ.՝ **Խմբագրի կողմից; Խմբերգեր**; 1. Իմ չինարի յարը; 2. Գարուն ա; 3. Գութաներգ; 4. Անձրևն եկավ; 5. Սարերի վրով; 6. Երի, երի ջան; 7. Լուսնակն անուշ; 8. Շողեր ջան; 9. Առավոտուն բարի լուս; 10. Շորորա, Անուշ; 11. Հով լինի; 12. Կուժն առա; 13. Սարեն ելավ; 14. Գնա, գնա; 15. Օրօր, Ադինո;

* 1969-2006թթ. լույս են տեսել Կոմիտասի երկերի ժողովածուի 14 հատորները: Դրանցից 1-ին հատորը հրատարակված է եղել նաև 1960-ին, 2-րդը՝ 1965-ին:

16. Սոնա յար; 17. Խունար պառկե; 18. Քաղիան; 19. Կաքավի երգը; 20. Հոյ, նազան իմ; 21. Ախ, մարալ ջան; 22ա. Ալազյազ /Ա./; 22բ. Ալազյազ /Բ./; 22գ. Ալազյազ /Գ./; 23ա. Խնկի ծառ /Ա./; 23բ. Խնկի ծառ /Բ./; 23գ. Խնկի ծառ /Գ./; 24. Քելեր ցոլեր; 25. Ծիրանի ծառ; 26. Լոռու գութաներգ; 27ա. Կալի երգ /Ա./; 27բ. Կալերգ և սայլերգեր /Բ./; 28ա. Սիփանա քաջեր /Ա./; 28բ. Սիփանա քաջեր /Բ./; 29. Գարուն:

Տարբերակներ: 1ա. Գարուն ա /7 տարբերակ/; 2ա. Գութաներգ /3 տարբերակ/; 3. Շողեր ջան; 4. Հով լինի; 5ա. Կուժն առա /5 տարբերակ/; 6ա. Սարեն ելավ /2 տարբերակ/; 7. Գնա, գնա; 8. Օրոր, Աղինո; 9ա. Քաղիան /2 տարբերակ/; 10. Հոյ, նազան իմ; 11. Ախ մարալ ջան; 12. Ալազյազ; 13. Խնկի ծառ; 14. Ծիրանի ծառ; 15. Լոռեցիների գութանի հորովել; 16ա. Կալերգ և սայլերգ; Կալիերգ; **Ծանոթագրություններ /Ռ.Աթայանի/:**

Ռ.3. Խմբերգեր: Խմբ. Ռ.Ա. Աթայանի.- Ե.: Հայաստան, 1969.- 308 էջ: Բովանդ.՝ **Խմբագրի կողմից; Խմբերգեր; Հարսանեկան երգեր. Շար Ա.:** 1. Երկնից, գետնից; 2. Մերիկ ջան հալալ; 3. Թագվորի մեր, դուս արի; 4. Թագվոր բարով; 5. Էն դիզան; 6. Առնեն երթամ իմ յարը; 7. Ել, ել, (Սայլի երգ); 8. Այ, հեվա, հեվա, սիրոս; 9. Վայ, լե, լե (Ողբերգ); 10. Հանդեն գաս գեղը մտնես; 11. Կապուտ քուռակ հեծել են; 12. Գութանը հաց են բերում; 13. Նամիկ, նանանիկ; 14. Լուսնակը սարի տակին; 15. Եկեք տեսեք ինչն է կերի զինչ; 16. Կայնել ես կանչում էլ չես; 17. Հինգ էծ ունեն; 18. Ջար, զրնգը; 19. Էս գիշեր, լուսնակ գիշեր; **Հարսանեկան երգեր. Շար Բ.:** 20. Մեր թագվորին ինչ պիտի; 21. Գացեք բերեք թագվորամեր; 22. Օրինյալ բարերար աստված; 23. Մեր թագվորն էր խաչ; 24. Էն դիզան; 25. Դուն հալալ մերիկ; 26. Վարդ, զքե չըմ սիրի; 27. Եղնիկ; 28. Թագվորի մեր, դուս արի; **Հայ գեղջուկ երգեր և պարերգեր. Շար Ա.:** 29. Ամպել ա կամար-կամար; 30. Երևան բաղ են արել և Տուն արի; 31. Հոռոմ-հոռոմ; 32. Արևը կայնե կեսօր; 33. Մեր բաղունը նմի ծառ (Հոդալո); **Վիճակի երգեր:** 34. Երկնքի աստղերը (Սկլա, Սկլա), 35. Հեյ, գյուլ են; 36. Ծաղիկ ունեն նարնջի: **Հայ գեղջուկ պարերգեր. Շար Բ.:** 37. Յարիս անուն Պալասան; 38. Աղջի անուռ Շուշան; 39. Կալերի ճամբին կեցա; 40. Բաղի պատը դդում ա; 41. Պուճուր աղջիկ սևավոր; 42. Վարդ ա յարս; 43. Հոյ, իմ նազանի յարը; **Հայ գեղջուկ երգեր և պարերգեր. Շար Գ.:** 44. Ալազյազ աչերդ;

45. Սև ա չորբանի շունը; 46. Մի յար ունեն; 47. Ելեք տեսեք դուսը; 48. Այ տղա մեր գեղեցի; 49. Շախկըր-շուխկը; **Յայ գեղջուկ պարերգեր. Շար Դ.:** 50. Սարեն կուգա ջուխսմ դոչ; 51. Էրվում են; 52. Յար ջան, արի; 53. Էսօր ուրբաթ է; 54. Ջուր կուգա վերջն սարեն; 55. Ջաղացը մանի-մանի; 56. Առնեն երթամ էն սարը; **Յայ գեղջուկ պարերգեր. Շար Ե.:** 57. Կանաչ արտը բան եկա; 58. Նոր են նոր մածուն մերել; 59. Յարայ, էլլի յար; 60. Լուսնակը բակ ա բռնել; **Յայ գեղջուկ պարերգեր. Շար Զ.:** 61. Եկան Մոկաց հարսներ (Յարալը); 62. Մեր բաղը ծառ ա; Իմ չինարի յարին; 63. Յովն անուշ (Արարատյան գիշեր); 64. Յով արեք; 65. Սարեր ջան; 66. Չինար ես, կեռանալ մի; 67. Փափուրի; 68. Ինչու՞ Բինգյոլը մտար և Սուսան սմբուլ; 69. Էս առուն ջուր ա գալի; 70. Սանդի երգ (Չավարածծ); **Տարբերակներ;** (8). Այ, հեվա, հեվա սիրտս; (10). Յանդեն գաս գեղը մտնես; (12). Գութանը հաց են բերում; (15). Եկեք տեսեք ինչն է կերի զինչ; (16). Կայնել ես կանչում էլ չես; (17). Յինգ էծ ունեն; (18). Ջար, զըմգը; (19). Էս գիշեր, լուսնակ գիշեր; (27). Եղնիկ; (30). Երևան բաղ են արել և Տուր արի; (31). Յոռոմ-հոռոմ; (32). Արևը կայնե կեսօր; (39). Կալերի ճամբին կեցա; (41). Պուճուր աղջիկ սևավոր; (51). Էրվում են; (52). Յար ջան, արի; (53). Էսօր ուրբաթ է; (54). Ջուր կուգա վերին սարեն; (56). Առնեն երթամ էն սարը; (57). Կանաչ արտը բան եկա; (58). Նոր են նոր մածուն մերել; (59). Յարայ, էլլի յար; (62). Մեր բաղը ծառ ա; (63). Իմ չինար յարին; (64). Յովն անուշ; (66). Չինար ես; (67). Փափուրի; (68). Ինչու՞ Բինգյոլ մտար; (69). Էս առուն ջուր է գալի; (72). Սանդի երգ /Չավարածծ/ /**Ծանոթագրություններ** /Ռ.Աթայանի/:

Յ.4. Խմբերգեր և մեներգեր: Խմբ. Ռ.Ա.Աթայանի.- Ե.: Յայաստան, 1976.- 204 էջ:

Բովանդ.՝ **Խմբագրի կողմից; Խմբերգեր;** 1. **Ազգային օրհներգ, 1891թ.,** խոսք՝ Արշակ Թաշճյանի; 2. **Մայրենի լեզու,** խոսք՝ Ա.Նազարյանցի; 3. **Ով տեր աստված,** խոսք՝ Վ.Մանկունու; 4. **Թե թև ունեի** /Իզձ հայ պանդխտի/, խոսք՝ Ա.Ֆելեկյանի; 5. **Յայրենյաց սիրով վառված;** 6. **Օն թինդ ի խինդ,** խոսք՝ Կոմիտասի; 7. **Ազգային օրհներգ, 1895թ.,** խոսք՝ Ա.Թաշճեանի; 8. **Առ գետս Բաբելացոց,** Սաղմոս Դավթի, N 136; 9. **Առավոտ լուսաբեր,** խոսք՝ Գ.Փեշտիմալճյանի; 10. **Արևն իջավ սարի գլխուն,** խոսք՝ Ավ. Իսահակյանի; 11. **Մի գեղեցիկ պարզ գիշեր էր,** խոսք՝ Ա.Սափարյանցի; 12. **Յայրիկ, հայրիկ, քո հայրենիք,** խոսք՝ Մ.Ջանիկյանի; 13. **Մայր Արաքսի ափերով,** խոսք՝

Ռ.Պատկանյանի; 14. **Թող բլբուլ չերգե;** 15. **Հայ ապրիմբ, եղբայրք,** խոսք՝ Խ.Նար-Պեյի; 16. **Տեր, կեցո դու գճայս,** խոսք՝ Մ.Թաղիադյանի; 17. **Հիմի էլ լռենք,** խոսք՝ Ռ.Պատկանյանի; 18. **Մեզ նոր արև ծագե;** 19. **Ոհ ի՛նչ անուշ,** խոսք՝ Մ.Պեշիկթաշլյանի; 20. **Մինչդեռ հուսով խայտա բնություն,** խոսք՝ Մ.Պեշիկթաշլյանի; 21. **Ով ի՛նչ քաղցր բան;** 22. **Պանծա դու Հայ միություն,** խոսք՝ Կոմիտասի; 23. **Ահա ծագեց կարմիր արև,** խոսք՝ Րաֆֆու; 24. **Իմ հայրենյաց հոգի Վարդան,** խոսք՝ Ս.Ֆելեկյանի; 25. **Ես լսեցի մի անուշ ձայն,** խոսք՝ Ս.Շահազիզի; 26. **Ով մեծաքանչ դու լեզու,** խոսք՝ Ն.Սեզպուրյանի; **Տարբերակներ;** 27(12). **Հայրիկ, Հայրիկ քո հայրենիք,** խոսք՝ Մ.Տանիկյանի; 28(13). **Մայր Արաքսի ափերով /4 տարբերակ/,** խոսք՝ Ռ.Պատկանյանի; 32(14). **Թող բլբուլ չերգե;** 33(15). **Հայ ապրիմբ, եղբայրք,** խոսք՝ Խ.Նար-Պեյի; 34(16). **Տեր, կեցո դու գճայս /3 տարբերակ/,** խոսք՝ Ղ.Ալիշանի; 37(19). **Ոհ ի՛նչ անուշ,** խոսք՝ Մ.Պեշիկթաշլեանի; 38(20). **Մինչդեռ հուսով խայտա բնություն,** խոսք՝ Մ.Պեշիկթաշլյանի; 39(21). **Ոհ ի՛նչ քաղցր բան;** 40(23). **Ահա ծագեց կարմիր արև,** խոսք՝ Րաֆֆու; 41(24). **Իմ հայրենյաց հոգի Վարդան,** խոսք՝ Ս.Ֆելեկյանի; 42(25). **Ես լսեցի մի անուշ ձայն /3 տարբերակ/,** խոսք՝ Ս.Շահազիզի; 45(26). **Ով մեծաքանչ դու լեզու,** խոսք՝ Ն.Սեզպուրյանի; **Մեներգեր;** 46. **Դարդս լացեք, սարի սմբուլ,** խոսք՝ Ավ. Իսահակյանի; 47. **Ձայն տուր ո՛վ ծովակ,** խոսք՝ Րաֆֆու; 48. **Հայաստան,** խոսք՝ Հ.Սիրզա-վանանդեցու; 49. **Բա՛մ, փորոտան,** խոսք՝ Ղ.Ալիշանի; **Հավելված;** 50. **Սուք գիշերվա մեջ,** խոսք՝ Մ. Տեր-Չաքարյանի; 51. **Տա՛ն-դո,** խոսք՝ Հ.Հովհաննիս-յանի; 52. **Վարդը բացվել ա ծաղկոցին,** խոսք՝ Ռ.Պատկանյանի; 53. **Աղոթա-րանը բացվեցավ,** խոսք՝ Ռ.Պատկանյանի; 54. **Ձեյթու՛ն, անկախ դու աշ-խարհիկ;** 55. **Հապա, քաջազունք;** 56. **Ո՛վ հայկազունք; Ծանոթագրություն-ներ /Ռ.Աթայանի/:**

Հ.5. Մեներգեր և խմբերգեր: /Խմբ. Ռ.Ա. Աթայանի.- Ե.: Սովետ. գրող., 1979.- 212 էջ:

Բովանդ.՝ **Մեներգեր, զուգերգեր և եռերգ;** ա. **Երկու ռոմանս և երգ-մենախոսություն «Վենետիկի վաճառականը»** պիեսի համար: 1. Սուք էր երկինքը. խոսք՝ Հ. Թումանյանի; 2. Գիշերերգ. խոսք՝ Մ. Լերմոնտովի /Գյոթե-ից/; 3. Սիրո ծագումն ու՞րկից է. խոսք՝ Վ. Շեքսպիրի, թարգմ. Հ. Մասեխյանի; բ. **Գեղջկական;** 4. Լորիկ; 5. Ջուլու; 6. Քուն եղիր պալաս. խոսք՝ Ռ.Պատկանյա-

6ր; 7. Քուն եղիր պալաս. խոսք՝ Ռ.Պատկանյանի; 8. Մատնիքը մատովս չէր; 9. Ալ ձին նալն ի՞նչ կանեմ; 10. Մանի ասեմ; 11. Ծաղիկ ասեմ; 12. Մարոն ա կայնեմ; 13. Տուն արի; գ. **Աշուղական**; 14. Վա՛յ էն ազգին. խոսք՝ Խ. Արովյանի; 15. Այգեպան ի՞նչ ես անում. երգ՝ աշուղ Շիրինի /երկծայն/; 16. **Խմբերգեր /եռաձայն/**; ա. **Գևորգյան Ճեմարանի երգչախմբի երգացանկից**. 17. Քյա՛ սև սևավոր աղջիկ; 18. Այ նազանի; 19. Անձրևն եկավ; 20. Անձրևն եկավ; 21. Իմ չինարի յարը; 22. Սո՛նա յա՛ր; 23. Դե թո՛ւ արա, գո՛մեշ ջան; 24. Շողեր ջան; 25. Կոտ ու կես կորեկ ունիմ; 26. Սարերի սինձն ի՞նչ ա; 27. Լուսնակը լոս ի, բա՛բո; 28. Սա՛ր, սա՛ր; 29. Աղջկե՛ք, պար բռնեցեք /«Արևամանուկը» հեքիաթից/, խոսք՝ Ղ. Աղայանի; 30. Հո՛ր յաման ու յար ջան; 31. Ելա տանիս; 32. Արի, արի քե՛» մատաղ; 33. Գութանը հաց եմ բերում; 34. Կայնել ես, կանչում էլ չես; 35. Առնեն երթամ ի՛ն յարը; 36. Լուսինը սարի տակին; 37. Հո՛ր յաման ու յար ջան; 38. Չինար յարի բան ասեմ; 39. Չինար յարի բան ասեմ; 40. Այ ինդիլո; 41. Ինչո՞ւ Բինգյուլը մտար; 42. Այ սիրուն կաքավ; 43. Աղջի Մարան; 44. Չինար ես; 45. Չինար ես; 46. Ես առուն ջուր է գալի; 47. Ես առուն ջուր է գալի; 48. Իմ չինարի յարը; 49. Փափուրի; 50. Փափուրի; 51. Այ ծամով աղջիկ; 52. Մեր թագավորն էր խաչ; 53. Ամպել ա կամար-կամար; 54. Ա՛խ, մա՛րալ ջան; 55. Հո՛ւ, Նազան; 56. Ես գիշեր, լուսնյակ գիշեր; 57. Ես գիշեր լուսնյակ գիշեր; 58. Հաբրբան; 59. Սիրուն ջան; 60. Սո՛նա յա՛ր; 61. Հո՛ւ արեք; 62. Գութանը հաց եմ բերում; 63. Գութանը հաց եմ բերում; 64. Լուսնակն անուշ; 65. Լուսնակն անուշ; 66. Յա՛ր ջան ու մարջան; 67. Ո՛տիդ արա; 68. Ո՛տիդ արա; 69. Ապարանը քարոտ ա; 70. Խումար; 71. Հո՛ւ, նազան իմ յարը; բ. **Խմբերգեր Նիկողոսյան վարժարանի երգչախմբի համար**; 72. Ա՛խ, մա՛րալ ջան; 73. Ես առուն ջուր ա գալի; 74. Եսօր ուրբաթ է; 75. Սա՛ր, սա՛ր; 76. Նոր եմ նոր մաճուն մերել; 77. Անձրեվն եկավ; 78. Անձրևն եկավ; 79. Սո՛նա յա՛ր; 80. Սո՛նա յա՛ր; **Մանկական երգեր**; 81. Փայտե ձիուկ, խոսք՝ Կոմիտասի; 82. Օր, օր. խոսք՝ Կոմիտասի; 83. Ճուտիկներն ու մանկիկը. խոսք՝ Կոմիտասի; 84. Հա՛յր մեր... խոսք՝ Կոմիտասի: **Հավելվածներ**: ա. **Վեց դպրոցական խմբերգեր**; 85. Անձրևն եկավ; 86. Ա՛խ, մա՛րալ ջան; 87. Ջան գառնուկ; 88. Աղվես գնաց մտավ ջաղաց; 89. Աղվես պառկեց ճամբի տակին; 90. Գնացեք տեսեք ո՞վ է կերել այծը; բ. **«Ազգային երգարան» ժողովածուից**; 91. Լե՛պո-հո, լե՛ լե՛; 92. Նա լո՞ւս էր, ինչ լու՞ս ելավ; 93. Այծյամ /Անհոգ ես, չես գիտեր/. երգ աշուղ Ջիվանու;

ծանոթագրություններ (Ռ. Աթայանի):

Յ.6. Դաշնամուրային ստեղծագործություններ /Խմբ. Ռ.Ա.Աթայանի.-Ե.: Սովետ. գրող., 1982.- 240 էջ:

Բովանդ.՝ Նախաբան Ռ.Ա. Աթայան: **Մշո Շորոր:** Առաջին խմբերգություն; Երկրորդ խմբերգություն: **Յոթ պար: Առաջին խմբերգություն;** 1. Մանուշակի; 2. Երանգի; 3. Ունաբի; 4. Մարալի; 5. Շուշիկի; 6. Հետ ու առաջ; 7. Կարնո Շորոր; **Երկրորդ խմբերգություն;** 1. Մանուշակի; 2. Երանգի; 3. Ունաբի; 4. Մարալի; 5. Շուշիկի; 6. Հետ ու առաջ; 7. Կարնո Շորոր; **Վաղ և միջանկյալ տարբերակներ;** Երանգի /ա/; Երանգի /բ/; Երանգի /գ/; Ունաբի; Մարալի; Կարնո Շորոր /ա/, /բ/, /գ/, /դ/; **Յոթ երգ; Մանկական նվագներ;** ա. Տասներկու պիես ժողովրդական թեմաներով; բ. Փոքրիկ պոլիֆոն շարանվագ; գ. «Տողիկ»; **Ուսումնառական տարիների աշխատանքներից /Յավելված/;** Լարգետտո («Երգ առանց խոսքի»); բ. Ալլեգրետտո («Երգ առանց խոսքի»); գ. Սգո քայլերգ; **Ծանոթություններ և դիտողություններ; Մշո շորոր և յոթ պար;** Ընդհանուր տեղեկություններ; Առաջին կատարողները; «Պարերի» գոյացման ընթացքը, առաջին կատարումները և հրատարակությունը; **Մշո շորոր:** 1. Մանուշակի; 2. Երանգի; 3. Ունաբի; 4. Մարալի; 5. Շուշիկի; 6. Հետ ու առաջ; 7. Կարնո Շորոր; **Յոթ երգ; Մանկական նվագներ; Նմուշներ ուսումնառական տարիների աշխատանքներից /**Ռ. Աթայանի/:

Յ.7. Պատարագ: /Խմբ. Ռ.Ա.Աթայանի.- տպագր.պատրաստ. Գ.Գյոդակյան, Դ.Դերոյան.- Ե., «Անահիտ» հրատ., 1997.- 190 էջ:

Բովանդ.՝ **Խմբագրի կողմից; Պատարագ:** 1. Խորհուրդ խորին; 2. Ընտրեալդ ՅԱստուծոյ; 3. Յայս յարկ նուիրանաց /շարական խնկարկութեան/; 4. Բարեխոսութեամբ մոր Քո; 5. Այսօր տօն է /ավետիք թափորի/; 6. Ժամամուտ. ճաշու շարական; 7. Սուրբ Աստուած /ի տօնս Ծննդեան, Խաչի, Յարութեան, Տեառնընդառաջի/; 8. Եւ եւս խաղաղութեան եւ Յիշեա, Տէր; 9. Փառք Քեզ, Տէր. Հավատամք; 10. Մարմին Տէրունական; 11. Ով է որպէս Տէր /սրբասացութիւն Յիմանց եւ խաչի/; 12. Եւ եւս խաղաղութեան. Կեցո Տէր; 13. Քրիստոս ի մէջ մեր; 14. Ահիւ կացցուք. Ողորմութիւն եւ խաղաղութիւն; 15. Սուրբ, սուրբ; 16. Հայր երկնաւոր; 17. Յամենայնի օրինեալ ես, Տէր; 18. Որդի Աստուծոյ; 19. Հոգի Աստուծոյ; 20. Յիշատակութիւնք եւ Յիշեա, Տէր; 21. Գոհութիւն. Ըստ ամենայնի; 22. Եւ եղիցի ողորմութիւն. Ամեն: Եւ ընդ հոգւոյդ Քում; 23. Հայր մեր /աղօթք

Տերունական/; 24. Միայն սուրբ; 25. Ամեն: Հայր սուրբ; 26. Տէր ողորմեա; 27. Քրիստոս պատարագեալ; 28. Լցաք ի բարութեանց Քոց; 29. Գոհանամք; 30. Աղօթք ի մէջ եկեղեցվոյ. Եղիցի անուն Տեառն; **Հարակից երգեր:** 1. Օրհնեցէք, զովեցէք. Օրհնութիւն երից մանկանց; Սրբասացութիւնք: 2. Ով է որպէս Տէր. Հինանց եւ խաչի; 3. Բազմութիւնք հրեշտակաց. Ծննդեան, Ավետեաց, Վարդավառի, Աստուածածնի; 4. Հրեշտակային կարգաւորութեամբ. կիրակեից, եկեղեցւոյ, Ծաղկազարդի, Հրեշտակաց; 5. Որ վերանստիս. Ավագ հինգշաբթու; 6. Հրեշտակային կարգաւորութեամբ; 7. Բազմութիւնք հրեշտակաց; 8. Վասն յիշատակի. Պահոց, ննջեցելոց; Շարականք: 9. Մեծացուցէ անձն իմ զՏէր /ճաշու շարական ճրագալոյցի, Ծննդեան/; 10. Գովեա, Երուսաղէմ, զՏէր /ճաշու շարական Յարութեան եւ Յինանց/; 11. Որ յանէից ստեղծող /Շարական հանգստեան/; **Տարբերակներ:** 1. Խորհուրդ խորին; 2. Խորհուրդ խորին; 3. Յայս յարկ նուիրանաց ուխտի /3-րդ եւ 4-րդ տուն/; 4. Սրկ. «Օրհնեա, Տէր»; 5. Տէր ողորմեա. Քեզ, Տեառնդ; 6. Ամեն: Հայր սուրբ; 7. Տէր, ողորմեա; 8. Տէր, ողորմեա, ԳՉ, Մեծի պահոց; 9. Քրիստոս պատարագեալ; 10. Երկիւղիւ, Աստուած մեր եւ Տէր, մեր; 11. Օրհնեցէք, զովեցէք. Օրհնութիւն երից մանկանց; 12. Գովեա, Երուսաղէմ, զՏէր (ճաշու շարական Յարութեան եւ Յինանց):

Արական երգչախմբին հատկացված Կոմիտասի Պատարագի պատմությունից; Ծանոթագրություններ (Ռ.Աթայանի):

Յ.Յ. Հոգեւոր ստեղծագործություններ /խմբ. Ռ.Աթայանի, Գ.Գյոհակյանի, Դ.Դերոյանի.- Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998.- էջ 258:

Բովանդ.՝ **ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կողմից; Նախաբան; Խմբերգեր;** Հատվածներ քառածայն Պատարագից (1899-1901)- Խորհուրդ խորին; Այսօր ժողովեալ; Սուրբ Աստուած; Մարմին Տերունական; Ամեն: Հայր երկնաւոր; Որդի Աստուծոյ; Հոգի Աստուծոյ; Միայն սուրբ; Տէր, ողորմեա; Տէր, ողորմեա; Պատարագ (1903-04, Ս.Էջմիածին) (հատվածներ).- Եւ ընդ հոգւոյդ Քում; Սուրբ Աստուած; Փառք Քեզ, Տէր; Մարմին Տերունական; Ով է որպէս; Քրիստոս ի մէջ; Սուրբ, սուրբ; Յամենայնի; Հոգևոր խմբերգեր՝ կատարված 1905 թվի թիֆլիսյան համերգներում.- 1. Հայր մեր; 2. Ալէլուիա. Լերինք; 3. Ով զարմանալի; 4. Այսօր ձայնն հայրական; 5. Էջ Միածինն ի Հօրէ; 6. Խորհուրդ խորին; 7. Փառք Քեզ, Տէր; 8. Սուրբ, սուրբ; 9. Յամենայնի; 10. Ամեն: Հայր

սուրբ; 11. Տէր, ողորմեա; 12. Աշխարհ անեմայն; 13. ըզՔեզ օրհնեմք; 14. Աստուածածին երկնային; Զոգևոր երգեր՝ կատարված 1906 թվին փարիզյան համերգում.- Դայր մեր; Տէր, ողորմեա; Յիշեսցուք ի զիշերի; Խորհուրդ խորին; Ով զարմանալի; Այսօր ձայնն հայրական; 1907թ. Կաթողիկոս Մ. Խրիմյանի հոգեհանգստի արարողության համար պատրաստած Պատարագի հատվածները.- Խորհուրդ խորին; Վասն յիշատակի; Ամէն: Դայր սուրբ; Տէր, ողորմեա; Կոստանդնուպոլիս, 1910-1915թթ. Զատվածներ «Գուսան» երգչախմբի երկսեսն կազմի համար գրված Պատարագից.- Փառք Քեզ, Տէր; Դայր մեր; Ամէն: Դայր սուրբ (Ա տարբերակ); Ամէն: Դայր սուրբ (Բ տարբերակ); Ամէն: Դայր սուրբ; Տէր, ողորմեա (Ա տարբերակ); Տէր, ողորմեա (Բ տարբերակ); Սուրբ, սուրբ (հատված); Սուրբ Աստուած. Երեկոյի մեծի ուրբաթու (Ա տարբերակ); Սուրբ Աստուած. Երեկոյի մեծի ուրբաթու (Բ տարբերակ); Սուրբ Աստուած. Երեկոյի; Կոստանդնուպոլիս, 1910-1915թթ. Ունլուայի և Զորհնեաց երգեր.- ա. Այսօր կանգնեցավ; բ. Այս խորհուրդ լցաւ; գ. Տէր, Քոյին; դ. Ահա ազատեա; ե. Սիրտ իմ սասանի; Ով զարմանալի; Այսօր ձայնն հայրական; Զատվածներ Պատարագից՝ գրված Էմի Աբգարի Պատարագի մեղեդիների հիման վրա.- Խորհուրդ խորին; Այսօր տօն է ծննդեան; Սուրբ Աստուած; Փառք Քեզ; Սուրբ, սուրբ; Յանենային; Զոգի Աստուծոյ; Եղիցի; Շարականներ, երգեր.- Նորահրաշ պսակաւոր; Անծինք նուիրեալք; Դայրատունկ այգւոյն; Զրաշափառ Աստուած; Քաջամարտիկ, սուրբ նահատակ; Որ նորափետուր բանիւ (Կանոն սրբոց թարգմանչաց); Սուրբ ես, Տէր; Սուրբ ես, Տէր (Էջմիածնի եղանակ); Յօգնութիւն մեզ ժամանեա կարող Տէր; Սիրոյ քո հուր; **Զոգևոր երգասացութիւններ:** Որ յանէից ստեղծեր; Զոգևոր եղանակներ (Կուտինա).- 1. Միաշաբթ օր հանգստեան; 2. Կեցո, Տէր; 3. Ամէն եւ ընդ հոգւոյդ Քում; 4. Ամէն. Դայր սուրբ; 5. Միայն սուրբ; 6. Ամէն. Դայր սուրբ; 7. Ամէն. Դայր սուրբ; 8. Ի զիշերի; 9. Ով Դայր Աստուած; Զոգևոր եղանակներ (Էջմիածին).- 1. Դաւիկ; 2. Ահեղ ձայնս; 3. Զաւուն հաւուն; 4. Տէր, ողորմեա (Ստեղծող մանկանց); 5. Դասքն հրեական; 6. Տէր, ողորմեա; 7. Տէր, ողորմեա; 8. Միաշաբթ օր հանգստեան; 9. Կեցո, Տէր; 10. Տէր, ողորմեա; 11. Բաց մեզ, Տէր; 12. Եւ եւս խաղաղութեան; 13. Եղիցի անուն Տեառն օրհնեալ; 14. Թագաւորեսցէ, Տէր; 15. Փառք յարութեան Քո, Տէր; Ամէն եւ ընդ հոգւոյդ Քում; Զոգիդ Աստուած; Սաղմոսներ; Շարականներ.- Շարականների կոմիտայայն տարբերակներ, որ պահպանվել են երաժշտագետ

Պյեր Օբրիի արտագրությամբ; Ջանազան կատարողներից Կոմիտասի գրանած շարականներ; Կանոն վերացման սրբոյ խաչին Բ աւուրն; Կանոն վարագայ խաչին; Տաղեր, երգեր.- Հաւիկ; Հաւիկ; Սայլն այն իջաներ; Տիրամայրն; Գոչեր հրեշտակ; Մարիամ Մագթաղենին; Ուր ես, մայր իմ; Ճանապարհ եւ ճշմարտութիւն; Լոյս զուարթ; Եկեալքս ի մտանել արեգականն; Սուրբ Աստուած; Սուրբ Աստուած; Սուրբ Աստուած; «Մշո եկեցե՛լ»-ից; Վաղ շրջանի ստեղծագործություններ.- Հատվածներ պատարագից (1892, Կուտինա); Arme-nische Kirchenges?nge (Հայկական եկեղեցական երգասացություններ); Ծանոթագրություններ (Ռ.Աթայան, Գ.Գյոդակյան, Դ.Դերոյան):

Հ.9. Հայ ժողովրդական երգեր: Գիրք Ա. /Կազմ., խմբ. և ծանոթագր. Ռ.Աթայանի.- Ե.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999.- 224 էջ:

Բովանդ.՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կողմից.- Առաջաբան, ա. Կոմիտասի երաժշտական-ազգագրական ժառանգությունը, բ. ժողովրդական երգերի կոմիտասյան գրանցման առանձնահատկությունները, գ. Ներկա ամբողջական հրատարակությունը; **Նախաբան Ա հատորի; Խմբագրի նախաբանը անգլերեն; Խմբագրի նախաբանը ռուսերեն; Հայ ժողովրդական երգեր;** Չորս երգ Կոմիտասի Առաջին ժողովածուից.- 1.Բոստան եմ դրի; 2. Ես օր աշուն ի, Մայրամ; 3. Էրթանք հ'երերին, Լալուխան; 4. Մեր թագվորին ի՞նչ պիտեր; 5. Մշեցոց Բինգյուլը; *Ժողովածու երկրորդ.*- 6.(1) Նոր ա բացվել սարի լալեն; 7.(2) Մայրիկ, ես գնում եմ; 8. (3) Կայնել ես վարդի հովին; 9(4) Ձիմ գլխի Ֆաթեն կիտամ; 10.(5) Հոտելու ջան; 11.(6) Գարուն ա՛ ձուն ա էկել; 12.(7) Այ տղա մեր գեղեցի; 13.(8) Դոն արի; 14.(9) Կայնել ես՝ կանչում էլ չես; 15.(10) Ջան, նագանի; 16.(11) Պուճուր աղջիկ, մի թռիր; 17.(12) Գութանը վարափոսին; 18.(13) Արի , սիրուն; 19.(14) Յար, լե, լե; 20.(15) Լուսնակ բակին իջել էր 21.(16) Երկինքն ամպել էր; 22.(17) Բամբակ եմ ցանել; 23.(18) Մեր տանի տեղը փոս ա; 24.(19) Լե, լե; 25.(20) Այ իմ յարս; 26.(21) Էդ Կարոյի չուխի ծալը; 27.(22) Տալոյի դէյրի գուլը; 28.(23) Ղարիբ եմ, նոր եմ եկել; 29.(24) Ջան, յարո ջան, քո սավղեն; 30.(25) Դե, յար, յարո; 31.(26) Բաղչա գյուլու ղըրմըզի; 32.(27) Ջրդարով ջուր ա գալի; 33.(28) Արագը հեշտացել ա; 34. (29) Բարակ մեջքիս քամար պիտեր 35.(30) Պարտեզումը խաղ ես ասում; 36. (31) Ունջինար, յար, յար; 37.(32) Այ անուշ; 38.(33) Արևին տես; 39.(34) Կայնել ես ախա-բախա, յար; 40.(35) Սիրել եմ; 41.(36) Ղարսա բերդը բլեր է; 42.(37) Համ դու սիրուն; Չորս

